

## «ՅԱՅԱՏԱԿԱԾ ԻՐԱԿՈՒՔ ՉՈՒՆԵ ՊԱՐՏՎԵԼՈՒ ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՈՒԽ»

**«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ ОДНОЙ ВОЙНЫ»  
«ARMENIA CAN NOT AFFORD TO LOSE ANY WAR»**

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.  
ԶԻՆԿՈՐԱԿԱՆ-ՍՊՅԱԼԱԿԱՆ ՈԼՈՇԻ ԶԱՐԳԱՑՈՒ

**ОБОРОННЫЕ РЕФОРМЫ:  
РАЗВИТИЕ ВОЕННО-СОЦИАЛЬНОЙ СФЕРЫ**

**THE DEFENSE REFORMS:  
DEVELOPMENT OF MILITARY-SOCIAL SPHERE**



**ԱԶԳԱՅԻՆ ԱԽՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝  
ԿԱՅՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄՔ  
ԵՎ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄՔ**



Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի  
և արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումը  
ԵԱՀԿ Մինսկի խմբի Համանախազահներ Յուրի Մերգլյակովի (Ռուսաստան),  
Բեռնար Ֆասիե (Ֆրանսիա), Ռոբերտ Բրադլի (ԱՄՆ)  
և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրչիկի հետ.

Երևան, 2009 թ. նոյեմբերի 6



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

### Քորանջյան Հ. Ս.

քաղաքական գիտությունների  
դրկուր (Ո-Դ), Ռազմական  
գիտությունների ռուսաստանյան  
ակադեմիայի իսկական անդամ,  
հակասահարթչչորյան գծով  
փորձագետ (ԱՄՆ)  
(նախագահ)

### Չիլինգարյան Գ. Ս.

(գլխավոր խմբագիր)

### Այդինյան Ռ. Ա.

### Վաղիամով Է. Ա.

### Ավետիսյան Վ. Պ.

(գլխ. խմբ. տեղակալ)

### Բաբյան Ն. Մ.

### Գասպարյան Վ. Ս.

### Գասպարյան Տ. Շ.

### Դավթյան Ա. Մ.

### Թումյան Վ. Վ.

### Իսախանյան Մ. Ռ.

### Խաչատորյան Յու. Գ.

### Կարապետյան Մ. Ն.

### Կարապետյան Մ. Ս.

### Մարելոսյան Ի. Ժ.

### Մարգարյան Վ. Հ.

(գլխ. խմբ. տեղակալ)

### Մարտիրոսյան Մ. Ս.

### Մարտիրոսյան Լ. Ա.

### Միրզաքելյան Ա. Ռ.

### Նազարյան Ա. Ս.

### Սեղրակյան Ս. Գ.

### Տեր-Գրիգորյանց Ն. Գ.

### Տոնիյան Գ. Է.

### Փարսադանյան Ա. Մ.

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ Յ ՈՒ Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՊԱՇՏՈՒՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՄՆԵՐԻ

### ԶԻՆՈՐԱԿԱՆ-ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ս. Ա. Հարուրյունյան, Զինծառայողների սոցիալական վիճակի բարելավումը՝ որպես ՀՀ ԶՈՒ-ի գերակա խնդիր ..... 9

Ա. Զ. Ասարյան, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի կայուն զարգացման ռազմավարության գաղափարաքաղաքական հիմքերը ..... 16

Ա. Կ. Խոչարյան, Տ. Ռ. Մարտիրոսյան, Ռազմատունության պատվանդանության աշխատանքի և կիրառական հարցեր ..... 23

Մ. Գ. Վաևիսյան, ՀՀ քժկանացիալական փորձաքննության գրքակալության գրքունեությունը՝ որպես հաշմանդամների սոցիալական պաշտպանության համակարգի բաղադրիչ ..... 29

Ա. Ն. Մարգարյան, Զինվորական սոցիալական աշխատանքը՝ որպես զինված ուժերի գործունեության բարոյահոգեբանական ապահովման բաղադրիչ ..... 36

Գ. Ե. Միրզոյան, Ա. Է. Հովհաննեսյան, Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական խնդիրները հասարակական կազմակերպության տեսանկյունից ..... 41

### ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՂԱՁԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հ. Ա. Քորանջյան, Հայաստանի Հանրապետության ազգային շահերի ապահովման հեռանկարները համընդիանուր անվտանգության համակարգի արդիականացման համատեքսում ..... 45

Զ. Մուլիկան, Կառավարման և դեկազրման դերը բարդ տուրքովենու կազմակերպական միջավայրներում ..... 61

## **ՈԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ**

*Ա. Ա. Փարսադանյան, Ա. Գ. Գալստյան, Ա. Վ. Սարգսյան, Զինծառայողների շրջանում թոքաբորբերի ախտորոշման ու բուժման հարցի շուրջ* ..... 84

## **ՍՊԱՌԱՋԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ**

*Ա. Հ. Մինասյան, Կորացնող լազեր. մոտ ապագայի զենք* ..... 91

## **ԹԻԿՈՒՆԵԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

*Ա. Գ. Գալստյան, Ա. Վ. Սարգսյան, Ա. Ս. Սահակյան, Զինծառայողների շրջանում զլումներունեֆրիտների կլինիկայի և բուժման որոշ առանձնահատկություններ* ..... 97

## **ՈԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

*Լ. Գ. Առուշանյան, «Մոլոտովի–Ռիբենտրոպի պակտը» և երկրորդ համաշխարհային պատերազմը* ..... 101

## **ՈԱԶՄԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱԾՈՒ ՆՈՐՈՒՅԹՆԵՐ** ..... 112

## **ՈԱԶՄԱԳԻՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

*Ն. Ա. Մկրտչյան, Լ. Հ. Պապիկյան, Դ. Ա. Չիլինգարյան, Համարի բառարան* ..... 114

## **ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

*Ո. Վ. Աղուլումյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,*

*Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,*

*Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,*

*Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,*

*Ո. Գ. Գևորգյան, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,*

*Ա. Հ. Խոչումյան, ՀՀ ԳԱԱ բրոֆակից անդամ,*

*Վ. Մ. Հարուրյունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,*

*Ա. Հ. Մանրաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,*

*Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,*

*Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,*

*Կ. Ա. Մուսույան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,*

*Յու. Ա. Չիլինգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,*

*Վ. Ա. Սարգսյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,*

*Հ. Ա. Միսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

# **«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)**

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА  
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ  
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА  
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

№ 4(62). 2009

Издается 4 раза в год

## **РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ**

*Котанджян Г. С., доктор политических наук (РФ), Действительный член  
Российской Академии военных наук, научный эксперт  
по контртерроризму (США) (председатель), Чилингарян Д. С. (главный редактор),  
Аветисян В. П. (заместитель главного редактора), Айдинян Р. А., Априамов Э. А., Бабаян Н. М.,  
Гаспарян В. С., Гаспарян Т. Ш., Давтян А. М., Исаханян М. Р., Карапетян М. Н.,  
Карапетян М. С., Маргарян В. Г. (заместитель главного редактора), Мартirosов Л. А.,  
Мартirosян С. С., Матевосян И. Ж., Мирзабекян А. Р., Назарян А. С.,  
Парсаданян А. М., Седракян С. Г., Тер-Григорьянц Н. Г.,  
Тоноян Д. Э., Тунян В. В., Хачатуров Ю. Г.*

## **СОДЕРЖАНИЕ**

### **ОБОРОННЫЕ РЕФОРМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: РАЗВИТИЕ ВОЕННО-СОЦИАЛЬНОЙ СФЕРЫ**

<i>С. А. Арутюнян. Улучшение социального состояния военнослужащих как приоритетная задача ВС РА . . . . .</i>	<i>9 (15)*</i>
<i>А. Дж. Асатрян. Идеологические и политические основы стратегии устойчивого развития сферы труда и социальной защиты Республики Армения . . . . .</i>	<i>16 (21)</i>
<i>А. К. Хачатрян, Т. Р. Мартirosян. Некоторые теоретические и практические вопросы обеспечения безопасности РА в военно-социальной сфере . . . . .</i>	<i>23 (27)</i>
<i>М. Г. Ванян. Деятельность Агентства медико-социальной экспертизы РА в качестве компонента системы социальной защиты инвалидов . . . . .</i>	<i>29 (34)</i>
<i>А. Н. Саргсян. Военно-социальная работа как составляющая морально-психологического обеспечения Вооруженных Сил . . . . .</i>	<i>36 (39)</i>
<i>Г. Е. Мирзоян, А. Э. Овнанян. Социальные проблемы военнослужащих и членов их семей с точки зрения общественной организации . . . . .</i>	<i>41 (43)</i>

### **ПОЛИТОЛОГИЯ БЕЗОПАСНОСТИ**

<i>Г. С. Котанджян. Перспективы обеспечения национальных интересов Республики Армения в контексте модернизации системы глобальной безопасности . . . . .</i>	<i>45 (57)</i>
<i>Д. Сюкан. Роль управления и руководства в сложных турбулентных организационных средах . . . . .</i>	<i>61 (83)</i>

\* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

## **ВОЕННАЯ МЕДИЦИНА**

- A. M. Парсаганян, С. Г. Галстян, М. В. Саргсян.* К вопросу диагностики и лечения пневмоний среди военнослужащих . . . . . 84 (89)

## **ВООРУЖЕНИЕ И ВОЕННАЯ ТЕХНИКА**

- А. Г. Минасян.* Ослепляющий лазер—оружие ближайшего будущего . . 91 (96)

## **ТЫЛОВОЕ ОБЕСПЕЧЕНИЕ**

- С. Г. Галстян, М. В. Саргсян, М. С. Саакян.* Некоторые особенности клиники и лечения гломерулонефрита среди военнослужащих . . 97 (100)

## **ВОЕННАЯ ИСТОРИЯ**

- Л. Г. Арушанян.* «Пакт Молотова—Риббентропа» и Вторая мировая война . . . . . 101 (111)

## **НОВОСТИ В ВОЕННОЙ ОБЛАСТИ** . . . . . 112

## **ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ**

- Н. С. Мкртчян, Л. Г. Папикян, Д. С. Чилингарян.* Словарь номера . . 114 (116)

## **НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:**

*Р. В. Агузумцян,* кандидат психологических наук, доцент;

*Н. У. Аракелян,* академик НАН РА;

*В. М. Арутюнян,* академик НАН РА;

*Г. Е. Багдасарян,* академик НАН РА;

*Г. А. Геворкян,* академик НАН РА;

*Р. Г. Геворкян,* доктор геологических наук, профессор;

*А. А. Манташян,* академик НАН РА;

*Э. Г. Минасян,* доктор исторических наук, профессор;

*М. М. Мириджанян,* доктор медицинских наук, профессор;

*К. С. Мосоян,* доктор технических наук, профессор;

*В. С. Саркисян,* академик НАН РА;

*А. С. Сисакян,* доктор медицинских наук, профессор;

*А. А. Трчунян,* член-корреспондент НАН РА;

*Ю. С. Чилингарян,* академик НАН РА

# **«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)**

DEFENSE-ACADEMIC JOURNAL,

DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,  
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

**Nº 4(62). 2009**

Is published 4 times a year

## **EDITORIAL BOARD**

*Kotanjian H. S.*, Doctor of Political Sciences (RF), Fellow Member,  
Russian Academy of Military Sciences, Counterterrorism Fellow (USA) (Chairman),  
*Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Apreamov E. A.*,  
*Avetisyan V. P.* (Deputy Editor-in-Chief), *Babayan N. M.*, *Davtyan A. M.*,  
*Gasparyan T. Sh.*, *Gasparyan V. S.*, *Idynyans R. A.*, *Isakhanyan M. R.*,  
*Karapetyan M. N.*, *Karapetyan M. S.*, *Khachaturov Yu. G.*,  
*Margaryan V. H.* (Deputy Editor-in-Chief), *Martirossyan S. S.*, *Martirosov L. A.*,  
*Matevosyan I. Zh.*, *Mirzabekyan A. R.*, *Nazaryan A. S.*, *Parsadanyan A. M.*,  
*Sedrakyan S. G.*, *Ter-Grigoryants N. G.*, *Tonoyan D. E.*, *Tounyan V. V.*

## **CONTENTS**

### **THE DEFENSE REFORMS OF THE REPUBLIC OF ARMENIA: DEVELOPMENT OF MILITARY-SOCIAL SPHERE**

<i>S. A. Harutyunyan.</i> Improvement of servicemen's social state as a priority task of the RA Armed Forces .....	9 (15)*
<i>A. J. Asatryan.</i> Ideological and political principles of the sustainable development strategy of the labor and social protection sphere of the Republic of Armenia .....	16 (22)
<i>A. K. Khachatrian, T. R. Martirosyan.</i> Some theoretical and practical issues of ensuring the RA security in the military-social sphere .....	23 (28)
<i>M. G. Vanyan.</i> The activity of the RA Medical-Social Expertise Agency as a component of the system of invalids' social protection .....	29 (35)
<i>A. N. Sargsyan.</i> Military-social work as a constituent of moral-psychological security of the Armed Forces .....	36 (40)
<i>G. Ye. Mirzoyan, A. E. Hovnanyan.</i> Social problems of servicemen and their family members in terms of public organization .....	41 (44)

### **POLITICAL SCIENCE OF SECURITY**

<i>H. S. Kotanjian.</i> The perspectives of ensuring national interests of the Republic of Armenia in the context of modernizing the global security system .....	45 (59)
<i>J. Suchan.</i> The role of management and leadership in complex, turbulent organizational environments .....	73

\* Numbers in brackets mean the page of the text in English.

## **MILITARY MEDICINE**

- A. M. Parsadanyan, S. G. Galstyan, M. V. Sargsyan.* On the issue of diagnosing and treating pneumonia among servicemen . . . . . 84 (90)

## **ARMAMENT AND MILITARY EQUIPMENT**

- A. H. Minasyan.* Blinding laser—weapon of the near future . . . . . 91 (96)

## **LOGISTIC SUPPORT**

- S. G. Galstyan, M.V. Sargsyan, M. S. Sahakyan.* Some features of the clinical picture and treatment of glomerulonephritis among servicemen . . . 97 (100)

## **MILITARY HISTORY**

- L. G. Arushanyan.* «The Molotov—Ribbentrop Pact» and the World War II . . . . . 101 (111)

## **SOMETHING NEW IN MILITARY FIELD** . . . . . 112

## **MILITARY TERMINOLOGY**

- N. S. Mkrtchyan, L. H. Papikyan, D. S. Chilingaryan.* Volume Dictionary . . . . . 114 (117)

## **SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:**

*R. V. Aghouzoumetsian,* Candidate of Psychological Sciences, Docent;

*N. H. Arakelian,* Full Member, NAS RA;

*G. Y. Baghdassarian,* Full Member, NAS RA;

*Y. S. Chilingarian,* Full Member, NAS RA;

*H. A. Gevorkian,* Full Member, NAS RA;

*R. G. Gevorkian,* Doctor of Geological Sciences, Professor;

*V. M. Haroutounian,* Full Member, NAS RA;

*A. H. Mantashian,* Full Member, NAS RA;

*E. G. Minasyan,* Doctor of Historical Sciences, Professor;

*M. M. Miridjanian,* Doctor of Medical Sciences, Professor;

*K. S. Mossoyan,* Doctor of Technical Sciences, Professor;

*V. S. Sargsian,* Full Member, NAS RA;

*H. S. Sissakian,* Doctor of Medical Sciences, Professor;

*A. H. Trchounian,* Fellow Correspondent, NAS RA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.  
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ-ՍՈՑԻՎԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ  
ԶԱՐԳԱՑՈՒՄ

ОБОРОННЫЕ РЕФОРМЫ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ:  
РАЗВИТИЕ  
ВОЕННО-СОЦИАЛЬНОЙ СФЕРЫ

THE DEFENSE REFORMS  
OF THE REPUBLIC OF ARMENIA:  
DEVELOPMENT OF MILITARY-SOCIAL  
SPHERE



**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ  
ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀՀ ԶՈՒ-Ի ԳԵՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ  
Ա. Ա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ Զինծառայողների սոցիալական  
պաշտպանության վարչության պետ**



«Հայաստանի Հանրապետությունը կարևորում է ժողովրդի սոցիալական պաշտպանվածության ռազմավարությունը՝ որպես պետության անվտանգությանը քաղաքացու նվիրվածության էական գործոն»<sup>1</sup>: Սոցիալական պաշտպանվածությունը մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների համակարգի ապահովումն է: Այն ապահովում է սոցիալական պաշտպանության միջոցով, որը մարդու իրավունքների և ազատությունների իրացմանն ուղղված գործունեությունն է: Օրինակ՝ աշխատանքի սահմանադրական իրավունքը չի կարող իրացված լինել, եթե չկան աշխատանքային հարաբերությունները կանոնակարգող օրենքներ, քայլ միևնույն ժամանակ անհրաժեշտ է նաև ունենալ այն պետական ու հասարակական հաստատությունների համակարգը, որոնք ապահովեն այդ օրենքների գործողությունը»:

Համաշխարհային պրակտիկայում ձևավորվել են բնակչության սոցիալական պաշտպանության տարրեր մոդելներ: Զարգացած արևմտյան պետություններում սոցիալական պաշտպանության խնդրի լուծման համար մշակվել են գործուն մեխանիզմներ: Բարձր մակարդակի սոցիալական պաշտպանությունը բազմապիսի գործունների փոխազդեցության արդյունք է: Այդ գործուններից գլխավորներն են. շուկայական մեխանիզմով գործող տնտեսություններ, երկրում մշտապես իրականացվող արդյունավետ օրինաստեղծ գործունեություններ, կառավարության՝ ընդունված օրենսդրական ակտերի գործառնան ապահովմանը նպատակադրության գործուն ճեռնարկատերերի և արհմտությունների հանագործակցությունը:

Մեկ այլ մոտեցում կար նախկին սոցիալիստական պետություններում: Թեև սոցիալական պաշտպանության պրոբլեմը դիտվում էր որպես օրյեկտիվ իրականություն, սակայն գաղափարական ու քաղաքական պատճառներով լուրջան էր մատնագում, քանի որ համարվում էր, թե կոնունիզմ կառուցող հասարակությունում բոլոր սոցիալ-տնտեսական պրոբլեմները լուծվում են ինքնարերաբար՝ սոցիալիզմի կառուցմանը համընթաց: Դրա հետ մեկտեղ սոցիալիստական ճամբարի պետություններում ապահովում էր մասնագիտական գրադարձությանն

<sup>1</sup> «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ»: «Հայկական բանակ», 2006, հմ. 2, էջ 42:

ուղեկցող սոցիալական դերակատարումը, գործում էին անվճար առողջապահության, կրթության ու բնակարանների հատկացման համակարգերը, առկա էին էժան սնունդ և հագուստեղեն, ցածր կոմունալ վճարումներ: Սակայն պետական մենաշնորհի համընդգրկունությունն ու ամենակարողությունը պետությանը հնարավորություն էին տալիս սահմանելու աշխատության ձևավորման և օգտագործման մասնագիտական, աշխարհագրական և այլ համամասնություններ, աշխատանքի վարձատրման չափերը, ինչպես նաև նոր ստեղծված արդյունքի այն չափը, որը պետությունը վերցնում էր: Այսպիսով՝ «սոցիալիզմի» ժամանակ նարդիկ պաշտպանված էին նվազագույն ապրուստի ապահովման սկզբունքով, համահավասարեցման գաղափարախոսությամբ, աշխատանքային ռեսուրսների համար ընթացող պայքարում պետական ծեռնարկությունների սահմանափակ մրցակցությամբ, սակայն բոլորովին պաշտպանված չէին պաշտոնական քաղաքականությունից և ապրուստի նվազագույնից, այսինքն՝ չկար ոչ ծայրագույն աղքատություն, ոչ էլ մեծ ծախսեր կատարելու ազատություն:

Հասարակական արտադրության մեջ կատարվող աշխատանքային ներդրման տեսանկյունից սոցիալական պաշտպանությունը լինում է երկու տեսակի՝ սահմանափակ և բացարձակ: Սահմանափակ սոցիալական պաշտպանությունը հասարակության բոլոր անդամների երաշխավորված նվազագույն կենսամակարդակի ապահովումն է, այսինքն՝ սննդի, հագուստի ու կացարանի այն սահմանված նվազագույն չափն է, որն անհրաժեշտ է առողջության և աշխատունակության պահպանման համար: Դա հասանելի է բոլորի համար և չպետք է դիտվի որպես արտոնություն: Բացարձակ սոցիալական պաշտպանությունը որոշակի անձի կամ որոշակի կատեգորիայի քաղաքացիների համար պետության կողմից երաշխավորված հարաբերական բարեկեցության ապահովումն է, այսինքն՝ «արդար» վարձատրման պահպանմանը, երբ վարձատրությունը հարաբերվում է ոչ թե աշխատանքի օբյեկտիվ արդյունքի, այլ տվյալ անձի սուբյեկտիվ արժանիքների հետ<sup>2</sup>:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը, ձերբագատվելով սոցիալիստական գաղափարախոսությունից, ձևավորվում է որպես իրավական սոցիալական պետություն, որում ազգային անվտանգության հիմնարար արժեքներից մեկը բարեկեցությունն է<sup>3</sup>: Այդ նպատակով ՀՀ-ում իրականացվում են համապարփակ բարեփոխումներ<sup>4</sup>:

Սոցիալական պաշտպանության հարցը կարևորել է նաև ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը՝ իր նախընտրական ծրագրում նշելով, որ՝ «Այսօր դժվարին պայմաններում հայտնված հաշմանդամները, ծնողազորկ երեխաները, պատերազմի

<sup>2</sup> Տես Յ. Ռ. Կոջոխար. Социальная защищенность: проблема социальной защиты военнослужащих. М., 1996:

<sup>3</sup> Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ բողակում, 2007, էջ 14:

<sup>4</sup> Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ»:

վետերանները, զոհված ազատամարտիկների ընտանիքները, փախստականները առանց պետության հոգածության չեն կարող լուծել իրենց առջև ծառացած խնդիրները»<sup>5</sup>:

ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումների շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվում զինծառայողների սոցիալական պաշտպան-վածության մակարդակի բարձրացմանը: Ընդսմին հաշվի է առնվում, որ հասարակություն-քանակ կազմը երկլողմանի է. եթե բանակում հստակ կերպով արտացոլվում են հասարակության մեջ տիրող բարքերը, ապա բանակն էլ, լինելով պետության կարևոր ատրիբուտներից մեկը, զգայի չափով ազդում է պետության նկատմամբ ծևալվորված հասարակական վերաբերմունքի վրա: Զինծառայողները կատարում են պետության և հասարակության համար կենսական կարևորություն ունեցող սոցիալապես պատասխանատու գործառություններ և, ինչպես բոլոր քաղաքացիները, ունեն սպառման ապրանքների, մասուցվող ծառայությունների, բնակարանների և այլ պարագաների կարիք, ուստի ուազմական կազմակերպվածքի արդյունավետությունն զգայի չափով պայմանավորված է այն հանգամանքով, թե որքանով է պետությունը կատարում իր պարտականությունները՝ կապված զինծառայողների նյութական և սոցիալական ապահովման երաշխիքների, սպայի մասնագիտության և Հայրենիքի պաշտպանի հեղինակության մակարդակի բարձրացման, պահեստագոր արձակվածներին բաղաքացիական պայմաններում աշխատանքին հարմարմանը նպաստելու հետ: Այս առումով ՀՀ ՊՆ զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչությունը, դեկավարվելով «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներով, ՀՀ Կառավարության որոշումներով, ՀՀ պաշտպանության նախարարի հրամաններով և ՊՆ ԶՍՊ վարչության կանոնադրության պահանջներով, պլանաշափ աշխատանք է կատարում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության ուղղությամբ:

Նշենք, որ զինվորական միջավայրում սոցիալական աշխատանքն ունի որոշակի առանձնահատկություններ: Զինծառայողը բացի զիտական, ստեղծագործական և մանկավարժական գործունեությունից չունի իր բարեկեցության մակարդակը բարձրացնելով նպատակով լրացուցիչ աշխատանք կատարելու հնարավորություն: Իսկ դա նշանակում է, որ զինվորական-սոցիալական աշխատանքի օրինակ պետք է լինեն նաև նրա ընտանիքի անդամները:

Պատմության և ներկայիս հասարակական-քաղաքական ու սոցիալական իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալ-տնտեսական ու մի շարք այլ վերափոխումներ առավելագույնս ազդում են բնակչության այն խավերի կենսամակարդակի վրա, որոնք ապրում են պետականորեն սահմանված եկամուտներով, մասնավորապես՝ աշխատավարձով, բոշակով և նպաստներով: Հենց

<sup>5</sup> «ՀՀ Նախագահ Ս. Ա. Սարգսյանի նախընտրական ծրագիր» (<http://www.president.am/president/biography/arm/>):

այդ կատեգորիային են պատկանում զինծառայողները և նրանց ընտանիքների անդամները:

Մեր դիտարկումների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ, ընդհանուր առմամբ, ներկայում զինծառայողների սոցիալական պաշտպանվածության մակարդակը բավարար չէ, ինչը հետևանք է հրատապ լուծում պահանջող հետևյալ խնդիրների.

—համապատասխան իրավական բազայի անկատարություն և հատվածայնություն,

—բնակարանային հիմնախնդիր,

—զինվորական ծառայության ոչ բավարար վարձատրություն, որը չի համապատասխանում միջազգայնորեն ընդունված սոցիալ-տնտեսական ստանդարտներին ու պահանջմունքներին,

—զինվորական ծառայության ոչ պատշաճ սոցիալ-տնտեսական շարժադրավորում, և այլն:

Ըստ մի շարք մասնագետների՝ ոչ բավարար սոցիալական պաշտպանվածությունը կարող է հանգեցնել բանակի վերածնանը բարձր սոցիալական ոլովի հաստատության, ինչն իր հերթին կարող է բացասարար ազդել զինծառայության նկատմամբ տրամադրվածության ընդհանուր ֆոնի վրա<sup>6</sup>: Այս տեսանկյունից զորքերի մարտական պատրաստության և մարտունակության պահպանանն ուղղված գործունեության մեջ առաջին պլան է մղվում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական և իրավական պաշտպանությունը:

Սոցիալական պետությունների (ԱՍԴ, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Շվեյցարիա և այլն) փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այնտեղ գոյություն ունի զինծառայողներին արտոնությունների տրամադրման գործուն համակարգ: Մասնավորապես՝ նրանց Վարձատրությունը չի զիջում մասնավոր հատվածում ծառայող համապատասխան մասնագետների վարձատրությանը, նրանց գորացրումից հետո տրվում է արտոնյալ կարգավիճակ առողջապահական, կրթական, բնակարանային ապահովման և այլ համակարգերում<sup>7</sup>:

ՀՀ ՊՆ ԶՍՊ վարչության գործունեությունը բազմապլան և բազմավեկտոր է: Վարչության գործունեությունը հիմնականում ուղղված է զինծառայողների բնակարանային ապահովածության, պարտադիր ժամկետային զինծառայողների զորանցային, սոցիալ-կենցաղային պայմանների ապահովածության, դրամական բավարարման, թժկական սպասարկման, արձակուրդների տրամադրման, հանգստի կազմակերպման ու սոցիալական բնույթի այլ պայմանների ուսումնասիրությանը և բարելավման առումով կոնկրետ առաջարկությունների մշակմանը: Սոցիալական աշխատանքի շրջանակներում վարչությունը գորա-

<sup>6</sup> Տես Ի. Գ. Յանինա. Взаимосвязь социальной политики и социальной работы. М., 1994:

<sup>7</sup> Տես, օրինակ, А. Трутсцов, С. Шатров. Финансово-экономическое обеспечение и социальная защита американских военнослужащих. «Зарубежное военное обозрение», 2002, № 12:

մասերում պարբերաբար կազմակերպում է հանդիպումներ սպայական, ենթասպայական ու շարքային կազմերի զինծառայողների հետ՝ դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման նպատակով, պարզաբանումներ է տալիս զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին իրավական ակտերի վերաբերյալ՝ ստուգելով դրանց կատարման ընթացքը, առաջարկություններ է ներկայացնում զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պայմանների բարեկանման վերաբերյալ, ՀՀ Կառավարության 2007 թ. մարտի 7-ի հմ. 384-Ն որոշման համաձայն կազմակերպում է կարիքավոր զինծառայողներին բնակարանային հաշվառման վերցնելու, բնակարանով ապահովելու և բնակարանները մասնավորեցնելու վերաբերյալ զինծառայողների գեկուցագրերը ՊՆ կենտրոնական բնակկենցաղային հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու գործընթացը, ՀՀ Կառավարության 2005 թ. հուլիսի 16-ի հմ. 947-Ն որոշման համաձայն կազմակերպում է բնակարանի և բնակարանային պայմանների բարեկանման կարիք ունեցող գործադ (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքներին անհատույց պետական ֆինանսական աջակցության գործը, ինչպես նաև կատարում է այլ սոցիալական աշխատանք:

Պաշտպանական բարեփոխումների շրջանակներում կատարվող զինվորական-սոցիալական աշխատանքի ոլորտում առաջնային պլան են մղվում հետևյալ միջոցառումները.

1. Զինված ուժերում սոցիալական աշխատանքի առաջավոր համակարգի ներդրում,

2. զինվորական կոլեկտիվներում և զորամասերի տեղաբաշխման շրջաններում սոցիալական գործընթացների ուսումնասիրում և զարգացման միտումների կանխատեսում,

3. զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության ուղղված կառավարչական որոշումների մշակում, ընդունում և կատարում,

4. զինծառայողների սոցիալ-իրավական դաստիարակության կազմակերպում, տարրեր կատեգորիաների զինծառայողներին անհատական իրավաբանական օգնության ցուցաբերում՝ կոնկրետ սոցիալ-իրավական խնդիրների լուծման նպատակով,

5. ենթականների սոցիալական պաշտպանության նպատակով իրամանատարական կազմի և այլ պաշտոնատար անձանց՝ զինվորական սոցիալական ոլորտի իրավական պահանջների ուսուցում,

6. զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների դիմումների ուսումնասիրում և հեարավորության սահմաններում դրանց պատեհաժամանակակից լուծում,

7. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության համադաշտում:

Սոցիալական աշխատանքով գրադարձ զինվորական կառույցների գործունեության միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ դրանց գործառույթներում կարևոր տեղ ունի սոցիալ-հոգեբանական աշխատանքների կազմակերպումը: Մասնավորապես՝ նրանք համադատում են մարտական գործողություններին մասնակցած զինծառայողների հոգեբանական վերականգնման, զորացրված զինծառայողների՝ քաղաքացիական պայմաններին հոգեբանական հարմարման ու վերամասնագիտացման ուղղությամբ տարրող աշխատանքները:

Հաշվի առնելով հանրապետության նյութական ու ֆինանսական ռեսուրսների սղությունը, զինվորական ծառայության առանձնահատկությունները, պետության անվտանգության ապահովման գործում ԶՈՒ-ի ունեցած կարևոր դերը՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է բարեփոխումների համատեքստում մշակել սոցիալական աշխատանքի ավելի արդյունավետ ձևեր ու մեթոդներ, որոնք հնարավորություն կտան պարզելու և ճիշտ կողմնորոշվելու զինծառայողին և նրա ընտանիքի անդամներին սոցիալական օգնություն ցույց տալու գործում՝ ապահովելով սոցիալական ոլորտին հատկացվող միջոցների ավելի նպատակային ու արդյունավետ օգտագործումը: Մասնավորապես՝ նպատակահարմաք է վերլուծել Հայաստանի Հանրապետության սոցիալական բնագավառում տիրող իրավիճակը և հիմնական շանքերն ուղղել հետևյալ խնդիրների լուծմանը.

1. տնտեսական ռեսուրսի բաշխման համապատասխանեցում զինծառայողների սոցիալական կարիքները լիարժեք կերպով հոգալու պահանջն,
2. սոցիալական կարիքները հոգալու մշակույթի արմատավորում,
3. բանակ-հասարակություն, զինվորական-քաղաքացիական հարաբերությունների ու մշակույթի պատշաճ մակարդակի ապահովում,
4. բանակում զինծառայողների սոցիալական պրոբլեմներով մասնագիտորեն գրադարձ սոցիոլոգների, հոգեբանների ու սոցիալական աշխատողների հաստատության ամրապնդում,
5. զինծառայողների, հատկապես՝ շարքային կազմի իրավական պատրաստության բավարար մակարդակի ապահովում:

Կարծում ենք, որ այս խնդիրների լուծումը էապես կնպաստի այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնց շնորհիվ զինծառայողն առավել ակտիվ և արդյունավետ կերպով կկատարի իր ծառայողական պարտականությունները՝ դրանով իսկ երաշխավորված կերպով ապահովելով պետության ու բնակչության անվտանգությունը:

## УЛУЧШЕНИЕ СОЦИАЛЬНОГО СОСТОЯНИЯ ВОЕННОСЛУЖАЩИХ КАК ПРИОРИТЕТНАЯ ЗАДАЧА ВС РА

С. А. АРУТЮНЯН, полковник, Начальник управления социальной защиты  
военнослужащих МО РА

### РЕЗЮМЕ

Социальная защищенность – это обеспечение конституционных прав и свобод человека, осуществляемое посредством социальной защиты.

Военнослужащие, обеспечивая военную безопасность государства, выполняют одну из ключевых социальных ролей в обществе и государстве. Исходя из этого, государство осуществляет комплекс экономических, социальных, правовых и организационных мероприятий по улучшению социального состояния военнослужащих, в том числе – путем предоставления дополнительных льгот.

Для обеспечения требуемого уровня социальной защищенности военнослужащих необходимо улучшение базовых социально-экономических и культурных показателей общества и государства, в частности – путем повышения уровня социальной культуры во взаимоотношениях в армии и в обществе в целом, совершенствования в армии института социальных работников и психологов, профессионально занимающихся решением социальных проблем военнослужащих и членов их семей, а также повышения уровня правовой подготовки военнослужащих всех категорий.

## IMPROVEMENT OF SERVICEMEN'S SOCIAL STATE AS A PRIORITY TASK OF THE RA ARMED FORCES

S. A. HARUTYUNYAN, Colonel, Head of the Servicemen's Social Protection Board  
of the MOD, RA

### SUMMARY

Social security is guaranteeing constitutional rights and freedoms of the individual being implemented by means of social protection.

Ensuring the state's military security servicemen perform one of the key social roles in the society and state. In these terms the state takes a complex of economic, social, legal and organizational measures on improving servicemen's social state, as well as by offering fringe benefits.

For ensuring the required level of servicemen's social security it is necessary to ameliorate the basic social-economic and cultural indexes of the society and state, particularly through increasing the level of social culture in the relationship in the Army and society on the whole, enhancing the institution of social workers and psychologists in the Army, who are professionally engaged in the solution of servicemen's and their family members' social problems, as well as increasing the level of legal training of servicemen of all the categories.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՅՈՒՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ա. Զ. ԱՍԱՏՐՅԱՆ, դնարեսագիրության քեկմածու,  
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի դեղակալ



Սոցիալական ոլորտը պետության կենսագործունեության ռազմավարական ուղղություններից մեկն է, ուստի պետության սոցիալական զարգացման մողելը անհրաժեշտ է մշակել պետության զարգացման ընդհանուր ռազմավարության հիման վրա և դրա շրջանակներում։ Հաշվի առնելով ժամանակակից սոցիալական պետություններում կիրառվող մողելների դրական փորձը և քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական ու մշակութային առումներով Հայաստանի Հանրապետության և այդ պետությունների մակրոշափանիշային համատեղելիությունը՝ կարող ենք ասել, որ նպատակահարմար է ընտրել այդ մողելներից մեկը կամ դրանց համադրմանը ստեղծել մի նոր մողել։

Միայն դրանից հետո հնարավոր է մշակել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի կայուն զարգացման ռազմավարությունը (այսուհետև՝ ռազմավարություն), որում սահմանված լինեն այդ ոլորտում պետության հեռանկարային քաղաքականության հիմնադրույթները։

Առհասարակ սոցիալական ոլորտում «ռազմավարություն» հասկացությունը մեկնաբանվում է տարրեր կերպ։

—որպես պետության զարգացման կոնկրետ պատմական ժամանակահատվածում նրա սոցիալական հիմնահարցերի համակարգի գլխավոր լուծում,

—որպես բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի ոլորտում հասարակության զարգացման երկարաժամկետ ու միջնաժամկետ նպատակների ամրողություն։

\* Սոցիալական պետության սկզբունքները սահմանված են մի շարք միջազգային փաստաթորերում և իրավական ակտերում, որոնց մասնակցում է Հայաստանի Հանրապետությունը (դրանցից կարելի է նշել ՄԱԿ-ի 1948 թ. Մարդու իրավունքների համարնդիմանուր հոչակագիրը, ժամանակակից սոցիալական պետության ստեղծման համար սկզբունքային նշանակություն ունեցող՝ 1992 թ. ՄԱԿ-ի անդամ պետությունների Ռիո դե Ժանեյրոյի խորհրդաժողովում ընդունված «Կայուն զարգացման հայեցակարգը», Սոցիալական զարգացման մասին 1995 թ. կոպենհագենյան հոչակագիրն ու գործողությունների ծրագիրը, Աշխատանքի միջազգային կազմակերպության 1998 թ. Կոնվենցիան։ Սոցիալական պետության կառուցումը որպես համազգային նպատակ նախատեսված է ՀՀ Սահմանադրությամբ, որի 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետությունը հոչակագում է որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական, պետություն, իսկ ցանկացած ռազմավարություն պետք է նպաստի սահմանադրական կարգի պահպանման ու ամրապնդմանը։

—որպես «Ազգի քաղաքական, տնտեսական, հոգեբանական և ռազմական ուժերի զարգացման և օգտագործման արվեստ և գիտություն՝ խաղաղության և պատերազմի ժամանակ ազգային քաղաքականության առավելագույն օգնելու համար»<sup>1</sup>:

Մեր կարծիքով՝ ռազմավարությունը գործող օրենսդրության շրջանակներում գործադիր իշխանության մարմինների վարած սոցիալ-դաշտական քաղաքականության համար անհրաժեշտ քաղաքական, լրացրական, սոցիալական, կազմակերպական, կառավարչական, տեխնոլոգիական և հոգեբանական գործուների համակարգված օգրագործմանն ուղղված, հայեցակարգային առումով փոխկապված երկարաժամկետ որոշումների համալիրի մշակման ու իրականացման զիրությունն և արվեստ:

#### **Ա-զմավարությունը պետք է նախանշի.**

— Մեր հասարակության հետագա սոցիալական զարգացման ուղղությունները և կոնկրետ նպատակները՝ կարևորելով հասարակական բոլոր խմբերի համար սոցիալական պետությանը բնորոշ պայմանների ապահովումը,

— Նախանշված նպատակներին հասնելու եղանակները՝ կարևորելով ժողովրդավարական, իրավական պետությանը բնորոշ կառավարման, ինչպես նաև հասարակական համագործակցության մեխանիզմների ապահովումը,

— այն չափանիշները, որոնցով հնարավոր է գնահատել ինչպես նախանշված նպատակին հասնելու աստիճանը, այնպես էլ դրա համար անհրաժեշտ միջոցների ու եղանակների համապատասխանությունը ժողովրդավարական արժեքներին և իրավական պետությանը ներկայացվող պահանջներին:

Աշխարհում պատմականորեն ձևավորվել են ռազմավարության մշակման և իրականացման նկատմամբ երկու հիմնական մոտեցումներ:

Ամբողջատիրական հասարակություններում ռազմավարությունը մշակում ու իրականացնում է դեկավարող և ուղղորդող կենտրոնը, որին նաև պատկանում է իշխանության իրականացման մենաշնորհը: Ընդսմին այս դեպքում կարող է անգամ ռազմավարություն շինել, եթե սոցիալական հիմնախնդիրների լուծումը չի համարվում առաջնահերթություն:

Ժողովրդավարական (քաղաքացիական) հասարակություններում սոցիալական քաղաքականության սուբյեկտների և զաղափարախոսությունների քազմապիտուրյունը առաջ է բերում ռազմավարությունների քազմազանություն: Այս դեպքում յուրաքանչյուր ռազմավարություն դառնում է հասարակության զարգացման՝ տվյալ զաղափարախոսության հիմնա վրա մշակված ծրագրի քաղկացուցիչ մաս: Պետությունը՝ որպես սոցիալական քաղաքականության ամենակարևոր սուբյեկտներից մեկը, իր ռազմավարությունը մշակելիս պետք է հաշվի առնի սոցիալական քաղաքականության մյուս սուբյեկտների ռազմավարական ծրագրերը, ինչպես նաև պայմաններ ստեղծի դրանց արդյունավետ իրականացման համար:

<sup>1</sup>Տես Ռ. Է. Սլեզինգեր. Социология экономики (учебник). М., 2001, с. 71:

Անկախության ձեռքբերումից մինչ օրս ՀՀ աշխատանքի և սոցիալական պաշտպանության դրուտում իրականացված քաղաքականությունը բազմաթիվ օրյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով այդպես էլ չի կողմնորոշվել դեպի հայտնի հայեցակարգային ուղղություններից որևէ մեկը, այլ էլեկտիվ է և գլխավորապես միտված է մարտավարական բնույթի հրատապ խնդիրների լուծմանը՝ հատկապես անկախության առաջին տարիներին որպես միակ սոցիալական գերակայություն սահմանելով բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի հետագա վատրարացման կանխումը:

Այդ պայմաններում, օրյեկտիվորեն, ուսումնական մակարդակով առաջնահերթ լուծման առարկա շրաբան համազգային նշանակություն ունեցող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են աղաղակող սոցիալական անարդարության հաղթահարումը և նոր ժողովրդավարական զաղափարախոսությունների անցնելուն զուգընթաց՝ վեհ մարդասիրական արժեքների արմատավորումը:

Սոցիալական խնդիրները առաջադիմական քաղաքակրթական արժեքներին համահունչ և լիարժեքորեն լուծելու միակ գործիքը **սոցիալական պետությունն է**, որի գաղափարը ենթադրում է՝

– հասարակության կյանքի քաղաքական և իրավական կարգավորում մարդասիրության սկզբունքների հիման վրա,

– բնակչության համալիր սոցիալական պաշտպանության գործառույթների կատարում,

– քաղաքացիական հասարակության զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,

– հասարակական կյանքի բոլոր բնագավառներում որոշումների կայացման բազմաստիճական ապահովում:

Թեև զարգացած հասարակությունում սոցիալական քաղաքականության կենտրոնական սուբյեկտը պետությունն է, բայց՝ ոչ միակը, քանի որ սոցիալական պաշտպանության մեջ թվով գործառույթներ տրվում են այլ սուբյեկտների:

Սոցիալական քաղաքականության **առաջնահերթ նպատակներն են**.

– ստեղծել սոցիալական պաշտպանվածության ժողովրդավարական համակարգ՝ մարդու և քաղաքացու սոցիալական իրավունքների ապահովման՝ պետության սահմանադրական պարտականության իրականացման միջոցով,

– ստեղծել պայմաններ քաղաքացիների հասարակայնորեն արդյունավետ և օգտակար տնտեսական ակտիվության աճման համար,

– ապահովել ժողովրդի բնապահպանական անվտանգությունը և առողջությունը՝ ժամանակակից պահանջների մակարդակով,

– արդիականացնել սոցիալական ենթակառուցվածքները, խթանել սոցիալական սպասարկման ոլորտների զարգացումը,

– քարելավել եկամուտների քաղաքականությունը, հասարակության բոլոր շերտերի համար առնվազն ապահովել նվազագույն սոցիալական ստանդարտներին համապատասխան եկամուտ ունենալու հնարավորությունը,

— ապահովել առաջընթաց բնակչության կենսագործունեության բոլոր ոլորտներում,

— ներդաշնակեցնել սոցիալական քաղաքականությունը համապետական, տարածքային և համայնքային մակարդակներում,

— զարգացման հեռանկար ապահովել հասարակության յուրաքանչյուր սոցիալական խմբի համար, և այլն:

Այս դրույթների հիման վրա մշակված ռազմավարությունը պետք է նպատակաուղղված լինի՝

ա) պետության փաստացի անկախության պահպանմանը,

բ) ամբողջատիրական համակարգին վերաբարձի բացառմանը,

գ) պետության կառավարման դիկտատորական մեթոդների բացառմանը,

դ) բնակչության սոցիալական դեգրադացիայի կանխմանը:

Ըստ էության, սոցիալական պետությունը մի պետական-հասարակական մոդել է, որին բնորոշ են՝

- ժողովրդավարությունը,

- կենսագործունեության բոլոր ոլորտներում անձի ազատությունը (առանց մյուսների ազատության սահմանափակման),

- քաղաքական քազմակարծությունը, իրաժարումը բռնի, հեղափոխական ճանապարհով մասնավոր սեփականության, ազատ ձեռներեցության հաստատությունների կազմալուծման, «շահագործող դասակարգի» վերացման և հեղափոխական դիկտատորայի հաստատման գաղափարներից,

- ազատ շոկայական օրենքների վրա հիմնվող տնտեսության ազատ գործառությունը, մասնավոր ձեռնարկատիրական գործունեության ազատությունը, պետության կարգավորիչ դերի շրջանակի հստակ որոշումը,

- սոցիալական քաղաքականության իրականացումը հասարակական հարստության վերաբաշխման պետական գործուն մեխանիզմների կիրառմամբ, սոցիալական ծրագրերի ընդլայնումը, ինչն ուղեկցվում է այդ նպատակով հատկացվող միջոցների անընդհատ ավելացմամբ:

**Համբնդիանուր բարեկեցության պետությունը՝ որպես սոցիալական պետության ժամանակակից մոդել**

Ազատականության սոցիալական-ժողովրդավարական վերափոխման բնորոշ օրինակներ դարձան ԱՄՆ-ի, ինչպես նաև հետպատերազմյան Գերմանիայի ժողովրդավարական հասարակական-տնտեսական կառուցվածքները։ Դրանց հիմնադիրները (Զ. Մ. Քեյնս, Լ. Էրիխարդ և ուրիշներ) այն անվանեցին **սոցիալ-շոկայական գեղտեսություն**։ Տվյալ հայեցակարգի առանցքային զաղափարը պետության շեշտված միջամտությունն է համբնդիանուր բարեկեցության հաստատման և լրիվ զբաղվածության ապահովման նպատակով<sup>2</sup>:

**Համբնդիանուր բարեկեցության պետությունը (welfare state) պատասխա-**

<sup>2</sup> Տես C. H. Смирнов, T. Ю. Сидорина. Социальная политика (учебное пособие для вузов). М., 2004, сс. 156–160; «Социальная политика (энциклопедия)». Под ред. Н. А. Волгина и Т. С. Сулемовой. М., 2006, с. 160:

նատվություն է կրում քաղաքացիների բարեկեցության համար, և այն չի կարող դրված լինել ոչ իր իսկ անհատի, ոչ էլ մասնավոր ընկերության կամ տեղական իշխանության վրա: Այդ պատասխանատվությունը պեսք է պայմանավորված լինի հասարակության կայունությամբ և առաջնարար գարգացման քաղաքականությամբ՝ հասարակության բոլոր անդամների համար ապահովելով հավասար պայմաններ, միևնույն ժամանակ՝ հոգատարությամբ միայն այն մարդկանց նկատմամբ, որոնք ի վիճակի չեն (անկարող են) բավարարելու իրենց նվազագույն սոցիալական պահանջնությունը: Պետությունը լուծում է սոցիալական ապահովման պրոբլեմները, հատկապես՝ առողջապահության, կրօնության, սոցիալական բնակչությի ծևավորման ու կարիքավորներին համապատասխան կացարամեթով պահանջնան, ինչպես նաև գործազրկության, անապահով ընտանիքներին տրամադրվող նպաստների, տարիքի և այլ պատճառներով աշխատունակությունը կամ եկամուտը կորցրած անձանց կենսարշագիների տրամադրման, նվազագույն աշխատավարձի սահմանման և այլ ծևերով եկամուտների ապահովման միջոցով: Այս ծախսերի ֆինանսավորումը կատարվում է պետական սոցիալական պաշտպանության ծրագրերի շրջանակում՝ ռեսուրսների վերաբաշխման միջոցով:

Համընդհանուր բարեկեցության պետության առաջին ծրագիր համարվում է 1880-ական թվականներին Գերմանիայում Բիսմարկի ներդրած ազգային սոցիալական ապահովման համակարգը: Այժմ նման համակարգը արդիական հասարակությունների բնութագիրն է և իհմնվում է ինքնուրույնության, մրցունակության, շուկայական ու մասնավոր ձեռնարկչության սկզբունքների վրա: Սոցիալապես զարգացած պետություններում տեղի է ունենում «կազմակերպված» պետության կողմից կարգավորվող մեծաշնորհային կապիտալիզմից դեպի դրա «ապակագմակերպված», ավելի մեծ մրցակցությամբ ու սակավ կարգավորվող ծևերը<sup>3</sup>:

Սոցիալական պաշտպանության հիմնարար սոցիալական պարտականություններից մեկը քաղաքացիական հասարակության ծևավորումն է, այսինքն՝ հասարակությունում և տնտեսությունում բազմաթիվ պետական և ոչ պետական սուբյեկտների ստեղծումը: Սա թելադրվում է սոցիալական պաշտպանության բնույթով, որի հիմնարար սկզբունքներն են.

- մարդու իրավունքների ու նրա հիմնարար ազատությունների գերակայությունը,

- հասարակության տարբեր խմբերի միջև համերաշխությունը,
- հասարակական համախմբերին (ընկերակցություններ, միություններ, ընկերություններ և այլն) արդյունավետ աջակցությունը (սուրբիդավորում), որը, ինչպես ցոյց է տվել փորձը, քաղաքացիների հիմնախնդիրների լուծման ավելի արդյունավետ ձև է, քան դրանց լուծումը պետական մարմինների կողմից:

Այսօր ժողովրդավարական սոցիալական պետության հայեցակարգը փոխել է տնտեսության մեջ պետության դերի մասին ավանդականորեն ձևավորված

<sup>3</sup>Տես «Словарь терминов. Социология» (<http://www.chem.msu.su/rus/teaching/sociology/dic.html>):

պատկերացումները և պետության վրա դրել է գլխավորապես արքիտրաֆային և քաղաքակրթական գործառույթներ, իսկ պետության և ձեռնարկչության նկատմամբ վերահսկողության գործառույթները դրել է քաղաքացիական հասարակության վրա:

Սոցիալական համերաշխության հիմքը փոխգիշումն է, այսինքն՝ սոցիալական պայմանագրի բոլոր մասնակիցների կարողությունը իրենց շահերի մի մասը զոհելու հանուն այդ նույն շահերի հիմնական մասի բանական իրացման և հանուն հասարակական բարիքի: Այն ներառում է՝ ժողովրդավարական և մարդասիրական արժեքների պաշտպանությունը, իրավունքների ու ազատությունների զարգացումը, տնտեսական աճը, բարենպաստ գործարար և բարոյական մթնոլորտը, բոլոր քաղաքացիների բարեկեցության մակարդակի բարձրացումը, սոցիալական արդարությունը, սոցիալական մասնակցությունը, մշակութային և հոգևոր զարգացումը:

Փոխգիշումը ենթադրում է համընդիանուր համաձայնության հասարակություն կառուցելու համար պետական իշխանության որոշ գործառույթների հանձնում հասարակական կազմակերպություններին և այդ գործիքացի շրջանակներում նրանց համագործակցություն, ինչպես նաև արհմիությունների և գործառուների կառուցողական գործակցությունը աշխատումի առավելագույն գրադադարության և աշխատանքի արդարացի վարձատության բանական հաշվեկշիռ ապահովելու համար:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի կայուն զարգացման ռազմավարությունը մշակելիս հարկ է հաշվի առնել վերը նշված զաղափարաքաղաքական հիմքերը, որոնց առարկայական իրացումը հնարավորություն կտա ձևավորելու մեր պետության սոցիալական պաշտպանության մոդելը և հետևողականորեն ապահովելու դրա իրականացումը:

## ИДЕОЛОГИЧЕСКИЕ И ПОЛИТИЧЕСКИЕ ОСНОВЫ СТРАТЕГИИ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ СФЕРЫ ТРУДА И СОЦИАЛЬНОЙ ЗАЩИТЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

А. Д. АСАТՐՅԱՆ, *кандидат экономических наук,  
заместитель Министра труда и социальных вопросов РА*

### РЕЗЮМЕ

Социальная сфера является одним из стратегических направлений жизнедеятельности государства, поэтому модель социального развития государства должна соответствовать общей стратегии развития государства. Учитывая положительный опыт используемых в развитых социальных государствах моделей, а также макропараметрическую сопоставимость РА с этими государствами по политическим, экономическим, социальным, правовым и культурным аспектам, целесообразно или выбрать одну из этих

моделей, или создать новую на основе осмысленного синтеза уже существующих моделей. Только после этого станет возможной разработка Стратегии устойчивого развития сферы труда и социальной защиты РА.

Поэтому необходимо отказаться от действующей эклектической, нацеленной на решение сиюминутных тактических задач системы социальной защиты и с учетом требований Конституции РА и международных актов, а также современных идеологических и политических разработок в данной сфере приступить к построению социального государства в целях становления РА как государства всеобщего благодеяния.

IDEOLOGICAL AND POLITICAL PRINCIPLES  
OF THE SUSTAINABLE DEVELOPMENT STRATEGY  
OF THE LABOR AND SOCIAL PROTECTION SPHERE  
OF THE REPUBLIC OF ARMENIA

A. J. ASATRYAN, *Candidate of Economic Sciences,  
Deputy Minister of the RA Labor and Social Affairs*

SUMMARY

Social sphere is one of the strategic directions of the state's activity, therefore the model of the state's social development should conform with the state's general strategy of development. Taking into consideration the positive experience of the models being used in the developed social states, as well as the macroparametric comparability of the RA with these states in political, economic, social, legal and cultural aspects, it is expedient either to choose one of these models or to create a new one upon the basis of the sensible synthesis of the existing models. Only after that it will be possible to elaborate the sustainable development strategy of the RA labor and social protection sphere.

Thus, it is necessary to abandon the acting eclectic system of social protection, targeted at the solution of momentary tactical tasks, and in terms of the RA Constitution requirements and international acts, as well as contemporary ideological and political elaborations in the given sphere to start building a social state for the RA to become a welfare state.

**ՈԱԶՄԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՐՈՇ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ  
Ա. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ԵՊՀ Սոցիալական աշխարհանքի և սոցիալական գիտանոլոգիաների  
ամբիոնի վարիչ, Տ. Ռ. ՄԱՐՏԻՐՈՅԱՅԱՆ, կապիտան, պարմական  
գիտությունների թեկնածու, «Հայկական բանակ» ռազմագիտական  
համեսի ավագ սպա-մասնագեկ**



### 1. Անվտանգությունը ռազմա-սոցիալական ոլորտում

ՀՀ պաշտպանական ոլորտում իրականացվող բարեփոխումները նպատակառողբած են առաջին հերթին մեր բանակի մարտունակության մակարդակի համապատասխանեցմանը 21-րդ դարի մարտահրավերներին ու սպառնալիքներին<sup>1</sup>:



Այդ առումով կարևորվում է «անձնակազմի պաշտոնեական առաջխաղացման, վարձատրման, սոցիալական ապահովման, զորացրման հստակ մեխանիզմների սահմանումը՝ միասնական և բափանցիկ համակարգի ստեղծմամբ»<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, Զինված ուժերի առաքելության, նպատակների, խնդիրների և գործառույթների համատեքստում սոցիալական անվտանգության<sup>3</sup> ու ռազմական անվտանգության ապահովումները փոխայմանավորված են և տրամախաչվում են ռազմասոցիալական ոլորտում: Ռազմասոցիալական ոլորտի անվտանգային խնդիրների լուծման տեսանկյունից առաջնային է զինված ուժերի մարտունակության մակարդակի բարձրացումը զինծառայողների բարեկեցության և սոցիալական արդարության ապահովման միջոցով: Բարեկեցության և սոցիալական արդարության ապահովման առաջնային նախադրյալը սոցիալական անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների չեզոքացումն է, ինչն էլ իր հերթին ռազմասոցիալական ոլորտում անվտանգության ապահովման հիմնարար նպատակ է:

<sup>1</sup> Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հասուլ քողարկում, 2007, էջ 24–25:

<sup>2</sup> «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տեսրեր», 2007, հմ. 4, էջ 53:

<sup>3</sup> Սոցիալական անվտանգությունը ազգային անվտանգության այն բաղադրիչն է, որը բնութագրում է նարդու և քաղաքացու սոցիալական իրավունքների ու ազատությունների երաշխավորված սպահովմը (տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ. հիմնական տերմիններ և հասկացություններ»: «ՀՀ», 2006, հմ. 2):

Այդ նպատակի իրականացման ուղղությամբ պետության համակարգված գործունեությունը ամփոփվում է ռազմասոցիալական քաղաքականության ձևով: Այն պետության սոցիալական քաղաքականության ու ռազմական քաղաքականության հարաբերականորեն ինքնուրույն մասն է և միտված է պետության ռազմական անվտանգության ապահովման համակարգի սոցիալական մասի զարգացմանը, զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների նյութական և մշակութային պահանջնունքների քավարարմանը՝ դրա հիման վրա նրանց բարոյահոգեբանական ու ֆիզիոլոգիական ներուժի ապահովմամբ, ռազմական անվտանգության ապահովման համակարգի ներքին կայունության, կենսագործունեության ու սոցիալական անվտանգության պահպանմանը<sup>4</sup>:

## 2. Ռ-ազմասոցիալական քաղաքականության միջազգային փորձը

Գրեթե բոլոր պետություններում մեծ ուշադրություն է դարձվում զինծառայողների սոցիալական պաշտպանվածության խնդրի և երիտասարդության մեջ զինվորական ծառայության նկատմամբ շահագրգուվածության արմատավորման վրա: Նման մոտեցումը պայմանավորված է մեր դարաշրջանում զինված ուժերը լավ պատրաստված և որակյալ կադրերով համալրելու դժվարություններով:

Ըստ մի շարք մասնագետների՝ իրական սոցիալական երաշխիքներ չինեն զգալիորեն նվազեցնում է ոչ միայն զինծառայության համբավն ու վարկը, այլև ուղղակիորեն բանակից վաճում է բանիմաց, կրթված մասնագետներին: Այս երևույթը ժամանակակից տեխնոլոգիական դարաշրջանում բացասարար է ազդրում զինված ուժերի անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի և զորքերի մարտունակության վրա: Դրանով է պայմանավորված մի շարք պետություններում զինծառայողների սոցիալական կարգավիճակի բարձրացման ու սոցիալական պաշտպանվածության ծրագրերի մշակումն ու ընդունումը<sup>5</sup>: Այդ ծրագրերը հիմնականում իրականացվում են ապահովագրական և վարկավորման մեխանիզմների ներդրման ու կիրառման միջոցով:

Պետությունը զինծառայողի ընտանիքին «անվճար» սոցիալական ծառայություններ մատուցելու փոխարեն (ինչպես ցույց է տվել խորհրդային փորձը, դա միշտոցների անարդյունավետ կառավարման ձև է) առաջարկում է ապահովագրական մեխանիզմ և մուծում ապահովագրական վճարները: Այդ մեխանիզմի շնորհիվ զինծառայողը կարող է ստանալ որակյալ վճարովի բժշկական կամ այլ բնույթի սոցիալական ծառայություններ, իսկ պետությունը գերծ է մնում բանակում սոցիալական ապահովման համակարգային մեծ կառույցներ պահելու անհրաժեշտությունից: Այսպիսով՝ օպտիմալացվում են պետության ծախսերը, զարգանում է ապահովագրական շուկան, բարձրանում զինծառայողի և նրա ընտանիքի սոցիալական պաշտպանվածության մակարդակը, հետևաբար նաև ռազմական գոր-

<sup>4</sup> Տես B. M. Корякин. Военно-социальная политика: к определению понятия. «Военная мысль», 2003, № 2:

<sup>5</sup> Տես, օրինակ, B. Горадзе. О социальной защищенности военнослужащих Латвии и Эстонии. М., «Зарубежное военное обозрение» («ЗВО»), 2004, № 12:

Ծի վարկը: Այս համակարգի կիրառմամբ շեշտակի կրծատվում են չարաշահումների հնարավորությունները, ինչի շնորհիվ տնտեսվում են հսկայական միջոցներ:

Աշխարհում լայնորեն տարածված սոցիալական ապահովման ձևերից է զինծառայողին բնակարան հատկացնելու երևույթը: Պետությունը ֆինանսական հաստատություններից վեցնում է համապատասխան երկարաժամկետ հիպոտեկային վարկեր, վճարում է շինարարական ընկերությանը, իսկ վերջինս կառուցում է բնակարաններ<sup>6</sup>: Պետությունը որոշակի ժամկետով (օրինակ՝ տասը տարով) այդ բնակարանը հանձնում է զինծառայողին՝ օգտագործման իրավունքով, իսկ այդ ժամկետը լրացնալուց հետո, որպես նրա ծառայությունների գնահատում, հանձնում է զինծառայողին սեփականության իրավունքով:

ԱՄՆ-ը հայրենիքի նկատմամբ իրենց պարտքը կատարած զինծառայողներին ու զինվածների ընտանիքներին օգնելու համար օրենքներ է ընդունել աշխատանքի տեղափորման (մասնավորապես՝ պետական մարմիններում) ու կրթության հարցերում նրանց առաջնային իրավունքների վերաբերյալ: Դրանցից կարելի է առանձնացնել «Վետերանների գերակա իրավունքների մասին» (1944 թ.), «Վետերաններին աշխատանքի տեղափորման ու կրթության հարցերում օգնության վերաբերյալ» (1976 թ.), «Քաղաքացիական ծառայության վերափոխման մասին» (1978 թ.) օրենքները<sup>7</sup>:

Խսրայելում ընդհանրապես բացառվում է, որ բանակում չծառայած որևէ քաղաքացի զբաղեցնի պետական պաշտոն: Ավելին, այդ պետության զրեթե բոլոր դեկավարները բանակում աշքի ընկած նախկին բարձրաստիճան զինվորականներ են: Նման ճանապարհով այդ երկրում բարձրացվում են բանակի վարկն ու կշիռը, ինչպես նաև հնարավորություն է ստեղծվում զինծառայողին քաղաքացիական հասարակության մեջ սահուն կերպով ինտեգրելու համար: Դա նաև նպաստում է հասարակություն-բանակ սերտ հոգևոր կապի ամրապնդմանը:

Այսպիսով՝ կարելի է պնդել, որ ժամանակակից պահանջներին համապատասխանող ռազմասոցիալական քաղաքականությունը շատ կարևոր է պետության անկախության, պետության ու ժողովրդի պաշտպանվածության և բնակչության բարեկեցության ապահովման գործում:

### 3. Սոցիալական աշխատանքը և զինծառայողների, նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանությունը

Ռազմասոցիալական քաղաքականությունը տարբեր իրավական ակտերի միջոցով նախատեսում է զինծառայողներին ու նրանց ընտանիքների անդամներին որոշակի բարիքների և ծառայությունների տրամադրում՝ որպես ծառա-

<sup>6</sup> Օրինակ՝ Ֆրանսիայում 2002 թ. զինծառայողներին բնակարաններ տրամադրելու գործին աջակցելու նպատակով հատկացվել է 202 մետր (տես Ա. Դոլմատով. Ֆինансово-էкономический обзор военнослужащих Франции. «ЗВО», 2004, № 4):

<sup>7</sup>Տես Ա. Տրյուզով, Ս. Շատրով. Финансово-экономическое обеспечение и социальная защищаемость американских военнослужащих. «ЗВО», 2002, № 12:

յուրյան ընթացքում կրած զրկանքների և կորուստների փոխհատուցում: Սակայն ռազմասոցիալական քաղաքականությունը կարող է նախատեսել զինծառայողի և նրա ընտանիքի անդամների սոցիալական պաշտպանության իրավունքներ ու երաշխիքներ միայն որոշակի դեպքերի համար, ինչպես, օրինակ, առողջության կորստի, հաշմանդամության, բնակարանի կարիքի, աշխատանքով ապահովման, կրթությանը օժանդակության, անձի սոցիալական ու հոգեբանական վերականգնման և այլ նման խնդիրների պարագայում: Սակայն պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր զինծառայողի ու նրա ընտանիքի անհատական և միջավայրային առանձնահատկությունները կարող են ոչ միայն առանձնահատուկ դարձնել նրանց սոցիալական խնդիրները, այլև ծնել յուրահատուկ ռիսկային իրավիճակներ: Նման դեպքերում պահանջվում է անհատական մոտեցում, որի միջոցով ցուցաբերվող սոցիալական աջակցությունը կարող է հասցեական լինել և լիարժեք կերպով ծառայել նպատակին: Համաշխարհային պրակտիկայում այդպիսի դեպքերում կիրառվում է «սոցիալական աշխատանք» մասնագիտությունը, որը մարդկանց սոցիալական խնդիրները դիտում է ֆիզիկական ու սոցիալական միջավայրների համատեքստում և նրանց սոցիալական պաշտպանությունը կազմակերպելիս աշխատում է հաշվի առնել յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունները: Շահառուների կյանքին (անհատ, խումբ, համայնք, հասարակություն) սոցիալական աշխատողի միջամտությունը նպաստում է նրանց ֆունկցիոնալ հնարավորությունների մեծացմանը: Միջամտությունը կատարվում է իրազեկման, խորհրդատվության, ուսուցման, միջնորդության և այլ ձևերով: Զինված ուժերում սոցիալական աշխատանքն առաջին անգամ կիրառվել է 1943 թվականին ԱՄՆ-ում: Այսօր ԱՄՆ-ի բանակը օգտվում է մոտավորապես 1500 սոցիալական աշխատողների ծառայություններից: Վերջիններս զբաղվում են զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների առողջության պահպանման, բնակարանային, աշխատանքի տեղափորման, սոցիալ-հոգեբանական վերականգնման, համայնքի մեջ ինտեգրման և այլ նմանատիպ խնդիրների լուծմամբ: Նրանք նաև փորձում են ազդել պետության վարած ռազմասոցիալական քաղաքականության վրա և այն ավելի մեծ չափով համապատասխանեցնել զինծառայողների ու նրանց ընտանիքների կարիքներին<sup>8</sup>:

ՀՀ մի շարք սոցիալական հաստատություններում արդեն ներդրվել է «սոցիալական աշխատանք» մասնագիտությունը: Բանակը թերևս այն եզակի հաստատություններից է, որտեղ դեռ չկան սոցիալական աշխատողներ: Մասնագետներ չինելու պատճառով զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների շատ սոցիալական խնդիրներ դեռևս մնում են չլուծված: Այդ խնդիրներից են՝ նորակոչիկների հարմարումը զինվորական միջավայրին և զորացրումից հետո վերահստեղքումը քաղաքացիական կյանքին, զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների առողջության պահպանումը, միջամտային ու միջխմբային բախումները, բնակարանի, աշխատանքի ու հանգստի, սոցիալ-հոգեբանական

<sup>8</sup> See «Encyclopedia of Social Work», 19<sup>th</sup> Edition. Washington, 1995, PP. 1726 – 1735:

վերականգնման հետ կապված խնդիրները, իրավունքների պաշտպանությունը և այլն: Զորամասում սոցիալական աշխատողի մշտական ներկայությունը հնարավորություն է տալիս զինծառայողին և նրա ընտանիքի անդամներին անհրաժեշտ սոցիալական աջակցություն ցուցաբերելու բոլոր այն դեպքերում, երբ պաշտպանության ընդիանուր ու ստանդարտ արարողակարգերը բավարար չեն դժվարությունները հաղթահարելու համար:

Սոցիալական աշխատողի մուտքը ՀՀ Զինված ուժեր կարող է տեղի ունենալ աստիճանաբար: Ակզրում կարելի է սոցիալական աշխատանքի կատարման լիազորություններ վերապահել այն պաշտոնատար անձանց, որոնց գործառույթներն արդեն պարունակում են սոցիալական աշխատանքի տարրեր՝ նախապես վերապատրաստելով նրանց: Հաջորդ քայլը պետք է լինի Զինված ուժերում սոցիալական աշխատանքի հաստատության ձևավորումը և բանակային սոցիալական աշխատողի կարգավիճակի իրավական ամրագրումը, ինչպես նաև բանակի կարիքների հաշվառմամբ սոցիալական աշխատողների պատրաստման կրթական ծրագրերի փոփոխումը:

Այսպիսով՝ հայրենիքին անմնացորդ նվիրված, իր ամբողջ էությամբ երկրի պաշտպանությանը տրված զինծառայող ունենալու համար պետությունը պետք է հնարավորինս ազատի նրան սոցիալ-տնտեսական պրոբլեմների բեռից, բարձրացնի նրա սոցիալական կարգավիճակն ու պաշտպանվածության աստիճանը: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ դա է ճիշտ ուղին, ուստի և, մեր կարծիքով, դա պետք է լինի ռազմասոցիալական ոլորտում իրականացվող պաշտպանական բարեփոխումների գերակա նպատակներից մեկը:

## НЕКОТОРЫЕ ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ВОПРОСЫ ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОСТИ РА В ВОЕННО-СОЦИАЛЬНОЙ СФЕРЕ

А. К. ХАЧАТРЯН, кандидат философских наук, доцент, заведующий кафедрой  
Социальной работы и социальных технологий ЕГУ,

Т. Р. МАРТИРОСЯН, капитан, кандидат исторических наук,  
старший офицер-специалист военно-научного журнала «Айкакан банак»

### РЕЗЮМЕ

Оборонные реформы в РА нацелены, в первую очередь, на обеспечение высокого уровня боеспособности ВС, одним из составляющих которой является социальная защищенность военнослужащих, лиц, уволенных в запас, и членов их семей.

Многие государства с развитой системой социальной защиты (например, США, Израиль) в своей военно-социальной политике вместо устаревших методов обеспечения социальной защиты военнослужащих применяют возможности страховой системы и ипотечного кредитования.

В ходе оборонных реформ в РА целесообразно модернизировать военно-социальную политику РА с учетом передового мирового опыта, в том числе внедрить недостающее звено этой политики – систему социальной работы в армии.

## SOME THEORETICAL AND PRACTICAL ISSUES OF ENSURING THE RA SECURITY IN THE MILITARY-SOCIAL SPHERE

*A. K. KHACHATRYAN, Candidate of Philosophy, Docent,  
Head of the Chair of Social Work and Social Technologies, YSU,  
T. R. MARTIROSYAN, Captain, Candidate of Historical Sciences,  
Senior Officer-Specialist of the Defense-Academic Journal «Haikakan Banak»*

### SUMMARY

The RA defense reforms are targeted firstly at ensuring the high level of fighting efficiency of the Armed Forces, one of the constituents of which is the social security of servicemen, persons transferred to the reserve, and their family members.

Many states with the developed system of social protection (for example, USA, Israel) use the possibilities of the insurance system and mortgage lending in their military-social policy instead of the outdated methods of ensuring servicemen's social protection.

In the course of the RA defense reforms it is expedient to modernize the RA military-social policy taking into account the leading world experience, as well as to introduce the missing link of that policy – the system of social work in the Army.

## ՀՀ ԲԺՇԿԱՍՈՅԻԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՅԻԿԱՆԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ ԲԱՂԱԴՐԻՉ

Մ. Գ. ՎԱՆՅԱՆ, ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության  
գործակալության պետ



Հաշմանդամների՝ որպես սոցիալական պաշտպանության կարիք ունեցող անձանց նկատմամբ հոգածությունը եղել և մնում է մարդկությանը հոգող ամենակարևոր խնդիրներից մեկը: Օրինակ՝ Հայաստանում դեռ 4-րդ դարում Ներսէս Սևծ կարողիկոսը հաշմանդամների, ծերերի, անօթևանների համար վաճքերին կից կառուցել է անկելանոցներ, և նրանց խնամքն իր վրա է վեցրել եկեղեցին<sup>1</sup>: Մշիքար Գոշն իր «Դատաստանագրքում» սահմանել է հիվանդին, ծերին պահելու նրանց մերձավորների պարտականությունները<sup>2</sup>: Արդի աշխարհում

ձևավորվել են հաշմանդամի և հաշմանդամության խնդիրների լուծման հարուստ ավանդություններ: Այս առումով առանձնահատուկ նշանակություն ունի ՍԱԿ-ի «Հաշմանդամների իրավունքների հոչակագիրը» (1971 թ.), որում նշվում է, որ մտավոր կամ ֆիզիկական կարողությունների անբավարարության հետևանքով իր անձնական կամ սոցիալական կարիքները մասնակի կամ լրիվ չափով բավարարելու կարողությունից զուրկ ցանկացած անձ համարվում է հաշմանդամ, որ հաշմանդամներս ունեն առողջ քաղաքացիներին հավասար իրավունքներ, ուստի և նրանց համար անհրաժեշտ է ստեղծել հասարակական կյանքին լիարժեք կերպով մասնակցելու հավասար հնարավորություններ: 1993 թ. ՍԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած «Հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովման ստանդարտ կանոններ»<sup>3</sup> փաստաթրություն հաշմանդամություն հասկացությունը մեկնաբանվում է որպես կոնկրետ անձի սահմանափակություն, որը նրան խոչընդոտում կամ զրկում է հասարակության մեջ նորմալ դերակատարման հնարավորությունից՝ անձի տարիքի, սեռի, սոցիալական ու մշակութային գործոնների հաշվառմամբ:

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է մեր պետության սոցիալական բնույթը<sup>4</sup>, «Ազգային անվտանգության ռազմավարությունը» բովանդակում է սոցիալական պետության կերտման ու սոցիալական արդարության արմա-

<sup>1</sup> Տես Փասլարու Բուզանդ, Հայոց պատմություն (քարգմանությունը և ծանրագրությունները Ստ. Մալխասյանցի): Ե., 1987, էջ 349–351:

<sup>2</sup> Տես Մշիքար Գոշ Դատաստանագիրը: Ե., 2001:

<sup>3</sup> Տես <http://www.un.org/russian/documents/convents/disabled.htm>:

<sup>4</sup> Տես «ՀՀ Սահմանադրություն», հմու. 1: Ե., 2005:

տավորման ուղենիշները<sup>5</sup>: Իսկ սոցիալական պետության կարևոր խնդիրներից է հաշմանդամների սոցիալական պաշտպանության ապահովումը:

Այս առումով կարևոր նորմատիվ ակտ է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է «հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմունքները, հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների և ընդունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայմանների և արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույժները»<sup>6</sup>: Հաշմանդամների սոցիալական պաշտպանությունը այն տնտեսական, սոցիալական ու իրավական միջցոցառումների համակարգն է, որոնցով ապահովում են հաշմանդամների կենսագործունեության սահմանափակությունը հաղթահարելու ու փոխհատուցելու պայմանները, և որոնք նպատակառուղղված են նրանց համար ստեղծելու հասարակական կյանքին մասնակցության՝ մյուս քաղաքացիների հնարավորություններին հավասար հնարավորություններ:

Հաշմանդամների սոցիալական պաշտպանության համակարգում կարևոր դեր ունի բժշկասոցիալական փորձաքննությունը, որի ժամանակ գնահատվում է կենսագործունեության սահմանափակությունը՝ պայմանավորված հիվանդության, խեղման կամ վնասվածքի հետևանքով օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարումներով, սահմանվում է հաշմանդամության խումբը կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակը, որոշվում են կենսագործունեության սահմանափակության աստիճանը, հաշմանդամի վերականգնման ու սոցիալական պաշտպանության տեսակները, հաշմանդամության ժամկետը, պատճառական կապը, մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանը, մշակվում և հաստատվում է հաշմանդամի անհատական վերականգնողական ծրագիրը, երկարածվում է ժամանակավոր աշխատունակության թերթիկի ժամկետը<sup>7</sup>:

Գործող կարգի համաձայն՝ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնում են այդ ոլորտում իրավասու պետական մարմինները՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կառուցվածքային ստորաբաժանումները (փորձաքննական բաժին, վերականգնողական ծրագրերի բաժին) և տարածքային բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովները:

#### **ՀՀ Կառավարությունը սահմանել է փորձաքննության ժամանակ օգտա-**

<sup>5</sup> Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդիսավորությունը, 2007, էջ 27:

<sup>6</sup> «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» 1993 թ. ապրիլի 14-ի հմ. ՀՕ-57-ՀՆ-0800-1 ՀՀ օրենքը («ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1993 թ., հմ. 10):

<sup>7</sup> Տես «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2006 թ. մարտի 2-ի հմ. 276-Ն որոշումը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2006, հմ. 16 (471)):

գործվող դասակարգիչներ և հաշմանդամության խմբերին դասման շափանիշներ: Հաշմանդամության պատճառ կարող են լինել՝ մանուկ հասակում ձեռք բերված հիվանդությունը, ընդհանուր հիվանդությունը, աշխատանքային խեղումը կամ վնասվածքը, զինվորական ծառայության ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը, և այլ<sup>8</sup>: 18 տարին լրացրած և հաշմանդամ ճանաշված անձին տրվում է հաշմանդամության խումբ (1-ին, 2-րդ կամ 3-րդ), իսկ մինչև 18 տարեկան երեխաներին՝ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ:

Հաշմանդամության պատճառական կապը սահմանվում է հաշմանդամություն առաջացնող ախտաբանական վիճակի և այդ ախտաբանական վիճակի պատճառի (անմիջական կապ կամ հետևանք) վերաբերյալ փաստարդիքում եղած տվյալների հիման վրա: Փորձաքննությամբ որոշվում է նաև մահվան պատճառական կապը արտադրական խեղնան, մասնագիտական հիվանդության, մարտական գործողություններին մասնակցելու, զինվորական ծառայության և այլ հանգամանքների հետ:

Գործակալության անմիջական մասնակցությամբ կատարելագործվում է հաշմանդամների սոցիալական պաշտպանության ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի համակարգը: Այսպես. Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմանը իշեցվել է անժամկետ հաշմանդամության սահմանման շեմը: Եթե այն նախկինում 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների համար օրենքով սահմանված էր 10 տարի, իսկ 3-րդ խմբի համար՝ 15 տարի ժամկետով, ապա ներկայումս հաշմանդամությունը կարող է սահմանվել անժամկետ, եթե անձին հաշմանդամության խումբ է սահմանվում առնվազն 7 տարվա դիտարկումից հետո:

Ե՞վ առաջին անգամ վերափորձաքննության ենթարկվող անձինք, և՝ վերափորձաքննող հաշմանդամները նախկինում դիմումի հետ հանձնաժողովին ներկայացնում էին նաև բուժում իրականացրած բժշկական կազմակերպության ուղեգիրը (88 ձև): Ըստ նոր կարգի՝ վերափորձաքննության ենթարկվող անձինք ազատվում են ուղեգիր ներկայացնելու պարտականությունից, քանի որ այն պարունակում է քաղվածքներ բժշկական փաստարդերից, որոնց բնօրինակները ներկայացնում են հիվանդները: Այս փոփոխության շնորհիվ վերափորձաքննության ենթարկվող անձինք ստիպված չեն դիմելու միջանկյալ օրակի, և չի ոտնահարվում պետական մարմնին ինքնուրույն դիմելու նրանց իրավունքը:

Փոփոխության է ենթարկվել նաև բժշկացիալական փորձաքննական հանձնաժողովի որոշումը վերադասության կարգով բողոքարկելու ժամկետը: Նախկինում նախատեսված էր բողոքարկման մեկամսյա ժամկետ, 2005 թ. այն երկարացվել է մինչև 6 ամիս:

Բժշկացիալական փորձաքննության համակարգում տարիներ շարունակ չլուծված խնդիր էր հանրապետության հեռավոր և սահմանամերձ գյուղերի

<sup>8</sup> Այդ մասին ավելի հանգամանորեն տես «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը:

սոցիալապես առավել անապահով բնակչության համար բժշկասոցիալական փորձաքննության մատչելիության ապահովումը: 2004 թվականից բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովները նշված տարածքներում կազմակերպում են արտագնա խորհրդատվական բժշկասոցիալական փորձաքննություններ:

Այդ հանձնաժողովների գործունեության նկատմամբ սահմանվել է խիստ հսկողություն: Պարբերաբար անցկացվում են արտագնա ընդլայնված խորհրդատվական բժշկասոցիալական փորձաքննություններ, քննարկվում են հսկողական բննությունների ժամանակ հայտնաբերված սխալ որոշումներն ու վերափորձաքննությունների ստուգումների արդյունքները, լուծվում են ամենամյա խորհրդակցությունների ժամանակ բարձրացվող հարցերը:

Զարգացած երկրներում հանրության ուշադրության կենտրոնում է հաշմանդամների վերականգնման գործը: Վերականգնողական բնագավառը, իր ձեռքբերումներով հանդերձ, պահանջում է հաշմանդամների վերականգնման մեթոդներին և ուղիներին վերաբերող շատ բարդ խնդիրների լուծում՝ բուժկենսաբանական, սոցիալական և անհատական հատկությունների հաշվառմամբ:

«Վերականգնումը» ակտիվ գործնքաց է, որի նպատակն է հասնել իշխանության, խեղման կամ վնասվածքի հետևանքով առաջացած փունկցիայի խանգարման լիիվ վերականգնմանը, իսկ եթե այդ նպատակն իրական չէ, ապա գոնե հասնել հաշմանդամների ֆիզիկական, հոգեկան ու սոցիալական հճարափորտյունների շափակոր օգտագործմանը, ինչն առավել անհրաժեշտ է հաշմանդամներին հասարակությանն ինտեգրելու համար՝ նպատակ ունենալով հաշմանդամի ֆինանսական, տնտեսական, սոցիալական անկախության ապահովումը: Կարևորվում է հաշմանդամներին առավելագույն ֆիզիկական, հոգեկան, սոցիալական, տնտեսական ու մասնագիտական լիարժեքության վիճակի հասցնելը:

Օրպես հաշմանդամի օրգանիզմի ֆունկցիայի վերականգնման դինամիկ հսկողության մերոդ բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովները պարբերաբար կատարում են վերափորձաքննություն՝ հաշմանդամի առողջության և աշխատունակության վիճակի մեջ տեղի ունեցած այս կամ այն փոփոխությունը ժամանակին հայտնաբերելու և այդ ցուցանիշների հիման վրա հաշմանդամության մեկ այլ խումբ սահմանելու և հաշմանդամի համար նոր անհատական վերականգնողական ծրագիր կազմելու նպատակով:

Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների եզրակացությունը հնարավորություն է տալիս լուծելու թշչակավորման ճիշտ որոշման և հաշմանդամների՝ աշխատանքի նպատակային տեղափորման խնդիրները: Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների եզրակացությանը հաշմանդամին տեղափորում են այնպիսի աշխատանքի, որտեղ նա կկարողանա աշխատել առավելագույն արդյունավետությանը՝ առանց իր առողջությանը վնաս հասցնելու:

Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունը, բացի իր հիմնական գործառույթների կատարումից, մեծ ուշա-

դրույթուն է դարձնում բնակչության սոցիալ-իրավական դաստիարակության հարցերին: Ոխտի նա իր 25 տարածքային մարմինների և 3 մասնագիտացված հանձնաժողովների միջոցով պետական և մասնավոր հեռուստաալիքներով, ուղիղով և մամուլում պարբերաբար լուսաբանում է բժշկասոցիալական փորձաքննության կարգը, կիրառվող դասակարգիներն ու հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշները, բժշկասոցիալական փորձաքննության բնագավառի վերաբերյալ օրենսդրությանը և հաշմանդամների վերականգնողական միջոցառումներին նվիրված հարցերը: Գործակալության պաշտոնական ինստերնետային կայքում գետեղված են ոլորտի հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը, ներկայացվում են ոլորտի վերաբերյալ քաղաքացիների կողմից հաճախ տրվող հարցերը և դրանց պատասխանները: Այդ տեղեկույթը պարբերաբար քարմացվում է, կայքն ունի հետադարձ կապի հնարավորություն<sup>9</sup>:

Գործակալությունում տարածքային մարմինների դեկավարների ու հանձնաժողովի մասնագետների մասնակցությամբ կազմակերպվում են ամենամսյա խորհրդակցություններ, որոնց ժամանակ քննարկվում են գործակալության խնդիրները, տարածքային մարմինների ու կառուցվածքային ստորաբաժանումների ընթացիկ գործունեությունը, ներկայացվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով իրականացվող պետական քաղաքականությունը՝ ուղղված հաշմանդամների բժշկասոցիալական փորձաքննության իրականացմանը, հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագրերի մշակմանը, վերականգնողական միջոցառումների կազմակերպմանը:

Բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունը նաև ակտիվ կերպով մասնակցում է Հայաստանի Հանրապետության Վարչապետի որոշմամբ 2008 թ. փետրվարին ստեղծված՝ հաշմանդամ անձանց հարցերով զրադարձ պահպանի հանձնաժողովի աշխատանքին: Մեր գործակալության մասնագետները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության բժշկասոցիալական փորձաքննության կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում մասնագիտական և ներողական օգնություն են ցույց տալիս ՀՀ համապատասխան ծառայություններին:

Միջազգային ասպարեզում ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունը համագործակցում է ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (TSG) ծրագրի և Կրթության զարգացման ակադեմիայի (AED) մարդկային և հաստատութենական ներուժի զարգացման ծրագրի հետ:

Մասնավորապես՝ ԱՄՆ-ի ՄԶԳ Հայաստանի Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագրի միջոցներով բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունում ձևավորվել է հաշմանդամների տվյալների հաշվառման շտեմարան, ավտոմատացվել է բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունը և այլն:

<sup>9</sup>Տես <http://www.hhbsp.am>:

յան գործերի վարման աշխատանքը, ստեղծվել են տվյալների հանրապետական և տեղային ցանցեր:

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության համակարգում անցած տարիներին եղել է շոշափելի առաջընթաց, սակայն առկա են նաև խնդիրներ, որոնց լուծումն անշուշտ կնպաստի հաշմանդամ քաղաքացիների սոցիալական պաշտպանության մակարդակի բարձրացմանը: Մեր կարծիքով՝ դրանցից առավել կարևորներն են.

– բժշկասոցիալական փորձաքննության ոլորտի մասնագետների որակավորման բարձրացումը, այդ թվում՝ փորձի փոխանակմամբ, համալրում նոր մասնագիտություններով (հոգեբան բժիշկներ, վերականգնողաբաններ և սոցիալական աշխատողներ),

– ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործումը,

– բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչների ու հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշների համապատասխանեցումը Եվրոպական դասակարգիչներին ու չափանիշներին,

– բժշկասոցիալական փորձաքննության օբյեկտիվության և որակի բարձրացման նպատակով գործակալությունում ախտորոշչ բաժնի ստեղծումը,

– անհրաժեշտության դեպքում կադրերի ժամանակին փոխարինման նպատակով կադրային բանկի ստեղծումը,

– վերականգնողական պետական ծառայության ստեղծումն ու զարգացումը,

– հաշմանդամների վերականգնման բազային ծրագրի կազմումն ու հաստատումը, վերականգնողական միջոցառումների վերահսկելիության ու հետադարձ կապի ապահովումը:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունը զարգանում է սոցիալական պետության կայացման ուղիով: Այդ ասպարեզում կարևոր դեր ունի հաշմանդամների սոցիալական պաշտպանական համակարգը, որի բաղկացուցիչ տարրերից է բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունը: Միայն համակարգի բոլոր տարրերի ներդաշնակ ու համաշափ զարգացման դեպքում կարելի է ակնկալել զգայի հաջողություններ: ՈՒստի բժշկասոցիալական փորձաքննության գործակալության հետագա զարգացումը ևս բարեփոխումների կարևոր խնդիրներից մեկն է:

## ДЕЯТЕЛЬНОСТЬ АГЕНТСТВА МЕДИКО-СОЦИАЛЬНОЙ ЭКСПЕРТИЗЫ РА В КАЧЕСТВЕ КОМПОНЕНТА СИСТЕМЫ СОЦИАЛЬНОЙ ЗАЩИТЫ ИНВАЛИДОВ

М. Г. ВАНЯН, Начальник Агентства медико-социальной экспертизы РА

### РЕЗЮМЕ

Социальная защита инвалидов является важной задачей общества и государства, условия и порядок решения которой определены в соответствующих основополагающих правовых и программных документах:

Конституция РА определяет социальный характер государства, а Стратегия национальной безопасности – направления построения социального государства и укоренения социальной справедливости.

В соответствии с Законом РА «О социальной защите инвалидов в Республике Армения» система социальной защиты инвалидов состоит из мероприятий экономического, социального и правового характера, в осуществлении которых особое место занимает определенный Правительством РА государственный орган – агентство медико-социальной экспертизы Министерства труда и социальных вопросов РА. На основе оценки ограничений, обусловленных стойкими нарушениями функций организма вследствие болезни,увечья или повреждения, агентство определяет группу инвалидности, а также виды реабилитации инвалидов и их социальной защиты.

Агентство осуществляет целенаправленную деятельность по улучшению качества предоставляемых услуг, совершенствованию законодательства в данной сфере, сотрудничает с международными организациями.

Однако для решения проблем инвалидов и инвалидности необходимо концептуальное усовершенствование законодательства и системы управления в данной сфере с учетом передового международного опыта.

## THE ACTIVITY OF THE RA MEDICAL-SOCIAL EXPERTISE AGENCY AS A COMPONENT OF THE SYSTEM OF INVALIDS' SOCIAL PROTECTION

*M. G. VANYAN, Head of the RA Medical-Social Expertise Agency*

### SUMMARY

Invalids' social protection is an important objective of the society and state, and the terms and rules to meet it are fixed in the corresponding fundamental legal and program documents: the RA Constitution defines the state's social character, but the National Security Strategy points out the directions of building social state and underpinning social justice.

In conformity with the RA Law «On the social protection of invalids in the Republic of Armenia» the system of invalids' social protection consists of economic, social and legal measures, in implementation of which the state body established by the RA Government – the Medical-Social Expertise Agency of the RA Ministry of Labor and Social Affairs, takes a special place. Based upon the analysis of assessing limitations conditioned by permanent disorders of the organism functions as a result of a disease, mutilation or injury, the agency determines the disability group, as well as types of invalids' rehabilitation and their social protection.

The agency implements a targeted activity on improving quality of services, enhancing the legislation in this sphere, and cooperates with international organizations.

However, for solving problems of invalids and disability it is necessary to conceptually improve the legislation and management system in this sphere taking into consideration the leading international experience.

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ՝  
ՈՐՊԵՍ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ  
Ա. Ն. ՍԱՐԳՍՅԱՆ, զնապետ, ՀՀ ՊՆ Զինծառայողների սոցիալական  
պաշտպանության վարչության պետի փեղակալ**



Զինվորական-սոցիալական աշխատանքը որպես զինվորական կառավարման մարմինների գործունեության դրստ ձևավորվել է 20-րդ դարի 90-ական թվականներին: «Զինվորական-սոցիալական աշխատանքի գլխավոր նպատակն է ստեղծել նորմալ սոցիալական պայմաններ, որոնցում զինծառայողները, քաղաքացիական անձնակազմը կկարողանան արդյունավետ կերպով կատարել իրենց պարտականությունները»<sup>1</sup>: Ուստի դա իրավական ակտերով սահմանված այն քաղաքական, իրավական, տնտեսական, դաստիարակչական, կրթական, հոգեբանական և այլ միջոցառումների համակարգն է, որոնք ուղղված են զինծառայողների, զինվորական ծառայությունից արձակված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալ-տնտեսական իրավունքների ու երաշխիքների իրականացման, նրանց սոցիալական պաշտպանության ապահովմանը: Զինվորական-սոցիալական աշխատանքը ԶՈՒ-ի քաղոյահոգեբանական ապահովման համակարգի կարևոր քաղաքիչներից մեկն է<sup>2</sup>, քանի որ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական խնդիրների լուծումը նրանց արժանապատիվ կեցության ապահովման էական պայմանն է, որն էլ իր հերթին հիմքային նախադրյալ է կյանքի համար հավանական մեծ վտանգ պարունակող զինվորական ծառայության քարոյական և հոգեբանական շարժադիրավորման:

Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության համակարգի իրավական հիմքը ՀՀ Սահմանադրությունն է, որի դրույթներից բխում է, որ մարդու արժանապատիվ կյանքն ու ազատ զարգացումն ապահովող պայմանների ստեղծումը միայն քաղաքացու անձնական գործը չէ, այլ համապետական խնդիր է:

Զինվորական-սոցիալական աշխատանքը իրականացվում է ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմի ժամանակ: Այն կատարում են պետական իշխանության ու զինվորական կառավարման մարմինները, իրամանատարները, զինված ուժերի սոցիալական կառույցները, հասարակական կազմակերպությունները:

<sup>1</sup> «Настольная книга воинского психолога, офицера по организации общественно-государственной подготовки и военно-социальной работы». М., 2004, с. 235.

<sup>2</sup> Տես «ՀՀ ՊՆ Պաշտպանության նախարարի 2004 թ. սեպտեմբերի 17-ի հմ. 907 հրամանը»:

Զինծառայողը քաղաքացիական հասարակության լիարժեք անդամ է և ունի բոլորին հավասար իրավունքներ: Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան սահմանափակվում են նրա միայն այն իրավունքները, որոնց իրացումը կարող է սպառնալ պետության անվտանգությանը: Փոխարենը՝ զինծառայողների վրա դրված հատուկ պարտականությունների հաշվառմանը, օրենքով սահմանված կարգով նրանց վերապահվում են լրացուցիչ սոցիալական իրավունքներ ու երաշխիքներ:

Այսպիսով՝ զինվորական-սոցիալական աշխատանքը տարածվում է զինծառայողների կենսագործունեության բոլոր ոլորտների վրա և ներառում է.

– զինծառայողների գործառության պարտականությունների կատարման համար անհրաժեշտ սոցիալ-տնտեսական և իրավական պայմանների ստեղծումը,

– զինծառայողների, զինծառայությունից արձակված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը,

– բոլոր կատեգորիաների զինծառայողների իրավական դաստիարակությունը:

Զինվորական-սոցիալական աշխատանքի կատարումն անհնար է առանց զինվորական կոլեկտիվներում և զորամասերի տեղակայման վայրերում սոցիալական իրավիճակի ուսումնասիրության և դրա զարգացման կանխատեսման, ինչպես նաև զինծառայողների սոցիալական պաշտպանվածության ռեալ մակարդակի որոշման: Զինվորական կառավարման մարմինները պետք է մշտապես ունենան օբյեկտիվ տեղեկություններ զինվորական կոլեկտիվի սոցիալական խնդիրների մասին: Դրանք հարկավոր են ձեռնարկվող միջոցառումների արդյունավետությունը գնահատելու, սոցիալական լրավածության աճնանը նպաստող գործոնները վաղ փուլերում բացահայտելու և հնարավորինս չեզոքացնելու համար: Ավելին, ռեալ սոցիալական վիճակի ուսումնասիրությունը ոլորտի կատարելագործման հիմքն է: Փորձը ցույց է տալիս, որ սոցիալական խնդիրների մեծ մասը կարող է լուծվել անմիջապես տեղում՝ զորամասում, ստորաբաժանումում, անհրաժեշտ է միայն ժամանակին բացահայտել դրանք և ճիշտ գնահատել ստեղծված իրավիճակը:

Այս առումով ՀՀ ԶՈՒ-ի արդիական խնդիրներից է սոցիալական իրավիճակի մասին տվյալների բազայի ստեղծումը: Ընդ որում, նպատակահարմար է ստեղծել տվյալների երկու բազա, որոնցում, համապատասխանաբար, ներառված լինեն՝

1. զինծառայողների սոցիալական պաշտպանվածության ռեալ մակարդակը բնութագրող տվյալները և այդ ոլորտում առկա հիմնախնդիրները,

2. զինծառայողների, զինծառայությունից արձակված անձանց ու նրանց ընտանիքների անդամների սոցիալական վերականգնմանը և ինտեգրմանը, սոցիալական պաշտպանության այլ խնդիրներով գրաղվող կազմակերպությունների վերաբերյալ տվյալները:

Զինվորական-սոցիալական աշխատանքի կարևոր խնդիրներից է համագործակցությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Զինծառայողների սոցիալական պաշտպանության գործում մեծ է նաև հասարակական կազմակերպությունների դերը, հատկապես՝ տեղեկատվության և վերահսկողության առումներով:

Զինվորական-սոցիալական աշխատանքում բացառիկ կարևորություն ունի զինծառայողների իրավական դաստիարակությունը: Իրավական դաստիարակությունը նպատակաուղղված է մարդկանց մեջ խոր և հաստատուն իրավական գիտելիքների, բարձր իրավական կուլտուրայի, սովորույթների և հնտությունների, բարձր մակարդակի իրավագիտակցության և օրինապահ վարքի անհրաժեշտության գիտակցման ձևավորմանը:

Զինվորական-սոցիալական աշխատանքի շրջանակներում իրավական դաստիարակության անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ զինծառայողների սոցիալական պաշտպանության ոլորտում գլխավոր և առավել բարդ խնդիրը ոչ այնքան նրանց իրավունքների օրենսդրական ապահովումն է, որքան իրավական ակտերի համապատասխան ընկալումը՝ կախված զինծառայողների իրավական պատրաստության, իրավական գիտակցության և իրավական կուլտուրայի մակարդակից: Հարկ է նշել, որ անձնակազմի իրավական իրագեկման արդյունավետությունն էավես մեծանում է այն դեպքում, եթե այդ աշխատանքում ներգրավվում են իրավաբանական կրություն ունեցող զինվորականներ, իրավապաշտպան մարմինների աշխատողներ: Զինծառայողներին և համակարգում ընդգրկված քաղաքացիական անձանց՝ իրենց իրավունքների, պարտականությունների վերաբերյալ անհատական կամ խմբային իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու նպատակով անհրաժեշտ է զորամասերում ստեղծել տեղեկատվական-խորհրդատվական կետեր: Ո՞Դ Զինված ուժերում այդ պրակտիկան արդեն գործում է: Պատերազմական պայմաններում տեղեկատվական-խորհրդատվական կետերի հաստիքացուցակում նախատեսված է 3 հաստիքային միավոր. կետի պետ (սպա), խորհրդատու (սպա), մասնագետ (քաղաքացիական անձ): Տեղեկատվական-խորհրդատվական կետի ընդհանուր դեկավարումը դրված է զորամասի հրամանատարի դաստիարակչական աշխատանքի գծով տեղակալի վրա<sup>3</sup>: Նշանատիպ կետեր կան նաև տարածքային զինկոմիսարիատներում՝ գորացրվածներին, վետերաններին սպասարկելու նպատակով:

Որպես գործունեության տեսակ՝ զինվորական-սոցիալական աշխատանքը բաղկացած է երեք փուլից:

1. զինվորական-սոցիալական աշխատանքի նպատակների և առաջադրանքների հստակ ձևակերպման փուլ: Զինվորական կառավարման մարմինների գործունեության այդ փուլն սկսվում է զինվորական-սոցիալական աշխատանքի դեկավար փաստարդերի, ինչպես նաև զինծառայողների սոցիալական պաշտպանության նորմատիվ-իրավական ակտերի ուսումնասիրությամբ: Բացի այդ, ուսումնասիրվում են նաև զորամասի ռեալ իրավիճակը, զինծառայողների և

<sup>3</sup>Տես «Настольная книга воинского психолога, офицера по организации общественно-государственной подготовки и военно-социальной работы». М., 2004, с. 244:

նրանց ընտանիքների անդամների, գորամասի տեղակայման շրջանի բնակչության սոցիալական պաշտպանվածության առկա մակարդակը, հիմնախնդիրները: Գնահատվում են նաև զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների խնդիրները լուծելու համար տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հնարավորությունները,

2. զինվորական-սոցիալական աշխատանքի ոլորտի մասնագիտական գիտելիքների արժատավորման և հմտությունների ձևավորման փուլ: Այս փուլում կատարվում են հրահանգավորութական աշխատանքներ, ուսումնասիրվում է զինվորական-սոցիալական աշխատանքի առաջավոր փորձը (ներառյալ՝ միջազգային), ստեղծվում է ուսումնանյութական բազա, զինվորական-սոցիալական աշխատանքի կազմակերպիչներն ապահովվում են անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերով, տեղեկատվական ու մերողական գրականությամբ,

3. զինվորական-սոցիալական աշխատանքի պլանավորման և կարգարման փուլ: Այս փուլում պլանավորվում են զինվորական-սոցիալական աշխատանքի հեռանկարային և մեկամսյա կտրվածքով ընթացիկ համալիր միջոցառումները՝ կորպուսի, բրիգադի, գնդի մակարդակով: Գումարտակում (դիվիզիոնում) հեռանկարային և մեկամսյա զինվորական-սոցիալական աշխատանքը պլանավորվում է առանձին միջոցառումների ձևով: Վաշտերում կազմակերպվում են զինծառայողների, համակարգում ընդգրկված քաղաքացիական անձանց իրավունքների, պարտականությունների և արտոնությունների գծով պարապմունքներ: Տվյալ փուլը ներառում է նաև այս կամ այն միջոցառման կատարողների ընտրություն և ժամկետների սահմանում: Այս փուլի անբաժանելի մասն է կազմում նաև աշխատանքի արդյունքների նկատմամբ վերահսկողությունը:

Պատերազմի ժամանակ զինվորական սոցիալական աշխատանքն ունի որոշակի առանձնահատկություններ: Բացի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալ-տնտեսական իրավունքներն ու երաշխիքներն ապահովելուց, այն ներառում է անհրաժեշտ սոցիալ-հոգեբանական օգնություն նաև մարտական գործողությունների գոտիներում խաղաղ բնակչության, ստրեսային իրավիճակներում հայտնված, վիրավոր և հոգեխոցված զինծառայողներին, ինչպես նաև հակառակորդի՝ գերի ընկած զինծառայողներին և բնակչությանը:

## ВОЕННО-СОЦИАЛЬНАЯ РАБОТА КАК СОСТАВЛЯЮЩАЯ МОРАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ ВООРУЖЕННЫХ СИЛ

А. Н. САРГСЯН, полковник, Заместитель начальника  
управления социальной защиты военнослужащих МО РА

### РЕЗЮМЕ

Главная цель военно-социальной работы – создание нормальных социальных условий, при которых военнослужащие и гражданский персонал смогут эффективно выполнять свои обязанности. Военно-социальная ра-

бота – это система определенных правовыми актами политических, правовых, экономических, образовательных, воспитательных, психологических и других мероприятий, осуществляемых в целях обеспечения реализации социально-экономических прав и гарантий военнослужащих и лиц, уволенных с военной службы, членов их семей, а также их социальной защиты.

Военно-социальная работа является важным компонентом системы морально-психологической работы, поскольку решение социальных проблем военнослужащих и членов их семей является существенным условием обеспечения их достойной жизни, что в свою очередь является базовой предпосылкой для моральной и психологической мотивации воинской службы и правомерного поведения.

Военно-социальная работа проводится с учетом особенностей как в мирное, так и в военное время в три этапа – формулировка целей и задач, укоренение профессиональных знаний и навыков, планирование и выполнение.

## MILITARY-SOCIAL WORK AS A CONSTITUENT OF MORAL-PSYCHOLOGICAL SECURITY OF THE ARMED FORCES

A. N. SARGSYAN, Colonel, Deputy Head of the Servicemen's Social Protection Board  
of the MOD, RA

### SUMMARY

The ultimate goal of military-social work is the creation of normal social conditions under which servicemen and civil personnel will be able to efficiently perform their duties. Military-social work is a system of political, legal, economic, educational, training, psychological and other measures determined by legal acts and being implemented to ensure the fulfilment of social-economic rights and guarantees of servicemen and persons discharged from military service, their family members, as well as their social protection.

Military-social work is an important constituent of the moral-psychological work system as the solution of social problems of servicemen and their family members is an essential condition to provide life of dignity, which in its turn is a basic premise for moral and psychological motivation of military service and good behavior.

Military-social work is carried out taking into account the peculiarities both in peace and wartime in three stages – statement of goals and problems, consolidation of professional knowledge and skills, planning and implementation.

**ՊԱՇՏՈՎԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.  
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ-ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**



**ՀՀ Պաշտովանության նախարար Սեյրան Օհանյանը  
բնակարաններ է հանձնում զինծառայողներին.  
Երևան, 2009 թ. հունիսի 19**




ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը  
պարտադիր ժամկետային գինծառայողներին ծառայողական  
պարտականությունները կատարելիս ցուցաբերած խիզախության համար  
պարզեցնելու համար պարզաբանում է գերատեսչական մեղալներով.  
Երևան, 2009 թ. հունիսի 1



Դրվագ ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի  
և Համահայկական միջազգային երիտասարդական կենտրոնի նախաձեռնությամբ  
Արցախյան ազատամարտի մասնակցի համար կառուցված առանձնատան  
քացման արարողությունից: Կենտրոնում՝ ՀՀ ԶՈՒ-ի հոգևոր առաջնորդ  
Տեր Վերանես Եպիսկոպոս Արքահամյանը.  
Տավուշի մարզ, 2009 թ. հունիսի 28



ՀՀ պաշտպանության նախարարության նորակառույց վարչական համալիրի  
ճաշարանում ընդմիջման ժամանակ



Չինադառայողների բուժսպասարկումը ՀՀ ՊՆ նոր վարչական համալիրի  
մասնագիտացված բժշկական կետում



ՀՀ ՊՆ «Լենինային Հայաստան» հանգստյան տուն – առողջարանը Դիլիջանում



Զինծառայողների հանգստի կազմակերպում ՀՀ ԶՈՒ-ի զորամասերից մեկում

## ԶԻՒԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Գ. Ե. ՄԻՐԶՈՅԱՆ, մանկավարժական գիրուրյունների թեկնածու,  
«Զինվորի մայր» ՀԿ նախագահ, Ա. Է. ՀՈՎԱՆՆՅԱՆ, «Զինվորի մայր»  
հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող



«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման առաջնահերթություններից են քաղաքացիական հասարակության ձևավորումը, հասարակության համախմբումը քաղաքական, տնտեսական ու սոցիալական զարգացման ազգային ծրագրերի իրազործման նպատակով։ Հիմնարար մոտեցումն է պետության կառավարմանը ոչ կառավարական կազմակերպությունների, հասարակության լայն շրջան։

Եների մասնակցությունն ապահովելը»<sup>1</sup>։ Այս դրույթին համահունչ են «Զինվորի մայր» հասարակական կազմակերպության նպատակները և պահանջները։

«Զինվորի մայր» կազմակերպությունն ստեղծվել է երկրի համար ժանր ժամանակաշրջանում՝ 1991 թվականին, երբ նոր էին ձևավորվում անկախ պետությունն ու ազգային քանակը։ Կազմակերպության առաքելությունը ազգային քանակի գիննառաջողներին և նրանց ընտանիքներին անդամներին իրավական ու սոցիալական աջակցության ցուցաբերումն է։

Կազմակերպությունն իր առաքելությունից բխող նպատակներին հասնելու համար կարևոր է համարում գիննառաջողներին և նրանց ընտանիքների անդամներին աջակցության ծրագրերի իրականացումը։ Սակայն լրիդելով միայն այս խնդիրը՝ կազմակերպությունը կիեռանար իր առաքելությունից, քանի որ աջակցության ծրագրերի իրականացումը պրոբլեմի իրավիճակային լուծում է, մինչդեռ մեր նպատակն է բարենպաստ իրադրության ձևավորումը։ Ուստի կազմակերպության մյուս կարևոր խնդիրը մասնակցությունն է գիննառաջողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովման քննազարդումների համակարգի կատարելագործմանը։

Զիննառայութերին և նրանց ընտանիքների անդամներին սոցիալական և իրավական աջակցության նպատակով կազմակերպությունը միշազգային և այլ դրույթ կազմակերպությունների ու բարերարների օժանդակությամբ իրականացնում է նյութական ու հոգեբանական աջակցության, կրթական, հանգստի կազ-

<sup>1</sup> «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ»։ «ՀԲ», 2006, հն. 2:

մակերպման, բուժապահովման, իրավական դաստիարակության և այլ ծրագրեր:

Զգալի է կազմակերպության ներդրումը զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովման բնագավառի իրավական համակարգի կատարելագործման ոլորտում: Կազմակերպությունը մշակել և համապատասխան պետական մարմիններին է ներկայացրել նշված իրավական համակարգի բարեփոխմանն ուղղված բազմաթիվ առաջարկություններ, որոնց մեծ մասն արտացոլվել է համապատասխան իրավական ակտերում: Անշուշտ, այս գործում էական նշանակություն ունի մեր առօրյա աշխատանքը, որի ընթացքում ձեռք բերված տեղեկույթը, ի հայտ բերված պրոբլեմների քննարկումները մեծապես նպաստում են այդ առաջարկությունների ծևակերպմանը և համակարգմանը:

Որպես այդ ոլորտի խնդիրների լուծմանը կազմակերպության մասնակցության օրինակ կարելի է նշել զոհված ազատամարտիկների երեխաների ուսման վարձը՝ ՀՀ պետական բյուջեի միջոցներից վճարելու մասին բուհական ընդունելության կարգում փոփոխությունը, որի շնորհիվ սոցիալապես խոցելի այս խնդիրի երեխաներն ավելի լայն հնարավորություն ստացան իրացնելու կրթության իրենց իրավունքը: Կազմակերպությունը մասնակցել է «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն շանցած քաղաքացիների մասին»՝ ՀՀ օրենքի<sup>2</sup> մշակմանն ու ընդունմանը: Դրա շնորհիվ մեծ թվով հայ երիտասարդներ վերադարձել են Հայաստան, ինչը դրականորեն է ազդել Հայաստանի համար շատ կարևոր միջրացիոն հոսքների վրա<sup>3</sup>, իսկ այն անձինք, որոնք իրենց ապագան տեսնում են Հայաստանից դուրս, հենարավորություն ստացան արժանապատվությամբ ապրելու իրենց բնակության երկրում՝ որպես օրինապաշտ քաղաքացիներ:

Կարծում ենք, որ «Զինվորի մայր» կազմակերպությունը, հանձին իր նախագահի անդամակցելով՝ ՀՀ Պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդին, ավելի մեծ հնարավորություն է ստացել դրա շրջանակներում կատարվող աշխատանքի ու համագործակցության միջոցով արդյունավետ կերպով լուծելու իր խնդիրները, քանի որ այդ կառույցը համարում է Հայաստանում քաղաքացիական հասարակության ծևակորման ու զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների շահերի պաշտպանության կարևոր գործիք:

Ներկա փուլում կազմակերպությունը, փաստելով պաշտպանական բարեփոխումների շնորհիվ տեղի ունեցող դրական տեղաշարժը, կարևորում է հետևյալ սոցիալական խնդիրների լուծումը.

— պարտադիր զինվորական ծառայություն անցնող զինծառայողների ընտանիքների համար կոմունալ ծառայությունների դիմաց վճարների փոխհատուցման կամ գեղշնան համակարգի ներդրում,

<sup>2</sup> Են «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն շանցած քաղաքացիների մասին» 2003 թ. դեկտեմբերի 17-ի հմ. ՀՕ-8-Ն՝ ՀՀ օրենքը («ՀՀ Պաշտպանական տեղեկագիր», 2004, հմ. 6 (305)).

<sup>3</sup> Այդ մասին ավելի հանգամանորեն տես «Զինվորական ծառայությունը և միգրացիայի հիմնախնդիրները»: Ե., 2008 թ.:

— զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների՝ օրենքով ամբարգրված իրավունքների ու երաշխիքների ապահովման ռեալ մեխանիզմների ստեղծում, քանի որ դրանց մի զգալի մասը մինչ օրս բավարարվում է կամ մասնակիորեն, կամ ոչ պատշաճ որակով ու մակարդակով,

— նախկին զինծառայողների, հատկապես՝ հաշմանդամների համար հասարակությանը ինտեգրվելու և լիարժեք կյանքով այլրելու հնարավորությունների ստեղծում. այս շարքից թերևս կարելի է նշել հաշմանդամ դարձած այն նախկին զինծառայողներին, որոնք բնակվում են բարձրահարկ շենքների վերին հարկերում, ստորին հարկերում բնակարան հատկացնելու խնդիրը:

Մեր կարծիքով՝ այս և նմանօրինակ այլ խնդիրների լուծման համար դրական նշանակություն կունենա զինծառայողների և մարտական գործողությունների մասնակիցների սոցիալական խնդիրների լուծման համակարգված ձևերի կիրառումը, պատերազմի հաշմանդամներին՝ պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվող սոցիալական աջակցության հիմնադրամի ստեղծումը, վետերանների հանգստի կազմակերպումը: Վերջինս նաև կարելի է օգտագործել դաստիարակչական նպատակով, եթե վետերանների հանգստի կազմակերպման միջոցառումների մի մասն իրականացվի նրանց և զորակոչիկների հանդիպումների ձևով, որպեսզի զորակոչիկները հաղորդակից լինեն մարտական գործողությունների բովում ձեռք բերված հարուստ փորձին ու գիտելիքներին:

Ամփոփելով՝ նշենք, որ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական խնդիրների լուծումն ունի ոչ միայն զուտ մարդասիրական, այլև անվտանգային նշանակություն, քանի որ զգալի չափով պայմանավորում է զինվորական ծառայության և հայրենիքի պաշտպանության դրական շարժառիթափորումը՝ դրանով իսկ ձեռք բերելով համազգային կարևորություն և դառնալով ինչպես պետության, այնպես էլ հասարակության ու առանձին անհատների համատեղ աշխատանքի առարկա:

## **СОЦИАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ВОЕННОСЛУЖАЩИХ И ЧЛЕНОВ ИХ СЕМЕЙ С ТОЧКИ ЗРЕНИЯ ОБЩЕСТВЕННОЙ ОРГАНИЗАЦИИ**

*Г. Е. МИРЗОЯН, кандидат педагогических наук, Председатель общественной организации «Зинвори майр», А. Э. ОВНАНЯН, Координатор мероприятий общественной организации «Зинвори майр»*

### **РЕЗЮМЕ**

В соответствии со «Стратегией национальной безопасности Республики Армения» построение гражданского общества, участие в управлении государством широкой общественности, в том числе через неправительственные организации, в целях реализации национальных программ политического,

экономического и социального развития является одним из приоритетов национальной безопасности РА.

НПО «Зинвори майр» («Мать солдата»), чья миссияозвучна с данным положением, с момента основания (1991 г.) развивает свою деятельность в направлении решения двух взаимосвязанных проблем: оказание социальной и правовой помощи военнослужащим, лицам, уволенным с военной службы, и членам их семей и участие в совершенствовании правовой системы в этой сфере. Решение указанных проблем является не только гуманитарной, но и задачей национальной безопасности, в связи с чем должно стать предметом совместной деятельности государства, общества и каждого гражданина.

## SOCIAL PROBLEMS OF SERVICEMEN AND THEIR FAMILY MEMBERS IN TERMS OF PUBLIC ORGANIZATION

*G. Ye. MIRZOYAN, Candidate of Pedagogical Sciences, Chairman  
of the «Zinvori Mair» Non-Governmental Organization, A. E. HOVNANYAN,  
Activities Coordinator of the «Zinvori Mair» Non-Governmental Organization*

### SUMMARY

One of the priorities of the RA national security in accordance with the National Security Strategy of the Republic of Armenia is the formation of a civil society, participation of the general public in public administration, as well as through non-governmental organizations for implementing national programs of political, economic and social development.

Since the moment of its foundation (1991) the «Zinvori Mair» («Soldier's Mother») NGO, the mission of which is in harmony with the above-mentioned, has been developing its activity in direction of solving two interrelated problems: rendering social and legal assistance to servicemen, persons discharged from military service and their family members, as well as participating in the improvement of the legal system in this sphere. The solution of these problems is not only a humanitarian but also national security objective, and in connection with that it must become the subject of common activity of the state, society and every citizen.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ  
ՀԱՄԲՆԴԱՆՈՒՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ  
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՍԱՏՔԱՏՈՒՄ\***

**Հ. Ա. ՔՈԹԱՆՉՅԱՆ, ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական  
հելուազուրությունների ինստիտուտի պետ, Պաշտպանության նախարարի  
խորհրդական, քաղաքական գիլտուրությունների ղոկապոր (ՌԴ),  
հակասահարիկչության գծով փորձագետ (ԱՄՆ-ի Պաշտպանական  
ազգային համալսարան), Ռազմական գիլտուրությունների  
ռուսականացման ակադեմիայի իսկական անդամ**



Համբնդիանուր անվտանգության սկզբունքների վերանայման և համաշխարհային ճգնաժամի պայմաններում տեղի են ունենում անվտանգային միջավայրի սրընթաց փոփոխություններ: Դրանք թելադրում են Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության համակարգային իրագործման նկատմամբ պահանջների խատացում<sup>1</sup>, ինչպես նաև հայկական հասարակության

անվտանգ ժողովրդավարական զարգացման նպատակով նրա արդիականացումը որոշող մի շարք գործուների վերահմաստավորում: Հենց այդ համատեքստում է հարկավոր դիտարկել միջազգային և տարածաշրջանային գործընթացների զարգացման միջնաժամկետ հեռանկարների հաշվառմամբ Հայաստանի պաշտպանական անվտանգության ռազմավարական վերանայման նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի գործունեությունը:

Անվտանգային միջավայրի դիմանմիկայի ճիշտ գնահատման նախադրյալ է հայկական պետականության պատմության մեջ առաջին «Ազգային անվտանգության ռազմավարությունը» 2007 թ. գործողության մեջ նմելը: Ինչպես հայտնի է, այն մշակվել է ներկայիս Նախագահ պարոն Սերժ Սարգսյանի գլխավորությամբ գործող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից և փորձաքննություն անցել առաջատար միջազգային մասնագիտական կենտրոններում: Մոսկվայի, Վա-

\* Ձեկուցում ՀԱՊԿ-ի՝ «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը՝ որպես Կովկասյան տարածաշրջանում կայունության և անվտանգության գործոն» թեմայով ՀԱՊԿ-ի պատմության մեջ առաջին Կըր սեղանի նիստում, որը կայացել է Երևանում ս. թ. նոյեմբերի 24-ին:

<sup>1</sup> Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական քանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:

շինգտոնի և Բրյուսելի հետ մերոդաբանական համագործակցության նման ոչ տրիվիալ ձևաչափը փորձարկվել է որպես անվտանգության բնագավառում Հայաստանի և մեր գործընկերների ազգային շահերի գգայուն կողմերին վերաբերող, ընդամին՝ ոչ թե զուտ քաղաքական, այլ կերպափոխված՝ ակադեմիական, ձև ստացած կողմնորոշիչ ազդակների ու գաղափարների փոխանակման ռազմավարորեն արդյունավետ կապուղի, որը Հայաստանի համար նորություն էր: Հարկ է նշել այն ըմբռնումն ու հարգանքը, որոնք դրսենորեցին Մոսկվայի, Վաշինգտոնի և Բրյուսելի գործընկերները գլխավոր ազգային քաղաքական փաստաթղթի բովանդակությունը հնքնուրույնաբար մշակելու մեր իրավունքի և կամքի նկատմամբ: Մեր Պաշտպանության նախարարի այս նախաձեռնությունը հնարավորություն տվեց 2004–2006 թվականներին Հայաստանի քաղաքական մշակույթ ներքերելու միջգերատեսչական համագործակցության ոլորտում ամերիկյան անվտանգային քաղաքագիտության մերոդաբանական ձեռքբերումները և ազգային անվտանգության հասկացութային-տերմինաբանական մշակման գործում ուստաստանի գործընկերների կուտակած գիտակագմակերպական փորձը:

Ըստ Ազգային անվտանգության ռազմավարությամբ սահմանվող գերակայությունների՝ Հայաստանը, լինելով միջազգային անվտանգության նոր համակարգի, առաջին հերթին՝ դրա եվրոպական ու տարածաշրջանային հատվածների ձևավորման շահագրգիռ մասնակից, ձգտում է իր արտաքին անվտանգության ռազմավարությունն իրականացնելու քազմավեկտորության և ինտեգրման սկզբունքներով: ՈՒստի Հայաստանը հարաբերությունները կառուցում է գործընկերության հիմքի վրա՝ արդյունավետ փոխհարաբերություններ զարգացնելով տարածաշրջանում գործող այն բոլոր ուժերի հետ, որոնք շահագրգության մակարդակում հաղաղության և կայունության ամրապնդման գործում:

Սեր երկրի ինտեգրումը ենթադրում է նրա պատասխանատու ներգրավվածությունը միջազգային ասպարեզում տեղի ունեցող այն գործընթացներում, որոնք համահունչ են ազգային անվտանգության ոլորտում Հայաստանի որդեգրած սկզբունքներին ու հռչակած գերակայություններին: Ուստաստանի հետ ռազմավարական դաշինքի հարստացումը, Եվրոպայի խորհրդի և Եվրամիության ծրագրերի աջակցությամբ զարգացման եվրոպական ուղղությունը, ԱՍԴ-ի և Իրանի հետ հաշվեկշռված համագործակցությունը, ՀԱՊԿ-ին արգասաքեր անդամակցությունը, ՆԱՏՕ-ի հետ փոխշահավետ գործընկերության զարգացումը, մասնակցությունը միջազգային խաղաղապահական գործողություններին, շահագրգիռ անդամակցությունը ԵԱՀԿ-ին՝ Ղարաբաղյան կարգավիրման Մինսկի գործընթացին մասնակցությամբ, առանց նախապայմանների մուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու այստրաստակամությունը<sup>2</sup>,

<sup>2</sup> See «Protocols between the Republic of Armenia and the Republic of Turkey», 31 August, 2009 ([http://www.mfa.am/pr\\_09/20090831\\_protocol.pdf](http://www.mfa.am/pr_09/20090831_protocol.pdf)):

Վրաստանի հետ բարիդրացիության գերադասումը ընդլայնում են մինչև 2015 թ. հեռանկարում բազմավեկտոր քաղաքականության իրականացման ու Հայաստանի միջազգային ինտեգրման ներուժը:

Իրենց փոխհարաբերություններում Ռուսաստանը և Հայաստանը հետամուտ են դաշնակցային հարաբերությունների պայմանագրաիրավական իիմքերի հետագա զարգացմանը, ինչպես նաև փոխսադարձ անվտանգության ապահովման և իրենց կայուն զարգացման կենսականորեն կարևոր բոլոր ոլորտներում լայնամասշտար համագործակցության եղած ծրագրերի հարատացմանն ու նոր երկարաժամկետ ծրագրերի մշակմանը: Հաջողության գրավականը հետզիետե խորացող այն ռազմավարական երկխոսությունն է, որը ծավալվել է Հայաստանի և Ռուսաստանի պետությունների ու կառավարությունների դեկավարների մակարդակով:

ՀԱՊԿ-ին անդամակցությունը Հայաստանի արտաքին անվտանգության ապահովման այն հեռանկարային բաղադրիչներից է, որոնք ուղղված են անդամ պետությունների միջև բազմակողմ ռազմաքաղաքական հարաբերությունների խորացմանը: Կոլեկտիվ անվտանգության նոր ռազմավարական գերակայությունների և արդյունավետության մեծացման մեխանիզմների մշակման գործում էական առաջընթաց տեղի ունեցավ ՀԱՊԿ-ում Հայաստանի նախագահության ժամանակաշրջանում: Պետությունների դեկավարների հետ ՀԱՊԿ-ի հայ Նախագահի ու Կազմակերպության Գլխավոր քարտուղարի սերտ համագործակցության շնորհիվ հաջող մեկնարկ տրվեց փոխսադարձ անվտանգության համար Կազմակերպության բոլոր անդամների պատասխանատվության նորամուծական համակարգաստեղծ սկզբունքների հայեցակարգային ու գործնական առաջմղմանը: ՀԱՊԿ-ի անդամ պետություններից մեկի վրա հարձակման դեպքում կոլեկտիվ փոխօգնության գործում ՆԱՏՕ-ի փորձի ստեղծագործական կիրառումը մարմնավորում ստացավ արագ արձագանքման կոլեկտիվ ուժերի ստեղծմամբ: Երկարաժամկետ հեռանկարում Հայաստանի համար ընդհանուր գերակայություն կլինի մասնակցությունը ՀԱՊԿ-ի ռազմաքաղաքական ու ռազմական այն բաղադրիչների զարգացմանը, որոնք ուղղված են ինչպես ՀԱՊԿ-ի անդամ պետությունների նկատմամբ ազրեսիայի, այնպես էլ անհամաշափ միջազգային սպառնալիքների դեմ արդյունավետ պայքարի միջոցների ստեղծմանը:

Ընդլայնվում է Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև գործընկերությունը, որը զարգացման նոր ազդակ ստացավ ԱՄՆ-ի Նախագահ Բարակ Օբամայի գլխավորած վարչակազմի ծնավորմամբ: Հայամերիկյան անվտանգային համագործակցությանը համակարգայնություն հաղորդելու ցանկության վկայությունն են ԱՄՆ-ի և Հայաստանի Հանրապետության միջև անվտանգային երկխոսությունը վերսկսելու հարցի քննարկումները:

Օրակարգում ՆԱՏՕ-ին անդամակցելու հարց չունեցող Հայաստանի համագոր-

ծակցությունը այդ կազմակերպության հետ զարգանում է Եվրաատլանտյան գործընկերության խորհրդի և «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի միջոցով: Գործընկերության շրջանակներում ակտիվ համագործակցությունը նպաստում է Եվրոպական անվտանգության ամրապնդանը, ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի անդամ այլ պետությունների հետ երկկողմ հարաբերությունների զարգացմանը, ինչպես նաև Հայաստանի Եվրոպական ինտեգրմանը: Հայաստան-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի իրականացումը հետագայում ևս կնպաստի ՀՀ պաշտպանական համակարգի արդյունավետության մեծացմանը և զարգացած երկրների պաշտպանական համակարգերի հետ համատեղելիության ապահովմանը:

Հայաստանն ակտիվ կերպով մասնակցում է Միավորված Ազգերի Կազմակերպության գործունեությանն ու համագործակցում նրա կառույցների, օժանդակ մարմինների և օլակների հետ: Ընդունելով խաղաղության ու միջազգային անվտանգության պահպաննան գործում ԱՄԿ-ի գերակա դերը՝ Հայաստանը միևնույն ժամանակ համամիտ է իր գործընկերների հետ, որ 21-րդ դարի մարտահրավերներին ավելի արդյունավետ կերպով արձագանքելու համար անհրաժեշտ է կերպափոխել այդ կազմակերպությունը:

Հայաստանը մղված է առաջիկայում խորացնելու Եվրոպայի հետ համագործակցությունը ինչպես երկկողմ ձևաչափով, այնպես էլ Եվրոպական կունկտիվ կառույցների շրջանակներում: Ազգային անվտանգության գերակայություններին համապատասխան՝ մեր պետությունը շահագրգուված է արևմտաԵվրոպական երկրների հետ տարաբնույթ հարաբերությունների զարգացման գործում՝ կարևորելով քաղաքական և տնտեսական ոլորտներում երկկողմ կապերի ընդայնումը, ինչպես նաև բարեփոխումների ընթացքում Արևելյան Եվրոպայի փորձի օգտագործումը: Եվրամիության հետ մեր համագործակցության ինտենսիվացման գորավականը Արևելյան գործընկերության ծրագրի մեկնարկումն է:

Եվրոպայի խորհրդի հետ Հայաստանի համագործակցության խորացումը միտված է քաղաքական-իրավական բարեփոխումների առաջընթացին ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության սկզբունքների արմատափորման ուղղությամբ: Հայաստանը կարևորում է Հարավային Կովկասում պետությունների ու քաղաքացիական հասարակությունների մակարդակով շփումները խրախուսելու Եվրոպայի խորհրդի պատրաստակամությունը՝ այն համարելով տարածաշրջանային համագործակցության ակտիվացման, հակամարտությունների խաղաղ կարգավորման, տարածաշրջանային կայունության ապահովման, մարդու իրավունքների, այդ թվում՝ մեր հանրապետության ազգային փորբանականությունների, իրենց բնակության երկրներում հայ համայնքների կունկտիվ իրավունքների, պաշտպանության կարևոր գործոն:

ԵԱՀԿ-ին Հայաստանի անդամությունը կարևոր է Եվրոպայում անվտանգության

ու կայունության ապահովման, ժողովրդավարության ու իրավական պետության ստանդարտների տարածման տեսակետից: Հայաստանի համար ԵԱՀԿ-ն հատկապես կարևոր է նրա Մինսկի խմբի հովանու ներքո Ղարաբաղյան հակամարտության կարգավորման տեսակետից:

Հայաստանը ԱՊՀ հիմնադիրներից մեկն է և դրա շրջանակներում համագործակցության ծրագրերի մշակման ու իրականացման ակտիվ մասնակիցը: Մեր երկիրը հետագայում ևս օգտվելու է նախկին ԽՍՀՄ տարածքում կայունության և անվտանգության ապահովման տնտեսական, քաղաքական, ռազմավարական, մարդասիրական շահերի միջավետական համաձայնեցման այդ ձևաչափի առավելություններից:

Մինչև 2015 թվականի հեռանկարով Հայաստանն իր հակածքնաժամային ծրագրերում զգալի շափով հենվելու է տնտեսական համագործակցության այնպիսի ազդեցիկ միջազգային կառույցների վրա, ինչպիսիք են Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկը, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը:

Հայաստանի արտաքին անվտանգության տեսակետից խիստ կարևոր է արարական աշխարհի երկրների և Իրանի հետ հարաբերությունների հետագա զարգացումը: Դիմանձիզ է ուրվագծվում Չինաստանի, Հնդկաստանի, Շապոնիայի և Մինապուրի հետ համագործակցության ոլորտում, որոնց հետ հարաբերություններն զգալի դեր կխաղան ասիական տարածաշրջանում Հայաստանի վարած արտաքին քաղաքականության մեջ:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համակարգի կարևոր առանձնահատկություններից է Սփյուռքին առնչվող պրոբլեմների ամբողջ համալիրի արտացոլումը: Հայոց սփյուռքը, որ առավելաբար առաջացել է Մեծ Եղեռնի հետևանքով, թվաքանակով ավելի քան երեք անգամ գերազանցում է Հայաստանի բնակչությանը և սփոռված է աշխարհով մեկ: Սփյուռքը մի յուրօրինակ կամուրջ է Հայաստանի և միջազգային հանրության միջև: Վերջերս Հայոց սփյուռքի համաշխարհային կենտրոններ Հայաստանի Նախագահի կատարած այցելությունը միտված էր Հայաստանի և Սփյուռքի միջև հարաբերությունների նոր ձևաչափի կերտմանը՝ նախագահուղղված ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ իր ազգային պետության հետ անքակտելիորեն կապված Հայաստանակենտրոն Սփյուռքի անվտանգ ու առաջադիմական զարգացման շահերի ապահովման համար Սփյուռքի անսպառ ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

ՈՒ, ԱՄՆ-ի, ԵՄ-ի, ԵԱՀԿ, ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի ռազմավարական շահերի ոլորտում Հարավային Կովկասի տարածաշրջանի ներգրավվածությունը, ինչպես նաև Վրաստանում անցյալ տարի տեղի ունեցած պատերազմի արդյունքների,

մասնավորապես՝ Ռուսաստանի կողմից Հարավային Օսերիայի և Արխազիայի Հանրապետության ճանաչման, հաշվառմամբ տարածաշրջանի անվտանգային հեռանկարների տեսակետից առանցքային է դառնում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդիրը։ Ըստ այդմ՝ թույլ տվեք ներկայացնել մի շարք քաղաքական-անվտանգային գնահատումներ և ընդհանրացումներ։

Որպես Ղարաբաղյում տարածաշրջանային անվտանգության աղետալի վիլոգմամբ հյի պատերազմ չվերակսելու հուսադրող գործոն պետք է դիտել հետևյալ փաստը։ Մինսկի խմբի Համանախագահության առաջարկությամբ հակամարտող կողմերը համաձայնվեցին Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ու լուծնան հիմքում դնել ՄՍԿ-ի Կանոնադրության հետևյալ երեք հիմնադրույթները՝ «ուժի չգործադրման», «տարածքային ամբողջականության» և «ժողովորդների ազատ ինքնորոշման իրավունքի» սկզբունքները։ Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման կարևոր նախապայման է տարածաշրջանում փոխարժենան ու վստահության մրնողորդ հաստատումը։ Հենց այս համատեքստում պետք է դիտարկվի Հայաստանի և Ադրբեյջանի դեկավարներ Սերժ Սարգսյանի և Իշիամ Ալիևի շրնժիատվող երկխոսությունը։ Առանձնակի ուշադրության է արժանի 2008 թ. նոյեմբերին Ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ Ռուսաստանի Նախագահի նախաձեռնությամբ Մայնդրֆյան հոչակագրի ստորագրումը Հայաստանի, Ադրբեյջանի և Ռուսաստանի դեկավարների կողմից, ինչպես նաև Մայրիկյան սկզբունքների՝ որպես հակամարտության կարգավորման հիմքի վերաբերյալ Մինսկի խմբի համանախագահ պետությունների նախագահների 2009 թվականի հուլիսի համատեղ հայտարարությունը, որում նրանք աջակցություն են արտահայտում Հայաստանի և Ադրբեյջանի առաջնորդներին՝ Ղարաբաղյան խնդիրի խաղաղ կարգավորման ճանապարհին<sup>3</sup>։

Նպատակահարմար է սույն համաժողովում դիտարկել Մայրիկյան սկզբունքների որոշ անվտանգային կողմերը։ Անշուշտ, դրանք ունեն դրական կողմեր, քանի որ արտացոլում են Մինսկի խմբի Համանախագահների հոչակած վերոհիշյալ սկզբունքները։ Այս առումով դժվար է գերազնահատել Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի ներդրումը հակամարտությունը խաղաղ միջոցներով լուծելուն նպատակատղված մինալյան գործընթացում։ Մինսկյան ժամանակ, հարկ է նշել այն փաստը, որ մասնագետները, այդ թվում՝ մեր ամերիկյան գործընկերները, հարցականի տակ են դնում ԱՄՆ-ի Նախագահ Ջորջ Բուչի վարչակազմի արտաքին քաղաքականության որոշ առանձնահատկությունների արդարացվածության

<sup>3</sup> Տես «Joint Statement on the Nagorno-Karabakh Conflict by U.S. President Obama, Russian President Medvedev, and French President Sarkozy at the L'Aquila Summit of the Eight», 10 July, 2009 (<http://www.osce.org/item/38731.html>); «Декларация Азербайджанской Республики, Республики Армения и Российской Федерации», 02.11.2008 г. Официальный сайт Президента России (<http://www.kremlin.ru/text/docs/2008/11/208670.shtml>); «Сопредседатели Минской группы ОБСЕ представили главе МИД Армении результаты проведенных в Баку и Степанакерте встреч». Агентство международной информации «Новости-Армения», 02.03.2009 г. (<http://www.newsarmenia.ru/arm1/20090302/42034520.html>)։

փաստը: Տվյալ դեպքում խոսքը այն մասին է, որ Բուշի վարչակազմի անվտանգային մտածողության մեջ գերակայում էր ռազմական բաղադրիչը: ՈՒստի և նա արտաքին քաղաքական պրոբլեմների լուծման ժամանակ նախընտրում էր ուժային գործիքարանի կիրառումը<sup>4</sup>, անզամ եթե գործ ուներ ազատ ինքնորոշման իրավունքի իրացման հետ կապված այն տարածաշրջանային միջազգային հակամարտությունների հետ, որոնք ըստ 1949 թվականի Ժնևյան համաձայնագրերի Առաջին լրացուցիչ արձանագրության նույնականացվում են որպես ազգային ազատագրական և հակագաղութային<sup>5</sup>:

Մադրիդյան սկզբունքների պարագայում նշված մեթոդաբանական անկատարությունը հանգեցրեց այն բանին, որ Դարարադյան հակամարտության կարգավորման հիմքում դրվեց ոչ թե «խաղաղության հարացույցը», այլ «պատերազմի հարացույցը»<sup>6</sup>: Դրա հետևանքով հակամարտության խաղաղ կարգավորման որոշումն ընթացավ «պատերազմի վերսկսման սպառնալիքի» ոչ կառուցողական ձևաչափում: Դրանով կարելի է բացատրել այն հանգանաքը, որ ադրբեջանական կողմը որպես «հիմնական փոխգիշում» ներկայացնում է «ռազմական գործողություններ չերսկսելու իր պատրաստակամությունը»: Այսիսով՝ Դարարադյան հակամարտության լուծման նկատմամբ նման մոտեցումը, իիմնված լինելով «պատերազմի հարացույցի» վրա, բացառում է Ադրբեջանի այնպիսի հանդիպակաց հավասարաթեք փոխգիշումների խրանումը, որոնք ուղղված լինեն կայուն խաղաղության հաստատմանը: Դրանով կարելի է բացատրել ինչպես Ադրբեջանի կողմից հարձակողական սպառազինությունների համար ԵԽԶՈՒ պայմանագրով սահմանված առաստաղների բազմակի գերազանցումը, այնպես էլ նրա Զինված ուժերի ինտենսիվ նախապատրաստումը պատերազմի վերսկսմանը, որին անթաքույց կերպով քարոզվում է ոչ միայն ներքին լսարանում, այլև միջազգային ամբիոններից:

#### Վերջերս ինձ վիճակվեց Մոսկվայում Հարվարդի համալսարանի անվտանգային

<sup>4</sup> Stein «Олбрайт критикует внешнюю политику администрации Буша». РИА «Новости», 21.08.2003 г. (<http://www.rian.ru/politics/20030821/422798.html>); «Анализ внешней политики Буша-младшего» («United Press International», США). ИноСМИ.Ru, 11 ноября 2004 г. (<http://www.rian.ru/politics/20030821/422798.html>); а также: «Обама и Байден призвали покончить с провальными внешней политикой Буша». РИА «Новости», 24.08.2008 г. (<http://rian.ru/world/20080824/150624379.html>.); «Картер: Команда Буша—худшая за всю историю». Мультипортал, 21.05.2007 г. (<http://www.km.ru/magazin/view.asp?id=96F21455E1D64D36911 8EDEF05C8F30C1>):

<sup>5</sup> Stein «Protocol Additional to the Geneva Conventions of 12 August 1949, and relating to the Protection of Victims of International Armed Conflicts (Protocol I)», Part I, Art. I, Point 4, 8 June, 1977:

<sup>6</sup> ««Мадридские принципы» карабахского урегулирования основаны на «парадигме войны»». Научный доклад на Научно-практической конференции Гарвардского университета по проблемам Черноморской безопасности Начальника Института национальных стратегических исследований Министерства Обороны Армении Гайка Котанджяна (<http://www.medvedev-newsline.ru/5423.html>).

գիտաժողովում հիշեցնել, որ Ադրբեջանի նախկին Նախագահ Հեյդար Ալիևը ավելի իրատեսական դիրքորոշում ուներ Նախագահ Մութավիրովի և Ժողովրդական ճակատի առաջնորդ Արուփազ Էլշիբեյի սանձազերծած պատերազմի արդյունքներով Ռուսաստանի միջնորդությամբ հայկական և դարարադյան կողմերի հետ զինադադար կմքելու վերաբերյալ 1994 թ. մայիսին ընթացող բանակցություններում: Բանակցությունների անմիջական մասնակիցները նշում են, որ Ադրբեջանը պատրաստ էր ճանաչելու Լեռնային՝ Ղարաբաղի Հանրապետության՝ որպես 1991 թվականին ԽՍՀՄ-ում գործող վերակառուցումային օրենսդրությանը համապատասխան կայացած հանրաքվեի միջոցով ստեղծված պետության գոյության փաստը<sup>7</sup>:

Այսպիսով՝ 15 տարի առաջ Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի իշխանությունները հենց «խաղաղության հարացույցի» հիման վրա էին ընկալում Արևելյան Անդրկովկասում ձևավորված իրողությունները:

Մեր կարծիքով նախընտրելի է Մինսկի խմբի Համանախագահների վերակողմնորոշումը դեպի այն ուազմավարությունը, որ Ղարաբաղյան հիմնախնդրի լուծումը պետք է խարսխված լինի ԼՂՀ կարգավիճակի օրինականության ճանաշման վրա՝ երաշխավորված խաղաղության հաստատման վերաբերյալ երեք հակամարտող կողմերի միջև բանակցությունների ուղեկցմամբ: Այս պնդումը հիմնավորվում է հետևյալ իրավաբաղական փաստերով:

- Ադրբեջանական իշխանությունների կողմից հակահայկական զինված ազգեւիայի ու ջարդերի հրահրման ավանդույթը, ինչը ուղեկցվում է հայերի հարկադրված պատասխան ինքնապաշտպանությունը միջազգային հանրությանը որպես ազգեսիա ներկայացնելու նպատակով դրա պարտադիր հատկանիշի՝ զինված բռնություն գործադրելու առաջնության փաստի հետագա կեղծագործմամբ: Հայերի կողմից ազգատ ինքնորշման իրավունքի իրացման վերաբերյալ քաղաքական և իրավական պահանջներին Ադրբեջանի ցեղասպանական հակագուցության պրակտիկան, որը հաստատվում է Սումգայիրում (1988 թ.), Բարփում (1990 թ.) և Մարաղայում (1992 թ) խաղաղ հայ բնակչության զանգվածային ջարդերի<sup>8</sup>, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված ուղղակի ժողովրդավարության գործիքի՝ հանրաքվեի կիրառմամբ 1991 թ. Ղարաբաղի Հանրապետության օրինապատշաճ ստեղծմանն ի պատասխան՝ Բարփի իշխանությունների կողմից զինված ազգեսիայի սանձազերծման օրինակներով:

- Ադրբեջանական պետության կողմից քշնամության սերմանումը ադրբեջա-

<sup>7</sup> Տես Գ. Խոշապրյան, Գ. Ղազարյան, Ս. Մարգարյան, Հաղթանակներ, ինչպիսին նրանք ենել են. 44-ի ազգակողը: «Հայկական հանրազիտարան», Ե., 2008:

<sup>8</sup> Տես «Maragha massacre. Nagorno Karabakh», April, 1992; «Survivors of Maragha massacre: It was truly like a contemporary Golgotha many times over» (in English). Author: Baroness of Queensbury Source. April, 1998; «Трагедия Мараги: девять лет молчания, интервью Баронессы Керолайн Коук». «Голос Армении», 07.04.2001:

նական ժողովրդի նկատմամբ ոռու և հայ ժողովուրդների իր իրականացրած, գոյություն չունեցող ցեղասպանության կեղծարարության հիման վրա, Աղրբեջանի Հանրապետության Նախագահի համապատասխան հրամանագիրը և համապետական արարողակարգային միջոցառումների ցանկում կեղծված Ցեղասպանության օրվա ներառումը<sup>9</sup>: Խոչալու ավանդի խաղաղ աղրբեջանական բնակչության զանգվածային կոտորածը, որը Աղրբեջանի այդ ժամանակ գործող Նախագահ Մուրալիխովի վկայությամբ կատարել է Աղրբեջանի Ազգային ճակատը՝ իշխանություններին հեղինակագրելու և տապալելու նպատակով, և պետական հովանավորչությամբ Խոչալուի ողբերգության խեղաքյուրում՝ հայկական կողմին կերծ մնարդանքների ներկայացմամբ<sup>10</sup>:

- Խորհրդային տարիներին Աղրբեջանի կողմից Նախիջևանի մարզի հայերի ձուլման և ամբողջովին հայաբախման նախարեալը<sup>11</sup>, որ կատարվել էին ՌԽԴԱՀ մասնակցությամբ Հայկական ու Վրացական ԽՍՀ-ների և Թուրքիայի միջև 1921 թ. կնքված Կարսի պայմանագրի 5-րդ հոդվածին համապատասխան Թուրքիայի, Խորհրդային Հայաստանի և Աղրբեջանի կառավարությունների ստորագրած համաձայնագրով այդ տարածքի նկատմամբ արտօնելսորդասով (հովանավորությամբ) Աղրբեջանի ինքնիշխանության սահմանափակման խախտմամբ<sup>12</sup>:
- Աղրբեջանի անկախության հոչակումը «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դրւու զալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքով<sup>13</sup> նախատեսված կարգի խախտմամբ՝ առանց հաշվի առնելու Լեռնային

<sup>9</sup> Տես «Ուկած Президента Азербайджанской Республики о геноциде азербайджанцев», 26 марта 1998 г., сс. 21 – 23. Управление Делами Президента Азербайджанской Республики. Президентская библиотека, Официальные документы (<http://www.elibrary.az/docs/rukhoh-jali/g12.pdf>):

<sup>10</sup> Տես «Интервью Президента АзР А. Муталибова чешской журналистке Дане Мазаловой: «Я гуманист в душе». «Независимая газета», 2 апреля 1992 г., նաև՝ Аяз Муталибов. Изгнан из Азербайджана за правду о Ходжалу. «Аналитика», 28 августа 2009 г. (<http://analitika.at.ua/news/2009-08-28-13089>):

<sup>11</sup> Տես Argam Ayvazian. Nakhiyevan. Book of Monuments. «Anahit Press» (Armenian, Russian and English languages). Yerevan, 1990; «Развитие народного хозяйства Нахичеванской АССР». «Статистический сборник ЦСУ СССР». Баку, 1964 (на азер. яз.), с. 19:

<sup>12</sup> «Սի կողմից՝ ՀԽՍՀ-ի, Աղրիւն-Հ-ի և Վրացիւն-Հ-ի, մյուս կողմից՝ Թուրքիայի միջև բարեկամության մասին պայմանագիրը, որը կերպվել էր ՌԽԴԱՀ մասնակցությամբ Կարսում 1921 թ. Խոկտեմբերի 13-ին». Մեջքերում՝ «Հոդված 5: Թուրքիայի կառավարությունը և Խորհրդային Հայաստանի Աղրբեջանի կառավարությունները համաձայնվում են, որ Նախիջևանի մարզը, որի սահմանները որոշված են սույն պայմանագրի 3-րդ հավելվածում, կազմում է ինքնավար տարածք՝ Աղրբեջանի հովանավորությամբ» (տես «Проект «ХРОНОС», Исторические источники» ([http://www.hrono.info/dokum/192\\_dok/19211013kars.html](http://www.hrono.info/dokum/192_dok/19211013kars.html))):)

<sup>13</sup> Տես «Закон СССР «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР». Верховный Совет СССР, от 3 апреля 1990 г. № 1409-1 (ВБСС 90-15), «Ведомости Съезда народных депутатов СССР и Верховного Совета СССР». М., 1990, № 15, сс. 303 – 308 (<http://cominf.org/node/1142063371>):

Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂՄՍ) ժողովրդի կամքը: «Աղյորեջանի Հանրապետության անկախության վերականգնման մասին» 1991 թվականի հոկտեմբերի 18-ի սահմանադրական ակտով Աղյորեջանի Հանրապետության հռչակումը որպես Աղյորեջանական Ժողովրդավարական Հանրապետության իրավահաջորդի, որը գոյության ամբողջ շրջանում իր կազմում երթեք չի ներառել Լեռնային Ղարաբաղը<sup>14</sup>:

• Լեռնային Ղարաբաղի բնակչության շրջանում հանրաքվեի անցկացումը ԽՍՀՄ գործող օրենսդրության համաձայն՝ նախքան Ալմա Աբայի հոչակագիրը, որով ձևակերպվեց նախկին ԽՍՀՄ հանրապետությունների միջև Սիուրենական պայմանագրի պաշտոնական լուծումը (ի տարրերություն ուշացած Արխագիայից և Հարավային Օսեբիայից, որոնց անկախությունը ներկայում ճանաչել է Ռուսաստանը)<sup>15</sup>: Աղյորեջանական ԽՍՀ հայարնակ Ծահումյանի շրջանի և ԼՂՄՍ-ի տարածքի կարգավիճակի հարցով 1991 թվականի դեկտեմբերին կայացած հանրաքվեին աղյորեջանական փոքրամասնության մասնակցության վերաբերյալ մեծամասնություն կազմող հայկական համայնքի դիմումի բոյկոտումը Լեռնային Ղարաբաղի աղյորեջանացիների կողմից, որը կատարվեց Բարվի ցուցումով<sup>16</sup>:

<sup>14</sup> Տես «Статья 2. Азербайджанская Республика является преемницей существовавшей с 28 мая 1918 года по 28 апреля 1920 года Азербайджанской Республики». (Конституционный Акт Азербайджанской Республики «О восстановлении государственной независимости Азербайджанской Республики, 18 октября 1991 г. № 222-ХII»), Президент Азербайджанской Республики А. Муталибов. Баку, 18 октября 1991 г. «Ведомости Верховного Совета Азербайджанской Республики» (31 октября 1991 г., № 19-20 (848-849), ст. 335 («VES Consultancy» LLC):

<sup>15</sup> Տես «Алма-Атинская Декларация». Алма-Ата, 21 декабря 1991 г. «Ведомости Съезда народных депутатов и Верховного Совета РСФСР», 1991, № 51, ст. 1801:

<sup>16</sup> Տես «Հետապայմ Լեռնային Ղարաբաղի և հարևան Ծահումյանի շրջանի հայ համայնքը հրչակեց Լեռնային Ղարաբաղի անկախ հանրապետության ստեղծումը (ԼՂՀ-ի անկախությունը հոչակվել էր 06.11.1992 թ. հանրաքվեից հետո, այն ժամանակ արդեն ընտրված Աղյորեջանի Գերագույն խորհուրդը 02.09.1991 թ. հոչակեց 1918–1920 թթ. Աղյորեջանի պետական անկախության վերականգնումը, ԽՍՀՄ-ից միուրենական հանրապետությունների դրու զայտ մասին ԽՍՀՄ օրենքի համաձայն՝ ԼՂՀ-ն հոչակվեց որպես միուրենական տարածք իր կարգավիճակի հետագա ճգրտմամբ՝ հանրաքվեի միջոցով: Աղյորեջանում առաջացրեց ուժեղ արձագանք, ներառյալ՝ 1991 թ. նոյեմբերի 26-ի Ազգային ասամբլեայի բանաձևի ընդունումը, որը վերացնում էր մարզի ինքնավարությունը և խոշնդրությունը էր Աղյորեջանի անմիջական դեկավարության տակ նրա գտնվելը: Տարածաշրջանի ներսում սակայն անկախության հոչակմանը հետևեցին նոր խորհրդարանի ընտրություններն ու հանրաքվեն, վերջին ճնշող մեծամասնությամբ վավերացրեց անկախության հոչակագիրը, թեև աղյորեջանական բնակչությունը բոյկոտում էր այդ իրադարձությունը» (տես «Закон СССР «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР», от 3 апреля 1990 г., № 1410-1»; «Ведомости Съезда народных депутатов СССР и Верховного Совета СССР», 1990, № 15; «Акт о результатах референдума о независимости Нагорно-Карабахской Республики», 10 декабря 1991 г. (<http://www.nkr.am/rus/facts/referendum.html>); *а также*: С. Золяն. СБСЕ в Карабахском конфликте (1992 год); նաև՝ «Нагорный Карабах: проблема и конфликт». Глава 6 (<http://www.armenianhouse.org/zolyan/nf-ru/news/2008/08/12/127573>):

- Այն հաճամանքը, որ Ադրբեջանի Հանրապետության իշխանությունները 1991–1992 թվականներին չօգտագործեցին իրավաչափորեն ստեղծված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ միջպետական հարաբերությունները հաստատելու հնարավորությունը՝ ԽՍՀՄ վիլուգման ընթացքում նախկին Ադրբեջանական ԽՍՀ<sup>17</sup> տարածքում ստեղծված երկու նոր պետությունների միջև խաղաղության հաստատման փոխարեն նախընտրելով օրինական ԼՂՀ-ի դեմ ռազմական ազրեսիան, ինչը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հարկադրեց ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածի համաձայն իրականացնել իր ինքնապաշտպանության անքակտելի իրավունքը<sup>18</sup>:
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զարգացման ռազմավարության կողմնորոշումը դեպի օրենքի գերակայություն և ժողովրդավարության ժամանակակից եվրոպական ստանդարտները: 18 տարիների ընթացքում դե ֆակտո և դե յուրէ գոյություն ունեցող ԼՂՀ-ում ժողովրդավարական եղանակով ընտրված օրենսդիր, գործադիր ու դատական իշխանության անընդմեջ իրականացումը<sup>19</sup>:
- Օրինական պետության ինքնապաշտպանության իրավունքին համապատասխան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծած և Հարավային Կովկասում ուժերի հաշվեկշռի, կայունության ու անվտանգության պահպանման գործում էական ներդրում ունեցող, մարտական կոփում ստացած, անընդհատ արդիականացող, կանոնավոր Պաշտպանության բանակի արդյունավետ կենսագործումները<sup>20</sup>:

Տարածաշրջանային անվտանգության հեռանկարներն արտացոլող շարադրված փաստերի համակարգը, հայ և ադրբեջանական ժողովուրդների թշնամների հաղթահարման ու նրանց միջև բարիդրացիական մթնոլորտի ձևավորման

<sup>17</sup> Stu Caroline Cox and John Eibner. Ethnic Cleansing in Progress: War in Nagorno Karabakh. «Institute for Religious Minorities in the Islamic World», 1993 (<http://sumgait.info/caroline-cox/ethnic-cleansing-in-progress/contents.htm>):

<sup>18</sup> «Հարավային Օսերիայում ուսև խաղաղաբանների գործողությունները համապատասխանում են միջազգային իրավունքին», հայտարարեց ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը: «Հարավային Օսերիայում Ուստաստանի գործողությունները համապատասխանում են ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածին, որտեղ խսկվում է անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության իրավունքի մասին», հայտարարեց Լավրովը ԵԱՀԿ նախագահող Ֆինլանդիայի արտաքին գործերի նախարար Ակեբանդը Ստորև հետ բանակցությունների արդյունքներով մամլո ասուլիսի ժամանակ» (տես «Сергей Лавров: Деятвия России в Грузии в подпадают под статью 51 Устава ООН». Казань, «Татар-информ», 12 августа 2008 г. (<http://www.tatar-inform.ru/news/2008/08/12/127573/>)):)

<sup>19</sup> Stu «Конституция Нагорно-Карабахской Республики» (<http://www.nkr.am/ru/constitution/9/>):

<sup>20</sup> Stu Charles Fairbanks, S. Frederick Starr, C. Richard Nelson, Kenneth Weisbrode. Strategic Assessment of Central Eurasia. 2001, PP. 60 – 61. «ISN» (<http://www.isn.ethz.ch/isn/Digital-library/Publications/Detail/?ots591=0C54E3B3-1E9C-BE1E-2C24-A6A8C7>):

դժվարությունների հաշվառմանք, հանգեցնում է այն եզրակացության, որ մինչև Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցի լուծումը ԼՂՀ անվտանգության գոտու մի շարք տարածքների և իրենց նախկին բնակության վայրերը փախստականների վերադարձը մեծ հավանականությանք կվերածվի ռազմական գործողությունների վերսկսման ու ծավալման գործոնի՝ Հարավային Կովկասում և շրջապատող պայքանավտանց տարածաշրջանում կայունության աղետալի խախտմանք:

Ղարաբաղյան կարգավորման մեթոդաբանական հիմքերի կատարելագործման համար նախադրյալներ են ստեղծում միջազգային հանրության հետ երկխոսության հեռանկարի վերաբերյալ Ռուսաստանի Նախագահ Դմիտրի Մեդվեդևի քարում ու կշրադատված տեսակետը, ԱՄՆ-ի նոր վարչակազմի կողմից «խելացի ուժի»՝ որպես անվտանգային քաղաքականության համակարգաստեղծ և առաջնային պարամետրի հոչակումը:

Վերջերս Նորելյան մրցանակի դափնեկիր դարձած Նախագահ Բարակ Օբամայի թիմը հրաժարվում է կրտսեր Ջորջ Բուշի վարչակազմի կողմնորոշումից դեպի «կոչտ անվտանգություն», որում գերակշռում է ռազմական ուժի գործոնը: Այդ տեսանկյունից հույժ կարևոր են՝ համընդիանուր ու տարածաշրջանային անվտանգության ռազմավարական պրոբլեմների վերաբերյալ երկխոսության ընթացքում Ռուսաստանի և ԱՄՆ-ի առաջնորդների դիրքորոշումների մեջնեցման միտումը, Վրաստանում ծագած հակամարտության ռազմական փուլում այն կառուցողական միջնորդության փորձը, որն իրականացրեց տվյալ ժամանակահատվածում Եվրամիությունում նախագահող Ֆրանսիայի Նախագահ պարոն Նիկոլա Սարկոզին, ինչպես նաև ՆԱՏՕ-ի նոր Գլխավոր քարտուղար պարոն Անդրես Ռասմուսենի և Ռուսաստանի Նախագահ պարոն Դմիտրի Մեդվեդևի միջև ձևավորվող երկխոսությունը: Սիջազգային անվտանգության նոր ռազմավարության որոնման այս պրագմատիկ շրջանակի մեջ օրգանապես ներգրիւմ է տարածաշրջանում կառուցողական երկխոսություն ծավալելու Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանի ձգտումը: Այդ նկատառումով անվտանգային պարտավորությունների ոլորտում խոսրի և գործի միասնության տեսակետից Հայաստանը միջազգային հանրության կողմից ընկալվում է որպես հուսալի և պատասխանատու գործընկեր:

Վերը բերված հիմնավոր փաստարկների քաղաքական-իրավական թթապանակը, որը վկայում է հօգուտ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի նախընթաց ճանաչման՝ որպես Արևելյան Անդրկովկասի Ենթատարածաշրջանի և ամբողջ տարածաշրջանի անվտանգության առանցքային գործոնի նպատակահարմարության, կարող է Մինակի խմբի Համանախագահների համար դառնալ Մադրիդյան սկզբունքների կատարելագործման կողմնորոշիչ:

Այս նոր պայմաններում Մինսկի խմբի Համանախագահների կողմից՝ զգալի չա-

փով ԱՄՆ-ի նախորդ վարչակազմի ազդեցությամբ ձևավորված Մադրիդյան սկզբունքների վերակողմնորշումը «պատերազմի հարացույցից» «խաղաղության հարացույցի» կարող է հակամարտության երեք կողմերին դրդել համարժեք փոխազդումների՝ ի նպաստ Հարավային Կովկասում կայուն խաղաղության հաստատման:

## ПОЛИТОЛОГИЯ БЕЗОПАСНОСТИ

### ПЕРСПЕКТИВЫ ОБЕСПЕЧЕНИЯ НАЦИОНАЛЬНЫХ ИНТЕРЕСОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ МОДЕРНИЗАЦИИ СИСТЕМЫ ГЛОБАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

*Г. С. КОТАНДЖЯН, генерал-майор, Начальник Института национальных  
стратегических исследований МО РА, советник Министра Обороны,  
доктор политических наук (РФ), научный эксперт по контртерроризму  
(Национальный Университет Обороны США),  
действительный член Российской Академии военных наук*

#### РЕЗЮМЕ

Интеграция Армении предполагает ее ответственную вовлеченность в те процессы на международной арене, которые созвучны провозглашенным Арменией принципам и приоритетам национальной безопасности. Обогащение стратегического союза с Россией, выбор европейского пути развития при поддержке Совета Европы и программ Европейского Союза, сбалансированное сотрудничество с США и Ираном, а также со странами арабского мира, Китаем, Индией, Японией и Сингапуром, продуктивное членство в ОДКБ, развитие взаимовыгодного партнерства с НАТО, заинтересованное членство в ОБСЕ с участием в Минском процессе Карабахского урегулирования, сотрудничество в рамках ООН, СНГ и с их органами и структурами, с влиятельными международными экономическими организациями, готовность к установлению дипломатических отношений с Турцией без предварительных условий, прагматическое предпочтение добрососедства с Грузией, создание нового формата взаимоотношений с Диаспорой, нацеленного на эффективное использование неисчерпаемых ресурсов мирового армянства в целях обеспечения интересов безопасного и прогрессивного развития как Республики Армения, так и Армения-центричной Диаспоры расширяют потенциал осуществления политики многовекторности и международной интеграции Армении в перспективе на 2015 год.

С учетом вовлеченности региона Южного Кавказа в сферу стратегических интересов РФ, США, ЕС, ОБСЕ, НАТО и ОДКБ, а также итогов прошлогодней войны в Грузии с признанием Россией независимости Республики Абхазия и Республики Южная Осетия при рассмотрении перспектив

региональной безопасности проблема разрешения Карабахского конфликта приобретает ключевое значение.

Система Мадридских принципов разрешения Карабахского конфликта, выстроенная на базовых принципах ООН – «неприменение силы», «территориальная целостность» и «свободное самоопределение народов», – безусловно имеет положительные стороны. Однако она в значительной степени сформулирована под влиянием безопасностной стратегии администрации прежнего Президента США г-на Джорджа Буша, которую специалисты, в том числе американские, называют политикой «жесткой силы» с доминированием военного аспекта и силовых инструментов в разрешении внешнеполитических проблем – в частности, региональных международных конфликтов, связанных с реализацией права народов на свободное самоопределение, которые согласно Первому Дополнительному Протоколу к Женевским конвенциям 1949 года идентифицируются как национально-освободительные и антиколониальные.

Тем самым в основу разрешения Карабахского конфликта заложена не «парадигма мира», а «парадигма войны». Вследствие этого поиск мирного разрешения конфликта происходит в контрпродуктивном формате «угрозы возобновления войны». В значительной мере этим обстоятельством объясняется выдвижение азербайджанской стороной в качестве «основного компромисса» своей «готовности не возобновлять военные действия».

Политико-правовым обоснованием предпочтительности разрешения Карабахской проблемы на основе признания легитимности статуса НКР являются общеизвестные политические и юридические факты, из которых отметим вероятность превращения Азербайджаном возврата некоторых территорий из Зоны безопасности НКР и беженцев в места их прежнего проживания до решения вопроса о статусе Нагорного Карабаха в фактор возобновления военных действий с катастрофическим подрывом стабильности на Южном Кавказе.

Для пересмотра методологической основы процесса Карабахского урегулирования реальные предпосылки создают: оглашение новой администрацией США «умной силы» в качестве системообразующего и доминирующего параметра безопасностной политики США, прагматический взгляд России на перспективы диалога с мировым сообществом, тенденция сближения позиций лидеров России и США по стратегическим проблемам глобальной и региональной безопасности, опыт конструктивного посредничества Президента Франции в период военной фазы конфликта в Грузии, наметившийся диалог между Генеральным Секретарем НАТО и Президентом России, а также устремленность руководства Армении к конструктивному диалогу в регионе.

Указанный подход может стать для Сопредседательства Минской группы

ОБСЕ основой для переориентации Мадридских принципов с «парадигмы войны» на «парадигму мира» и стимулировать равноценные компромиссы в пользу установления прочного мира на Южном Кавказе.

## POLITICAL SCIENCE OF SECURITY

### THE PERSPECTIVES OF ENSURING NATIONAL INTERESTS OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF MODERNIZING THE GLOBAL SECURITY SYSTEM

*H. S. KOTANJIAN, Major General, Commandant of the Institute for National Strategic Studies, MOD, RA, Advisor to the Defense Minister, Doctor of Political Sciences (RF), Counterterrorism Fellow (National Defense University, USA), Fellow Member, Russian Academy of Military Sciences*

#### SUMMARY

Armenia's integration assumes its responsible involvement in those processes in the international arena, which are harmonious with the national security principles and priorities proclaimed by Armenia. The forging of strategic alliance with Russia, choice of the European way of development with the support of the Council of Europe and programs of the European Union, balanced cooperation with the USA and Iran, as well as with the countries of the Arabian world, China, India, Japan and Singapore, productive membership in the CSTO, development of mutually beneficial partnership with NATO, concerned membership in the OSCE with the participation in the Minsk process of Karabakh settlement, co-operation within the frameworks of the UN, CIS and with their bodies and structures, influential international economic organizations, readiness to establish diplomatic relations with Turkey without preconditions, pragmatic preference of good neighborly relations with Georgia, creation of a new format of interrelations with the Diaspora, which is targeted at effective use of inexhaustible resources of the Armenians throughout the world for ensuring interests of a secure and progressive development of both the Republic of Armenia and Armenia-centric Diaspora—all these extend the potential of implementing Armenia's policy of complementarity and international integration in the perspective of 2015.

The problem of the Karabakh conflict resolution acquires key significance taking into account the involvement of the South Caucasus region in the sphere of strategic interests of the Russian Federation, USA, EU, OSCE, NATO and CSTO, as well as the aftermath of the last year's war in Georgia with recognition of the independence of the Republic of Abkhazia and the Republic of South Ossetia by Russia while considering the regional security perspectives.

The Madrid principles system of the Karabakh conflict resolution, built on the fundamental principles of the UN Charter—«non-use of force», «territorial in-

tegrity» and «peoples' free self-determination»—has undoubtedly positive aspects. However, it is considerably formulated under the influence of security strategy of the Administration of the former US President Mr. George Bush, which is called by the specialists, including by the American ones, the policy of «hard power» with the domination of the military aspect and hard security tools in resolving foreign policy problems—particularly, regional international conflicts regarding the peoples' right to free self-determination, which are identified as national-liberation and anti-colonial ones in compliance with the 1<sup>st</sup> Protocol Additional to the 1949 Geneva Conventions.

Thus, the «war paradigm» and not the «peace paradigm» underlies the Karabakh conflict resolution. In these terms the pursuit of the peaceful conflict resolution takes place in the counterproductive format of the «war resumption threat». This circumstance largely explains the fact that the Azerbaijani party publicly demonstrates as a «basic compromise» its «readiness not to resume hostilities».

The political-legal grounds for preference to the Karabakh problem resolution based upon the recognition of the NKR status legitimacy are the generally known political and legal facts. These facts include the probability of changing the return of some territories from the NKR's Security Zone and the refugees to the places of their former residence before the resolution of the issue on the Nagorno Karabakh status into the factor of resuming hostilities with catastrophic undermining of stability in the South Caucasus.

Proclamation of the «smart power» by the new US Administration as a system-forming and dominating parameter of the US security policy, pragmatic approach to the perspectives of a dialogue with the world community, tendency of drawing closer the positions of the Russian and US leaders on strategic problems of global and regional security, experience of the constructive mediation by the President of France in the period of military phase of the conflict in Georgia, the outlined dialogue between the Secretary-General of NATO and the Russian President, as well as the inclination of Armenia's leadership to a constructive dialogue in the region create real premises for reviewing the methodological basis of the Karabakh settlement process.

The above-mentioned approach may become a basis for the OSCE Minsk Group Co-Chairs to reorientate the Madrid principles from the «war paradigm» into the «peace paradigm» and to stimulate equivalent compromises for establishing lasting peace in the South Caucasus.

## ԿԱՌՎԱՐՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԴԵՐԸ ԲԱՐԴ ՏՈՒՐԲՈՒԼԵՆՏ ԿԱԶՍԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՆԵՐՈՒՄ

Զ. ԱՅՈՒԿԱՆ\*, պրոֆեսոր, ԱՄՆ-ի ՈԾՈՒ-ի մագիստրոսական դպրոց



Անգամ ռեսուրսների առատության պայմաններում դժվար է արդյունավետ և արգասարեր կերպով կառավարել պետական և ռազմական վարչարարական ապարատները, քանի որ դրանք բաղկացած են բարդ փոխկապված համակարգերից: Զարմանալի չեն, որ այս բարդ (ֆինանսական, ապահովման, ձեռքբերման, կաղութերի պատրաստման և կրթական) համակարգերի կառավարումը գտնվում է դեկավարների ու բարձրաստիճան պաշտոնյաների ուշադրության կենտրոնում: Կառավարման (*management*) վրա նման մեծ կենտրոնացման ևս մեկ, թեև հաճախ անտեսվող պատճառն այն է, որ խրախուսման կազմակերպական համակարգեր՝ առաջխաղացում, պաշտոնի նշանակում և նույնիսկ վարձատրում, կարևոր են դարձնում մանրությունը նկատմամբ մեծ ուշադրությունը, հավատարմությունը վարվող քաղաքականությանը և հետևողականորեն, վերլուծաբար մտածելու կարողությունը, որոնցով պայմանավորվում են արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ մտածելակերպն ու գործունեությունը: Ինչպես «Մեկի վրա հույս դնելով՝ մեկ ուրիշին պարզևատրելու անմտության մասին» դասական հոդվածում նշում է Ստիվ Շեռը, կազմակերպությունները «ներմուծել են խրախուսման այնպիսի համակարգեր, որոնցով պարզևատրվում են ոչ այն հատկությունները, որոնց իրենք ձգտում են» [8]\*\*:

Խրախուսման կազմակերպման համակարգերի և համակարգային բարդության պատճառով խորապես արմատացել է մի շարք կազմակերպությունների, հատկապես՝ պետական հատվածի մտածելակերպում գերակայող այն տեսակետը, որ գործուն կառավարումը պայմանավորված է կազմակերպական արդյունավետությամբ: Այս կազմակերպական «խելքի կերտվածքի» պատճառով դեկավարումը (*leadership*) հաճախ շփորում են կառավարման հետ, այն դիտում գույն որպես վերջինիս ենթամաս կամ որպես անորոշ, անձև հասկացություն, որի

\* Զեյմ (Զիմ) Սյուկանը փիլիսոփայության դոկտոր է (Փիլիպի համալսարան), Ռազմածովային ուժերի մագիստրոսական դպրոցի բիզնեսի և վարչական քաղաքականության մագիստրոսական դպրոցում (ԲՎՀԸԴԴ) կառավարման ոլորտի պրոֆեսոր: Նա տարբեր գիտական ու մասնագիտական հանդեսներում հրապարակված ավելի քան 40 հոդվածների և միջազգային ու ներքին խորհրդաժողովներում արված 50 գելուցումների հեղինակ է: Ներկայում նրա գիտական հետաքրքրությունների հիմնական ոլորտը հաղորդակցային փոխխություններն են, հաղորդակցման և դեկավարման փոխհարաբերությունը, միջմշակութային կապերը: Նա ԲՎՀԸԴ-ի կառավարման ամբիոնի վարիչ է և նոր գիտական վեճչութային ծեռմարկումների գծով դեկանի տեղակալ:

\*\* Հղումները տես էջ 82–83:

արդյունավետությունը դժվար է գնահատել: Հետևաբար, պիտական և ռազմական վարչարարական ապարատների մեծ մասը գերկառավարվող էն, սակայն՝ քերի դեկավարվող:

Կառավարման վրա նման կիզակեցումը կարող է հանգեցնել հաջող կազմակերպական գործունության և լավ արդյունավետության այն դեպքում, եթե կազմակերպության միջավայրը հարաբերականորեն կայուն է: Այդուհանդերձ, դեկավարման մասին տվյալ բյուրիմաց կամ չափազանց պարզունակ պատկերացումը կարող է կործանարար լինել ռազմական և պետական վարչարարական ապարատների համար, եթե դրանցից պահանջվում է իրենց մտածելակերպի ու գործելակերպի զգակի փոփոխություն կամ անօամ կերպավոխում: Օրինակ՝ Հարավկովկասյան տարածաշրջանում ժողովրդավարական հաստատություններ ստեղծելու, պատշաճ պետական կարգավորում ապահովելու, սոցիալական ու տնտեսական զարգացումն սկզբնավորելու և պահպանելու համար կարող է պահանջվել պետական կազմակերպությունների արմատական կերպավոխում: Ավելի կոնկրետ՝ պաշտպանության նախարարությունները կարող են համարել, որ ավանդական պաշտպանական գործառույթները՝ պատերազմի կանխումը, իսկ դրա ձախողման դեպքում վարում և հաղթանակը, այլևս չեն բնութագրում իրենց վերապահված առաքելությունները: Ժողովրդին ծառայելու և պաշտպանելու համար պաշտպանության նախարարություններից կարող են պահանջվել նոր՝ հիմնովին տարրերվող, առաքելություններ, ինչպիսիք են կայունության ապահովման և համատեղ խաղաղապահական օպերացիաները, իրավապահ մարմինների գործունեությունը, արժեքավոր ռեսուրսների (օրինակ՝ նավի, պահպանությունը):

Այս նոր գործորություններին աջակցելու համար տվյալ կերպավոխումները պահանջում են այլ կազմակերպական ուղղորդում, փոփոխություններ մարդկանց մտածելակերպում ու գործելակերպում և էական ձևափոխություններ ու վերադասավորումներ կազմակերպական համակարգերում: Ընդհանուր առմամբ դեկավարումն անհրաժեշտ է, որպեսզի օգնի մարդկանց հասկանալու փոփոխությունների ծայրահետ կարևորությունն ու հրատապությունը, զարգացնի այդ փոփոխության համար պահանջվող նոր հմտություններ: Միայն ուժեղ կառավարումը ի վհճակի չէ բավարարելու այդ նոր պահանջները:

Դեկավարման դերն ու պատասխանատվությունը, կառավարման ու դեկավարման փոխարքերությունները ռազմական և պետական կազմակերպություններում հաճախ սխալ են ընկալվում: ՈԽստի սույն հողվածը հետապնդում է երեք նպատակ. 1) Ակարազորել կառավարման և դեկավարման միջև հիմնարար տարրերությունները, 2) պարզաբանել, թե ինչպես պետք է կառավարման և դեկավարման մտածելակերպերը լրացնեն միմյանց, 3) դիտարկել մի քանի հիմնական ունակություններ, որոնք պետք է զարգացնեն դեկավարմները:

#### **Կառավարման և դեկավարման միջև եղած հիմնարար տարրերությունները**

Հետազոտողները նշում են, որ կառավարման և դեկավարման գործառույթների, պատասխանատվությունների և մտածելակերպերի միջև կամ էական տար-

թերություններ [10, 12, 18]: Կառավարումը գործ ունի ծավալուն, հաճախ՝ վարչարարական, կազմակերպությունների գործընթացների, ընթացակարգերի և գործունեության հետևանքով ստեղծվող բարդությունների հետ [9]: Այս կազմակերպությունները զարգացրել են բարդ համակարգեր, օրինակ՝ ֆինանսական, ապահովման, տեխնոլոգիական, կարգերի պատրաստման և կրթական, որոնք պետք է կարգավորվեն այնպես, որ աշխատանքային գործունեությունը համապատասխանի կազմակերպական նպատակներին և ներքին ու արտաքին շահագրգիռ կողմների կարիքներին: Ավելին, լավ կառավարումը կարևոր է յուրաքանչյուր համակարգ արդյունավետ դարձնելու համար՝ ճիշտ մարդիկ, ռեսուրսներ, գործընթացներ և պատրաստում բարեկարգ խնդիրների: Կառավարումը կոչված է ապահովելու գործող համակարգերի արդյունավետությունը և նվազեցնելու ռիսկերը: Պլանավորումն ու բյուջեավորումը, կազմակերպումն ու անձնակազմի համալրումը, ինչպես նաև վերահսկումն ու խնդիրների լուծումը այն գործընթացներն են, որոնք կառավարիչները սովորաբար կիրառում են այս համակարգերի բարդության հետ գործ ունենալիս:

Լավ կառավարումը միշտ էլ կարևոր է: Առանց լավ կառավարման բարդ կազմակերպությունները դառնում են քառսային, անարգասարեր և ի վերջո՝ անաշխատունակ, քանի որ համակարգային խեղումը կիանգեցնի կարևոր նպատակների ծախողման: Այդուհանդեռ, կազմակերպությանը ներկայացվող նոր պահանջներից ծագած կազմակերպական տուրբովենտության պայմաններում միայն կառավարումը բավարար չէ, օրինակ՝ անդամակցություն ՆԱՏՕ-ին, Արևմուտքի հետ ավելի սերտ հարաբերություններ, պատերազմականից տարբերվող ոչ ավանդական ռազմական օպերացիաներ: Այս տուրբովենտությանը արդյունավետ արձագանքելու համար կազմակերպությանը կարող են անհրաժեշտ լինել նոր ուղղորդում, այլ տեսլական, արմատապես փոփոխված կազմակերպական համակարգեր և մարդկանց առօրյա մտածելակերպի ու գործելակերպի վերափոխում: Նեկավարումն անհրաժեշտ է այս տուրբովենտության պայմաններում կազմակերպությունն ուղեվարելու համար:

Նեկավարումը կենտրոնանում է այն քանի վրա, թե ինչպես կանխատեսել փոփոխությունը, արձագանքել դրան և հաղթահարել այն [11, 9]: Նեկավարումն անհրաժեշտ է նոր կազմակերպական ուղղություն ընտրելու և, որպես արդյունք, մարդկանց ու կազմակերպություններ նոր անձանոր ոլորտներ փոխադրելու համար [2, 6]: Այս ճանապարհին հաճախ կարելի է հանդիպել դիմադրության, քանի որ մարդկանցից կապահանջվի իրենց առաջադրանքները կատարելու համար զարգացնել նոր հմտություններ, վերափոխել իրենց աշխատանքի վերաբերյալ ծնավորված կարծրատիպային մտածելակերպը, գործակցել տարբեր մարդկանց հետ և իրենց աշխատանքի համար խրախուսվել տարբեր ձևերով: Ավելին, այս նոր ուղղորդման ձեռնարկումը և փոփոխության իրականացումը պահանջում են կազմակերպության ներսի և դրան մարդկանց համագործակցություն: Հետևաբար, փոփոխության պատճառը, փոփոխության կարևորությունը և փոփոխությունն իսկ

պարզուոց կերպով ու ռազմավարորեն հաղորդելու (մատուցելու) կարողությունը դեկավարման կարևոր տարրն է [11]:

Դեկավարման հրամայականն է փոփոխության անհրաժեշտության գիտակցումը՝ երկարաժամկետ հետևանակարում կազմակերպության և նրա առաքելության համար զգալի հետևանքների հանգեցնող տնտեսական, քաղաքական, ֆինանսական կամ տեխնոլոգիական իրադարձությունների ի հայտ բերմամբ ու գնահատմամբ: Այդ գնահատումը ճշգրիտ կատարելու համար ձեռնիստ դեկավարմանը պետք է կարողանան դինամիկ իրավիճակները դիտել «պարզ, թարմ աչքով»: Եթե ֆուտրովի հետ զուգահեռներ անցկացնենք, ապա կարող ենք ասել, որ բարձրակարգ ֆուտրովսար կարողանում է կանխատեսել և հայտնվել այն տեղում, որտեղ շուտով կհայտնվի նաև գնդակը, բայց ոչ պարզապես այն տեղում, որտեղ գնդակն արդեն գտնվում է: Նա ունակ է տեսնելու և խաղացների, և գնդակի շարժման միասնական պատկերը, ինչը նրան հնարավորություն է տպիս կանխատեսելու, թե որտեղ պետք է գտնվի ինքը նախքան գնդակի այդ վայրում հայտնվելը: Նույնը ճշմարիտ է նաև դեկավարի դեպքում: Նա ունակ է տեսնելու կազմակերպության համար արտաքին իրավիճակների ընդհանուր պատկերը, ինչը նրան օգնում է կանխատեսելու, թե կազմակերպությունը որտեղ պետք է լինի ապագայում, և ընտրելու այնտեղ հասնելու ուղղությունը:

- 1) *N. Andreadis*. Learning and organizational effectiveness: A systems perspective. «Performance Improvement», 2009, 48(1), PP. 5–11.
- 2) *W. Bennis & B. Nanus*. Leaders: The strategies for taking charge. New York, 1985.
- 3) *J. M. Burns*. Leadership. New York, 1978.
- 4) *J. C. Collins & J. I. Porras*. Built to last. New York, 1994.
- 5) *J. A. Conger*. Inspiring others: The language of leadership. «Academy of Management Executive», 1991, 5(1), PP. 170–183.
- 6) *M. Depree*. Leadership is an art. New York, 2004.
- 7) *M. Depree*. Leadership jazz. New York, 1993.
- 8) *S. Kerr*. On the folly of rewarding A, while hoping for B. «Academy Management Journal», 1975, 18(4), PP. 769–783.
- 9) *J. P. Kotter*. What leaders really do. «Harvard Business Review», 2001, 79(11), PP. 85–96.
- 10) *J. P. Kotter*. A force for change: How leadership differs from management. New York, 1990.
- 11) *J. P. Kotter*. Leading Change. Boston, 1996.
- 12) *J. C. Rost*. Leadership for the 21st century. Westport, 1991.
- 13) *P. M. Senge*. The fifth discipline: The art and practice of the learning organization. New York, 2003.
- 14) *P. M. Senge*. Collaborating for systemic change. «MIT Sloan Management Review», 2007, 48(2), PP. 44–53.

- 15) F. Westley & H. Mintzberg. Visionary leadership and strategic management. «Strategic Management Journal», 1989, 10, PP. 17–32.
- 16) G. Yukl & R. Lepsinger. Flexible leadership: Creating value by balancing multiple challenges and choices. San Francisco, 2004.
- 17) G. Yukl & R. Lepsinger. Why integrating the leading and managing role is essential for organizational effectiveness. «Organizational Dynamics», 2005, 34(4), PP. 361–375.
- 18) A. Zalesnik. Managers and leaders: Are they different? «Harvard Business Review», 1977, 55(5), PP. 67–78.

## РОЛЬ УПРАВЛЕНИЯ И РУКОВОДСТВА В СЛОЖНЫХ ТУРБУЛЕНТНЫХ ОРГАНИЗАЦИОННЫХ СРЕДАХ

А. СЮКАН, профессор, Магистрская школа ВМФ США

### РЕЗЮМЕ

В государственных и военных аппаратах, вследствие укоренившихся стереотипов, управление (management) и руководство (leadership) часто отождествляются. В действительности, между ними существуют фундаментальные различия.

Управление имеет дело с проблемами, возникшими вследствие процессов, процедур и деятельности больших и сложных, часто – административных – организаций. Управление нацелено на обеспечение эффективности действующих систем и уменьшение рисков путем воздействия на внутреннюю среду организации.

В сложных условиях организационной турбулентности, которые объективно возникают в связи с постоянными изменениями внешней среды, одно управление не достаточно. С целью эффективного реагирования на данную турбулентность организация нуждается в новом видении, новом направлении, новых системах и изменении повседневного мышления и деятельности людей. Эту функцию обеспечения выживания и роста организации в постоянно меняющейся внешней среде выполняет руководство посредством нацеливания на предупреждение, реагирование и преодоление внешнего изменения. Руководитель должен обладать рядом важных качеств, как: умение в сложной внешней динамично меняющейся среде в условиях недостаточности информации выделять общую картину, оценивать и прогнозировать ее развитие с определением места, в котором должна находиться организация в каждый последующий момент времени, умение убедительно разъяснять подчиненным необходимость инноваций и их сущность посредством использования полного спектра речевых (метафорических) ресурсов и информационных технологий и т. д. Для развития этих качеств необходимы опыт практической деятельности и системное целенаправленное обучение.

## **ԶԻՆԾԱՌԱՅՅՈՂՆԵՐԻ ԾՐՁԱՌՈՒՄ ԹՈՔԱԲՈՐՔԵՐԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՈՒ ԲՈՒԺՄԱՆ ՀԱՐՑԻ ԾՈՒՐՉ**

- Ա. Ա. ՓԱՐՍՍԱԴԱՆՅԱՆ, թ/ծ գնդապետ, բժշկական գիրուրյունների ղոկարոր,  
ՀՀ ԶՈՒ-ի ռազմաքաղաքացիան վարչության պետ,**
- Ա. Գ. ԳԱԼՈՎՅԱՆ, թ/ծ գնդապետ, բժշկական գիրուրյունների ղոկարոր,  
պրոֆեսոր, ԵՊՀ ՈՒԲ պետի պաշտոնի ժամանակավոր կապարող,**
- Ա. Վ. ՄԱՐԳԱՅՅԱՆ, թ/ծ կապիկան, բժշկական գիրուրյունների թեկնածու,  
ՀՀ ՊՆ ԿԿՀՀ քերասպահիկ բաժանմունքի պետ**



Թոքարորդերը, համաձայն «Հիվանդությունների, վնասվածքների և մահվան պատճառների միջազգային դասակարգման X կերանայման» (1992), բնորոշվում են որպես թոքերի սուր օջախային վարակիչ-բռրդոքային հիվանդությունների խումբ: Դրանք առանձնանում են ծագումնարանությամբ, ախտաբանությամբ, մորֆոլոգիական բնորոշումով, բորբոքային

պրոցեսում շնչառական օրգանների առավել ներառվածությամբ և ներավելույար բորբոքային արտաքիրտի պարտադիր առկայությամբ:

Թոքարորդը առավել տարածված հիվանդություններից է: ԱՄՆ-ում տարեկան գրանցվում է հիվանդության ավելի քան 3 միլ դեպք, Ռուսաստանում՝ 1 միլ-ից ավելի: ԱՄՆ-ում թոքարորդից և դրա բարդություններից տարեկան մահանում է շուրջ 60 000 մարդ, ընդունին արտահիվանդանոցային թոքարորդերից մահացությունը՝ 1–5 % է, իսկ ներկանդանոցային թոքարորդերից՝ 20–40 %:

Ռուսաստանում թոքարորդով հինգ հիվանդից երկու-երեք հիվանդներ չի ախտորոշվում: Ընդհանուր առմամբ թոքարորդը հիվանդության առաջին 3 օրվա ընթացքում ախտորոշվում է 35 % դեպքում:

Վերջին ժամանակներս ՀՀ-ում ևս դիտվում է թոքարորդով հիվանդացության և մահացության աճման կայուն միտում:

Թոքարորդերն ունեն արտահայտված սեղոնային բնույթ. ծմուան և գարնան ամիսներին կրուպող թոքարորդը կազմել է տարեկան հիվանդացության մինչև 75 %-ը, իսկ օջախային՝ մոտ 70 %-ը: Էական բացասական ազդեցություն ունեն մարտական գործունեության պայմանները, որոնց ժամանակ հիվանդացությունը կտրուկ աճում է: Հիվանդության ելքի վրա զգալի չափով ազդում է հիվանդների տարիքը. բարձր տարիքային խմբում մահվան դեպքների թիվը 2–3 անգամ ավելի է:

Դրանց կեսը բաժին է ընկնում հիվանդության 7–12 շաբաթներին: Անբարենպաստ ելք հիմնականում արձանագրվել է զորային օղակում:

Կրուպող թոքաբորբի ժամանակ բարդությունները (սուր սրտանոթային և սուր շնչառական անբավարարություն, թոքերի թարախակույտ) առաջանում են 2 անգամ ավելի հաճախ, քան օջախային թոքաբորբի դեպքում: Հարկ է նշել, որ հոսպիտալացնելիս «թոքաբորբ» նախնական ախտորոշում դրվում է 50 % դեպքերում, մնացած՝ դեպքերում՝ որպես «զրիա», հազվադեպ՝ «թոքերի տուրերկույող»:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տվյալներով թոքաբորբը լինում է 2 տեսակի՝ բակտերային (90 %) և վիրուսային (10 %), ընդ որում, հիվանդների 86 %-ի խորիս հետազոտության ժամանակ հայտնաբերվել են պնևմոկոկ և պմևմոկոկ+ստրեպտոկոկ, հազվադեպ նկատվել են հեմոլիտիկ ստրեպտոկոկ և ստաֆիլոկոկ, իսկ 7 % դեպքերում բակտերիալ ֆլորայի աճ չի արձանագրվել: Թոքաբորբի վարակման հիմնական ուղին եղել է բրոնխոզ: Նպաստող գործոններից կարելի է նշել սառեցումը:

Ներկայումս մեծ ուշադրություն են դարձնում ոչ տիպիկ թոքաբորբերին: Սրանք ոչ տիպիկ կարող են լինել երկու տարբերակով.

- ծագումնաբանորեն՝ միկոպլազմային, քլամիդային և լեզվոնելյոզային,
- ըստ ընթացքի:

Մեր կողմից վերլուծվել են ժամկետային զինծառայողների շրջանում 2001–2008 թթ. ժամանակահատվածում արձանագրված ըստ ընթացքի ոչ տիպիկ թոքաբորբերի կլինիկական-լաբորատոր առանձնահատկությունները: Դրանք եղել են բարձր վարակելիությամբ սուր վարակիչ հիվանդություններ, որոնց ժամանակ հիմնականում ախտահարվել է շնչական համակարգը, հատկապես՝ թոքերը: Այդ իսկ պատճառով մենք պայմանականորեն դրանք միավորել ենք միևնույն խմբում որպես «թոքաբորբ»: Ըստ մեր տվյալների՝ հիվանդության առաջին ախտանշանները ի հայտ են եկել հիվանդների հետ շփվելուց հետո 2–8-րդ օրերին: Վարակումը տեղի է ունեցել օդակարիլային եղանակով և շփման միջոցով:

Ըստ ընթացքի արձանագրվել են կայծակնային, սուր և դանդաղ ձևեր: Հիվանդների մեծ մասի մաշկը եղել է կեղտոտ գունաւոր, նրանք կարծ ժամանակում հյուծվել են, ինչը օրգանիզմի արագ ինքնաբունավորման վկայությունն է:

Հիվանդությունն ընթացել է 2 շրջանով.

**I շրջանում** հիվանդությունը հիշեցնում է վերին շնչուղիների կատառը և արտահայտվում է ջերմության բարձրացմամբ մինչև  $39\text{--}40^{\circ}$ , դեմքի արյունալցմամբ, որը հետագայում փոխարինվել է գունատությամբ, դեղնավուն երանգով, ձայնի թուլացմամբ, խոպոտությամբ, ընդիուազ մինչև ափոնիա, ընդիանուր թուլությամբ, հազվադեպ՝ քրային արյունահոտությամբ: Ըստ մեր դիտարկումների՝ այս շրջանում որոշ դեպքերում կարող է հետ զարգանալ (հիվանդացածների 20 %-ը, շփման մեջ 50-60 %-ը):

**II շրջանում արձանագրվել է շնչակողի ու բրոնխների, թոքերի կամ այլ օրգան-համակարգերի ախտահարում:**

Թոքերի ախտահարումները կլինիկորեն դրսևորվել են մարմնի ջերմության բարձրացումով մինչև  $37,5-40^{\circ}$  և ավելի, հազվադեպ չոր, ավելի շատ նոպայածն կամ խեղող բնույթի հազոր, որն ուղեկցվել է շճային, թանձր թարախային, երթեմն ժանգագույն երանգով խորխի արտադրությամբ: Դիտվել են քրային արյունահոսության եզակի դեպքեր: Կրծքավանդակում ցավեր համարյա չեն արձանագրվել: Թոքերում շնչառությունը երթեմն եղել է կոշտ, լսվել են տարրեր տրամաչափի հազվական և տարածուն խզզոցներ:

Հիվանդության վաղ ախտորոշումը եղել է բավականին դժվար, քանի որ դրա արտահայտնան ձևերը տարրեր էին, ընթացքը շատ դեպքերում լատենտ էր կամ վերին շնչուղիների թերթ կատարի նման, հետո հիվանդների վիճակը կտրուկ ժանրացել է, և ի հայտ է եկել ռեսպիրատոր դիստրես համախտանիշը:

Հիվանդության կլինիկական ընթացքի վրա ազդել է առաջին իսկ դեպքերից հետո կուեկտիվի բոլոր անդամներին իրուպրոֆեն, պարացետամոլ, մոտրին և վիտամին «3» նշանակելը: Այդ պատճառով հիվանդության պատկերը աղավաղվել է, որոշ դեպքերում ախտանշանները կամ բուլացած էին, կամ պարզապես չկային, առաջին շրջանը անցել է աննկատ՝ ջերմությունը չի բարձրացել, հազը չի անհանգստացրել, հիվանդների ինքնազգացողությունը եղել է բավարար: Նրանք հայտնաբերվել են պատահարար՝ պլանային ֆլյուորո- կամ R-հետազոտման ժամանակ: Բնորոշ է եղել թոքերի օջախային ախտահարումը: Հաճախ կլինիկորեն ախտորոշված թոքաբորբը չի ունեցել R-հաստատում և հակառակը:

Պետք է նշել, որ հիվանդության ժամանակ երթեմն տեղի է ունեցել առանձին օրգանների ախտահարում (բլեֆարիտ, օսիտ):

**Երիոգրոպ բուժում:** Թոքաբորբերի երիոտրոպ բուժման ընդիանուր մոտեցումները կարեի է ձևակերպել հետևյալ կերպ:

Նախկինում թոքաբորբերի երիոտրոպ թերապիան սկսվել է անհապաղ՝ ախտորոշման հաստատումից անմիջապես հետո, և իմնիվել է ամենահնարավոր հարուցի մասին էմպիրիկ պատկերացումների վրա, քանի որ խորխի մանրէաբանական հետազոտությունը պահանջել է ժամանակ (ոչ պակաս, քան 2 օր) և գործնականում, անգամ ժամանակակից մերոդների կիրառման պայմաններում, մոտ 50 % դեպքերում ստացվել են ոչ ճիշտ արդյունքներ:

Մինչև վերջերս արտահոսպիտալային թոքաբորբերի բուժման ժամանակ լայնորեն կիրառվել են պենիցիլինները (բենզիլպենիցիլին և ամայիցիլին): Ավելի ուշ տարածում ստացավ առոգմեննտինը (ամոքսացիլին+կլավոլոնաքրո), որն ապահովում է հակարիոտիկի պաշտպանությունը  $\beta$ -լակտամազայից: Ներկայումս՝ թոքաբորբերի ինիցիալ թերապիայի ժամանակ, բենզիլպենիցիլինը կորցրել է իր լնարության դեղամիջոցի կարգավիճակը: Երիտասարդների բուժման ժամանակ, եթե նրանք չունեն թոքերի ոչ սպեցիֆիկ քրոնիկական հիվանդություններ, նախապատվություն է տրվում ամինոպենիցիլիններին:

Բուժման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.  
1. Ժամանակակից թոքաբորբերի երիոլոգիայում պնևմոկոլի և հեմոֆիլային

ցուայիկի հետ մեկտեղ զգալի դեր ունեն օրիգատ ներքջային մանրէները՝ միկրոպլազման և քլամիդը: Վերջիններս, ինչպես հայտնի է, զգայուն չեն թ-լակտամազային հակաբիոտիկների, այդ թվում նաև պենիցիլինների նկատմամբ,

2. հստակ կերպով դիտվում է պննամոկովի պենիցիլինակայուն շտամների աճում, ընդամենը դրանց թիվը հասնում է 30 %-ի,

3. լուրջ խոշընդոտ է պենիցիլինների լայն կիրառման հետևանքով դրանց նկատմամբ որոշ հիվանդների ձեռք բերած ինունային գերզայնությունը:

Ստեղծված իրավիճակում ավելի մեծ ուշադրություն են գրավում մակրոլիդները, քանի որ ոչ միայն պննամոկովի, այլ նաև միկրոպլազմայի և քլամիդի նկատմամբ դրանց արդյունավետությունը մեծ է: Անիրածեցն է նշել, որ մակրոլիդների խմբի էտալոնային հակաբիոտիկ էրիթրոմիցինի կիրառումը խիստ սահմանափակ է, այն կորցրել է իր նախկին կլինիկական նշանակությունը, քանի որ թրու միջավայրում տվյալ հակաբիոտիկը կայուն չէ, կենսամատչելիությունը ցածր է, իսկ էրիթրոմիցինակայուն շտամները շատ են: Ուստի դրան փոխարիմել են մակրոլիդների խմբի այլ ներկայացուցիչներ՝ սպիրոմիցինը (ռովամիցին), ոռքսիրոմիցինը (ռովիդ), ազիրոմիցինը (սումամեն) և այլն: Այժմ քերև և միջին ծանրության արտահիվանդանոցային բորբոքերի բուժման համար դրանք արդարացիորեն դիտվում են որպես ընտրության դեղամիջոց:

Քանի որ որոշ մակրոլիդներ (մասնավորապես՝ ռովամիցինը) կարող են օգտագործվել ինչպես *per oral* (ներքերանային), այնպես էլ պարենտերալ (ներերակային) դեղաձևերով, արդարացված է դրանց նշանակումը նաև ծանր թոքաբորբերի ժամանակ: Օրինակ՝ սկզբնական շրջանում (առաջին 4-5 օրը), ռովամիցինը նշանակվում է ներերակային, հետո՝ բարենպաստ ընթացքի դեպքում, *per oral*:

Կարևոր է շեշտել, որ ռովամիցինը և այդ խմբի մյուս ներկայացուցիչները 60-70 % դեպքերում հաղթահարում են էրիթրոմիցինի նկատմամբ պննամոկովի կայունությունը: Մակրոլիդների (ռովամիցինի) մեկ այլ առավելություն է թեոֆիլինների հետ չփոխազդելը, ինչով միաժամանակյա օգտագործման դեպքում բացառվում է վերջիններիս գերդոզավորումը թոքերի քրոնիկական օրատրուկտիվ հիվանդությունների ժամանակ: Հայտնի է նաև, որ մակրոլիդներն այն հակաբիոտիկներից են, որոնց կողմնակի ազդեցությունը շատ փոքր է:

Թոքաբորբով հիվանդի արդյունավետ հակաբակտերիալ թերապիայի տևողությունը սովորաբար 7-10 օր է: Սկզբնապես նշանակված հակաբիոտիկի անարդյունավետության դեպքում (մոտ 7-15 %) այն պետք է փոխարիմել մեկ այլ հակաբիոտիկով՝ ըստ մանրէաբանական հետազոտության արդյունքի, կամ օգտագործել երկրորդ ընտրության հակաբիոտիկներ, որոնց շարքն են դասվում ցեֆալուպորինները, մոնորակտուամները, իմիակտեմը և ֆոտոխինոլոնները:

Ֆոտոխինոլոնները (պեֆլոքսացին, օֆլոքսացին, ցիպրոֆլոքսացին) ակտիվ են գրամ-բացասական մանրէների մեծ մասի, ինչպես նաև տարբեր ստրեպտոկոկների և էնտերոկոկների նկատմամբ, բայց ակտիվ չեն անօդակյացների (անաերոբների) նկատմամբ: Դրանք միկրոպլազմային, քլամիդիային և լեզիոնելյոզային

վարակների բուժման ժամանակ մակրոլիդներին լիարժեք փոխսարինողներ են: Ընդ որում, առավել արդյունավետ են այսպես կոչված ռեսպիրատոր ֆոռիխինոլները (մոքսիֆլոքսացին, լևոֆլոքսացին):

Մոնորակտամային հակարիտիկների նոր դասը ներկայացված է ազգրենումով (ազակտամ): Այն ակտիվ է գրամ-բացասական օդակյաց հարուցիչների (սալմոնելա, շիգելա, ադիքային ցուպիկ, պրոտեյ, կլեբսիելա և այլն) նկատմամբ: Կարևոր է դրա կայունությունը թակտամազների նկատմամբ:

Թերև ընթացք ունեցող բռքարորդերի ժամանակ ինտենսիվ թերապևտիկ միջոցառումներ սովորաբար չեն պահանջվում, բավական է անկողնային ռեժիմ և պենիցիլինային խմբի հակարիտիկի կանոնավոր կիրառում (պատերազմական պայմաններում ցանկալի է պարէնտերալ օգտագործում):

Միջին ժանրության բռքարորդերի ժամանակ, հատկապես՝ թուլացած և հյուծված հիվանդների համար, համալիր բուժումը պարտադիր կերպով պետք է ներառի համարժեք հակարիտիկաբերապիտի հետ մեկտեղ արյան փոխսարինիչ հեղուկների ներերակային ներարկում, ինչն ապահովում է դեղինտոքսիկացիան և վարակային շոկի կանխարգելումը:

Ծանր բռքարորդերի բուժումը պետք է լինի համալիր և ներառի հետևյալ միջոցառումներն ու դեղամիջոցները՝

- համարժեք հակարակտերիալ թերապիա,
- իմֆուզիոն թերապիա (համարժեք քանակով արյան փոխսարինիչ հեղուկներ),
- անորապիտիկներ (սուլֆոկամֆոկախին), վազոպրեսորներ (մեզատոն, նորադրենալին, դոֆամին),
  - վարակային-թունային շոկի զարգացման դեպքում ստերոիդային հորմոններ, սրտային գլիկոզիդներ,
  - արյան փորք շրջանառության գերծանրաբեռնվածությունը կանխելու նպատակով ցուցված են միզամուղներ:

Իրենց նշանակությունը չեն կորցրել ավանդաբար օգտագործվող ոչ ստերոիդային հակարորդոքային դեղամիջոցները (դիկլոֆենակ, ինդոմետացին և այլն) և ասպիրինը: Ասպիրինի կիրառման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել դեղամիջոցի ցավազրկու, ջերմիջենող, հակարորդոքային և հակաազրեգանտացին ազդեցությունը: Վերջինս շատ կարևոր է միկրոթրոմբոզների կանխարգելման և միկրոցիրկուլյացիայի կարգավորման համար: Ծանր դեպքերում պարտադիր կերպով կիրառվում են նաև ուղղակի հականակարիններ (հեպարին, ֆրաքսիպարին):

Լավ արդյունք են տալիս նաև խորխարե-խորխալույծ միջոցները՝ ալթեյ, խեթկակուան, բրոմիկեսին, ացետիլցիխտեին և այլն: Բրոնխներում մածուցիկ խորխի կուտակման հետևանքով բրոնխային անցանելության արտահայտված խանգարման և անարդյունավետ հազի դեպքում ցուցված է սանացիոն բրոնխոսկոպիա:

Բուժման պարտադիր բաղադրիչ պետք է լինեն ֆիկիոթերապևտիկ մեքոդները՝ սուր շրջանում բուժական ինհալացիաներ, ջերմության կարգավորումից հետո նանանեխի թերթիկների, բանկաների կիրառում և այլն:

Սուր շնչառական անբավարարության զարգացման դեպքում անհրաժեշտ են խոնավ թթվածնով ինհալացիաներ և բրոնխոսպազմոլիստիկների կիրառում։ Շնչառության կտրուկ ընկճման դեպքում նշանակվում են շնչառական անալեպտիկներ (էրիմիզոլ, կարդիամին), իսկ անհրաժեշտության դեպքում կատարում են նաև արհեստական շնչառություն։

Զինծառայողներին բուժում նշանակելիս, հատկապես՝ ծանր ընթացքի դեպքում, պեսք է հաշվի առնել նրանց վրա մարտական իրավիճակի ստրեսային գրքուների երկարատև ազդեցությունը, քրոնիկական գերլարվածությունն ու սննման անբավարարությունը։ Նման դեպքում թերապևտի խնդիրն է օրգանիզմում տեղի ունեցող ախտաբանական պրոցեսի շրջայի հանգուցային օդակների վրա դեղորայքային միջոցներով համալիր ներգրծության ապահովումը։ Այդ նպատակով կիրառվում են էնտերալ և պարէնտերալ սպիտակուցային խառնորդներ (ալբումին, պոլիամին), անարողիկ ստերոիդներ (ռետարուլի, ներորուլ), հակաօքսիդանտային համակարգի մոդուլատորներ (ռինիքիոլ), պոլիվիտամիններ։

Մեր ուսումնամիջությունը վկայում է, որ վերը նշված միջոցների կիրառումը նպաստել է թոքաբորբով հիվանդացած զինծառայողների արդյունավետ առողջացմանը՝ կիլնիկական, լաբորատոր և ռենտգենարանական չափորոշիչներով։

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Военно-полевая терапия». Ред. А. Л. Раков, А. Е. Сосюкин. СПб., 2003.
2. «Руководство по медицинскому обеспечению Вооруженных Сил Российской Федерации на мирное время». М., 2001.
3. I. A Guchev, V. L. Yu, A. Sinopalnikov, O. I. Klochkov, R. S. Kozlov, L. S. Stratchounski. Management of nonsevere pneumonia in military trainees with the urinary antigen test for Streptococcus pneumoniae: an innovative approach to targeted therapy. «Clinical Infectious Diseases», 2005.
4. V. V. Kulikov, A. P. Kabalin, V. N. Ladchuk, A. I. Panteleev et al. New methodological aspects for organizing military medical competence. «Voen Med Zh», 2003, № 324.
5. J. Taseski, B. Balint, M. Radović. Blood transfusion therapy at the Military Medicine Academy—present possibilities. «Vojnosanitetstvo pregleđ», 2000, № 57.

## ВОЕННАЯ МЕДИЦИНА

### К ВОПРОСУ ДИАГНОСТИКИ И ЛЕЧЕНИЯ ПНЕВМОНИЙ СРЕДИ ВОЕННОСЛУЖАЩИХ

А. М. ПАРСАДАНЯН, полковник м/с, доктор медицинских наук, Начальник Военно-медицинского управления ГШ ВС РА, С. Г. ГАЛСТЯН, полковник м/с, доктор медицинских наук, профессор, ИО начальника ВМФ ЕГМУ, М. В. САРГСЯН, капитан м/с, кандидат медицинских наук, Начальник терапевтического отделения ЦКВГ МО РА

#### РЕЗЮМЕ

Пневмонии характеризуются как группа острых очаговых инфекционно-воспалительных заболеваний легких.

В соответствии с данными Второй мировой войны, пневмония имеет

бактериальную (90 %) или вирусную (10 %) этиологию. В настоящее время много внимания уделяется также атипичным формам пневмонии.

При лечении пневмонии необходимо учитывать множество факторов: течение болезни, состояние больного, этиологические и другие особенности, чувствительность возбудителей к медикаментам и т. д. В случае военнослужащих необходимо также учитывать длительное воздействие на них стрессогенных факторов боевой ситуации, хронического перенапряжения и недостаточного питания.

Исследования показывают, что предложенные авторами методы лечения обеспечивают эффективность выздоровления военнослужащих.

## MILITARY MEDICINE

### ON THE ISSUE OF DIAGNOSING AND TREATING PNEUMONIA AMONG SERVICEMEN

A. M. PARSADANYAN, Colonel of Medical Service, Doctor of Medical Sciences,  
Head of the Military-Medical Board of the Main Staff of the RA Armed Forces,

S. G. GALSTYAN, Colonel of Medical Service, Doctor of Medical Sciences, Professor,  
Acting Head of the Military-Medical Faculty of Yerevan State Medical University,

M. V. SARGSYAN, Captain of Medical Service, Candidate of Medical Sciences,  
Head of the Therapeutic Department of the Central Clinical Military Hospital of the MOD, RA

#### SUMMARY

Pneumonia is characterized as a group of acute nodal infectious-inflammatory diseases of lungs.

According to the data of the World War II, pneumonia has bacterial (90 %) or viral (10 %) etiology. At present atypical types of pneumonia attract much attention.

While treating pneumonia it is necessary to take into account a great number of factors: the course of disease, patient's condition, etiological and other peculiarities, causative agents' sensitivity towards medicines, etc. In case of servicemen it is necessary to take into consideration long-term exposure of stressors of combat situation, chronic overstrain and malnutrition.

The studies show that the methods of treatment proposed by the authors ensure the effectiveness of servicemen's recovery.

## ԿՈԴՐԱՑՆՈՂ ԼԱԶԵՐ. ՄՈՏ ԱՊԱԳԱՅԻ ԶԵՆՔ

Ա.Հ. ՄԻՆԱՍՅԱՆ, ք/ծ ավագ լեյտենանտ,  
ՀՀ ԶՈՒ-ի ԳԸ ռազմաբժկական վարչության կիրակական օրդինատոր



Պատմության ընթացքում ռազմական դոկտորիները, ռազմավարությունն ու մարտավարությունը համապատասխանեցվել են զինված պայքարի առկա միջոցներին, որոնք իրենց հերթին շարունակական փոփոխության են ենթարկվել նոր տեխնոլոգիաների զարգացման և ներդրման հետևանքով:

Ներկայումս ռազմարվեստը կանգնած է կտրուկ փոփոխության հերթական փուլի շեմին: Այդ փոփոխությունը պայմանավորված է տարբեր տեսակի ոչ մահացու գեներերի, այդ թվում՝ լազերային համակարգերի, ստեղծմամբ և կիրառմամբ:

Ռազմական նպատակով կիրառվող լազերային համակարգերի շարքում<sup>1</sup> առանձնահատուկ տեղ ունեն այսպիս կոչված «կուրացնող» լազերները: Գաղտնիք չէ, որ ցանկացած քանակի ամենակարևոր գործուներից է կենդանի ուժը՝ զինվորը, և նրա ժամանակավոր կամ անվերադարձ կուրացումը կարող է ճակատագրական լինել բանակի մարտունակության համար: Կուրացնող լազերը, ի տարբերություն այլ լազերային համակարգերից, անհամեմատ ավելի էժան և արդյունավետ է, քանի որ մարդու տեսողությունը վճասելը շատ ավելի հեշտ է և քիչ էներգիա է պահանջում, քան մարդկանց կամ զրահատեխնիկայի ոչնչացումը:

Լազերը ունի եզակի հատկություններ, որոնց շնորհիվ տարբերվում է լրացի այլ աղբյուրներից: Նախ և առաջ՝ լազերը ճառագայթում է ալիքի մեկ երկարություն, այսինքն՝ միագույն է<sup>2</sup>: Երկրորդ՝ լազերի ճառագայթումը կոհերենտ է ըստ ժամանակի և տարածության, գրեթե չի տարամիտում<sup>3</sup>: Լազերի ճառագայթումը կարող է լինել անընդհատ և ինվուլսային: Անընդհատ լազերը կարող է լինել վայրկյանում վատուի մեկ հազարներորդականից մինչև հազարավոր վատու հզորությամբ: Ինպուլսային լազերների ճառագայթման հզորությունը կարող է հասնել միլիոնավոր վատուերի:

<sup>1</sup> Ռազմական բնագավառում լազերների կիրառման մասին ավելի հանգամանորեն տես Զ.Թ. Կիրակոսյան, Հայաստանի պաշտպանության ուժային բազմապատկության տեխնոլոգիաներ: «ՀԲ», 2003, հմ. 3, 4:

<sup>2</sup> Steve J. Sullivan. Jane's Unconventional Weapons Response Handbook. Lasers. Alexandria, 2002:

<sup>3</sup> Լազերների որոշ առանձնահատկությունների մասին տես, օրինակ, Ա.Բ. Ալավերդյան, Ա.Հ. Զիլիմզարյան, Գերկարճ լազերային իմպուլսների ստացման և նրանց որոշ կիրառության մասին: «ՀԲ», 2004, հմ. 3–4:

Լազերային տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրել է լազերի լայն կիրառմանը ամենատարբեր ասպարեզներում: Լազերի նշանակությունը բժշկության և արդյունաբերության մեջ ակնհայտ է:

Ժամանակակից լազերային տեխնոլոգիաները լայն տարածում են ստացել նաև ուսումնական բնագավառում: Մասնավորապես՝ լազերը կիրառվում է հեռաչափներում, նշանառվական գործիքներում, ռադարներում, տարրեր տեսակի զգայարարներում և այլ սարքերում: Մշակվում են մեծ հզորությամբ լազերներ՝ հակառակորդի զինծառայողների և տարրեր տեսակի զրահատեխնիկայի ոչնչացման համար: Միևնույն ժամանակ առավել մեծ ակնկալիքներ կան՝ կապված փոքր չափեր ու քաշ ունեցող կուրացնող լազերների հետ: Ուսումնական տեսակետից կուրացնող լազերների էական առավելությունն այն է, որ էներգիայի նվազ ծախսով կարելի է ստանալ մեծ արդյունք՝ հակառակորդի զինուժի լիովին կուրացում և մարտունակության բացարձակ կորուստ: Կուրացած զինծառայողը ոչ միայն ունակ չէ նշանառվական կրակ վարելու կամ գրոհելու, այլև կիրառելու ժամանակակից բարձր տեխնոլոգիական գենք, քանի որ վերջինս հաճախ պահանջում է վահանակի վրա դրս բերված տեղեկություն:

Նշենք, որ լազերի սկզբունքային կենսարանական թիրախը աչքի հյուսվածքն է: Լազերի վնասակար ազդեցությունը աչքի վրա կախված է լազերի ճառագայթման և այդ ճառագայթման տարածման միջավայրի փոխհարաբերությունից: Լազերի կարևոր պարամետրներն են ալիքի երկարությունը, էներգիան, իմպուլսի տևողությունը և ճառագայթի պատկերը աչքի մեջ ընկնելիս: Միջավայրի գործուներն են մթնոլորտի վիճակը՝ խոնավությունը, օդի շարժումը և աղտոտվածությունը, տեղանքի առանձնահատկությունները և այլն: Աչքի հյուսվածքների վնասումը կարող է լինել տարրեր աստիճանի՝ սկսած եղջերաբաղանքի ու ոսպնյակի մակերեսային վնասումից (կարող են բուժվել հատուկ վիրարուժական միջամտությամբ) և վերջացրած ցանցաքաղանքի վնասմամբ և արյունազեղումներով, որոնք առաջ են բերում բացարձակ կուրություն: Լազերի ազդեցությամբ աչքի վնասումը կախված է հետևյալ 4 գործուներից:

1. Էներգափանցում (որքան խորն է քափանցում լազերի ճառագայթը հյուսվածքի մեջ),

2. կլանում (որքան էներգիա է կլանում հյուսվածքը),

3. մարում (ինչպես է մարում կլանված լազերային էներգիան),

4. հյուսվածքի արձագանքը (սուր է, թե ժամանակածզված):<sup>4</sup>

Աչքի հյուսվածքներում լազերային ճառագայթի էներգիայի մարումը տեղի է ունենում ջերմային, ֆոտոքիմիական և խոնացման պրոցեսների միջոցով: Ամենավնասարերն է ջերմային պրոցեսը, որի հետևանքով լազերի ճառագայթային էներգիան վերածվում է ջերմայինի, որն էլ վնասում է աչքի հյուսվածքի քջիջները:

<sup>4</sup> Stu D. Beason. The E-Bomb: How America's New Directed Energy Weapons Will Change The Way Future Wars Will Be Fought. Cambridge, 2005:

Ուազմական նախանշանակման լազերները կարելի է դասակարգել մի քանի խմբի.

- *համակարգեր, որոնք նախադիսված չեն եղել կուրացման համար, սակայն դրանց օգտագործումը կարող է վասել հակառակորդի զինվորների աշքերը՝ լազերային հեռաչափներ, նշանոցներ, թիրախի մարկերներ, լազերային օպտիկական ռադարային համակարգեր (*LIDAR*) և այլն: Թեև այս համակարգերի կիրառումը նպատակատղված է թիրախների հայտնաբերմանը և ճշգրիտ նշանառության ապահովմանը, դրանք բոլորն էլ կարող են կուրացնել հակառակորդի զինվորներին: Ներկայում արագ զարգացող դիրողային լազերները, որոնք փոքր չափերի են, էժան ու արդյունարար, զգայիտնեն կրնդական այս խումբը,*

- *հակազգայարարական համակարգեր, որոնք նախատեսված են հակառակորդի օպտիկական դիտակների, տեսածիրների, հեռաչափների, նշանոցների և կապի համակարգերի բացահայտման, աշխատանքի խարարման ու ոչնչացման համար: Հակառակորդի կողմից այս համակարգերի օգտագործման դեպքում կուրացման վտանգը շատ մեծ է: Անձնակազմը հեռադիտակային օպտիկա օգտագործելիս առավելագույն վտանգի է ենթարկվում, քանի որ խոշորացույցները էապես մեծացնում են աչքի մեջ ընկնող լազերային ճառագայթման ինտենսիվությունը: Ավելին, հակազգայարարական լազերային համակարգերը կարող են սովորական հեռադիտակի խոշորացույցները ճանաչել որպես ոչնչացման ենթակա էլեկտրապոտիկական զգայարարներ, քանի որ հեռադիտակների և շրջադիտակների խոշորացնող ոսպնյակներից անդրադարձող ճառագայթմանը չեն տարբերվում էլեկտրապատիկական զգայարարներից անդրադարձող ճառագայթման (օրինակ՝ աներիկյան «Ստինգը (Stingray)», «Դեյզեն (Dazer)» և «Կորբա (Cobra)» համակարգերը),*

- *զինուժի կուրացման լազերային համակարգեր, որոնք հատուկ ստեղծված են հակառակորդի կենդանի ուժի կուրացնելու համար: Առաջին անգամ նման զենք (*LASER DAZZLE SIGHT*) կիրառել է բրիտանական նավատորմը 1982 թ. Ֆուլթենդյան պատերազմի ժամանակ արգենտինացի օդաչուներին կուրացնելու և բրիտանական նավերի վրա նրանց գրոհները խափանելու նպատակով,*

- *ռազմական տեխնիկայի և կենդանի ուժի ոչնչացման համար նախանշակված լազերներ, որոնք ունեն համապատասխան հսկայական հզորություն (ինտենսիվություն):*

- *դրանց շարքը կարելի է դասել նաև սովորական լույսի գերհզոր աղյուրները, որոնք ունակ են վնասելու հակառակորդի կենդանի ուժի աշքերն ու մաշկը այնպես, ինչպես դա կաներ լազերային ճառագայթումը:*

Կուրացնող լազերներ արդեն ստեղծվել են. ներկայում դրանք փորձարկման և արտադրության փուլում են շատ երկրներում՝ ԱՄՆ-ում, Բրիտանիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Իսրայելում, Ռուսաստանում, Չինաստանում և

<sup>5</sup> Այս տեսակի լազերների մասին ավելի համգամանորեն տես «Ուազմական բնագավառի նորույթներ»: «ՀԲ», 2002, հմ. 4:

այլ պետություններում: Որպես օրինակ նշենք հետևյալ ամերիկյան համակարգերը<sup>6</sup>,

—«Սեյբեր 203 ԶՈԼԻՔՍ (Saber 203GSLICS)», որն ունի փոքր չափեր ու թերև քաշ և տեղադրվում է ստանդարտ U-203 40-մմ ականանետի մեջ՝ կցված U-16 հրացանին: Հակառակորդին կուրացնում է մեծ հեռավորության վրա,

—«Ստինգրի քոմքատ փրոտեկշն սիստեմ (Stingray Combat Protection System (AN/VLQ-7))», որը շարքից հանում է հակառակորդի զրահապատ և այլ մարտական տեխնիկայում տեղակայված օպտիկական և էլեկտրաօպտիկական սարքերը: Եթե լազերը որսում է հակառակորդի օպտիկայից կամ էլեկտրոնային զգայարարական համակարգից անդրադարձած ճառագայթը, նրա հզրությունը կտրուկ մեծանում է՝ շարքից հանելով տվյալ օպտիկական սարքը և, միաժամանակ, կուրացնելով սարքի օպերատորին,

—«Դեյզեր (Dazer)» ալեքսանդրիտի կիրառմամբ աշխատող լազերային գենք է, որի ինֆրակարմիք ճառագայթումը այրում է հակառակորդի զինվորների աչքի ցանցարադանքը և կուրացնում նրանց: Մարտկոցի հզրությունը ապահովում է 1000 կրակոց՝ րոպեում 50 կրակոց հաճախականությամբ,

—«Կոբրա (Cobra)» համակարգը ննան է «Դեյզերին», սակայն որպես ակտիվ տարր՝ այդ դիոդային ինֆրակարմիք լազերում օգտագործվում է նեռդիմը,

—«Փեսիես օպտիկալ մյունիշն (Perseus Optical Munition)» համակարգը տեղադրվում է U-16 U3 հրացանին կցվող ականանետի մեջ և գեներում է իմպուլսային լազերային ճառագայթում, որը կուրացնում է հակառակորդին և շարքից հանում օպտիկական էլեկտրոնային սարքերը,

—«ԼՍՍՍ (LCMS AN/PLQ4-5)» համակարգը նույնական տեղադրվում է U-16 հրացանին կցվող ականանետի մեջ, կուրացնում է թշնամուն և շարքից հանում նրա էլեկտրաօպտիկական սարքերը:

Կուրացնող լազերի ազգեցուքյունից պաշտպանվելու հարցը առայժմ լուծված չէ: Թեև կան երեք տարրեր մոտեցումներ, սակայն դրանցից ոչ մեկը չի ապահովում կուրացնող լազերից պաշտպանությունը առանց տեսողությունը խոչընդոտելու: Այդ մոտեցումներն են՝

—*խուսափում*. Եթե զինվորներին ստվորեցնում են խուսափել լազերային ճառագայթումից այն նույն մերողներով, որոնցով նրանք խուսափում են հակառակորդի զնդակներից, ապա դա չի կարող նրանց փրկել կուրացնող լազերներից: Օրինակ՝ շրջադիտակով հակառակորդի դիրքերի զննումը կարող է փրկել թշնամու զնդակից, բայց ոչ՝ լազերային ճառագայթումից: Հակառակը՝ շրջադիտակը, զգալի չափով մեծացնելով զննողի աչքի մեջ ընկնող լազերային ճառագայթի ինտենսիվությունը, պաշտպանելու վիճակը հանգեցնում է աչքի անհամենատ ավելի ծանր վնասվածքի: Կարելի է օգտագործել հեռուստախցիկներ, բայց դրանք նվազեցնում են զննման ճշգրտությունը և տեսողության դաշտը,

<sup>6</sup>Տե՛ս D. A. Freiwald. Compact Battlefield Lasers for Nonlethal Kill. «Marine Corps», № 82, 1 January, 1998:

– **աչքերից մեկիմ ոչ բափանցիկ ակնապանակի կրուժ:** Այս միջոցով կարելի է աչքերից մեկը պաշտպանել կուրացումից, սակայն այս դեպքում զինվորը կգրկվի պերիֆերիկ տեսողության մի մասից և հեռավորությունը ճիշտ որոշելու կարողությունից: Բացի այդ, զրկվելով մի աչքի տեսողությունից, զինվորը պետք է ստիպված գործի դնի մյուս աչքը, որի տեսողությունից նույնպես կարող է զրկվել,

– **զդիշների կիրառում:** Թեև սկզբունքորեն հնարավոր է կիրառել այնպիսի գտիշներ, որոնք ապահովեն կուրացնող լազերից աչքերի մասնակի պաշտպանությունն առանց տեսողության զգալի անկման, սակայն պարզ չէ, թե ինչպես է հնարավոր նախապես որոշել հակառակորդի կողմից կիրառվող լազերի տեսակը (ալիքի երկարությունը) համապատասխան գտիշներ օգտագործելու համար: Պաշտպանիչ գտիշները կարող են քիչ թե շատ կլանել համապատասխան ճառագայթումը, սակայն արդի լազերային տեխնիկան հնարավորություն է տալիս շատ կարծ ժամանակահատվածում գեներելու ալիքի տարրեր երկարություններով լազերի ճառագայթում (վերակառուցվող լազերներ):<sup>7</sup> Բնական է, որ այդ դեպքում գտիշը կկլանի ալիքի երկարությունների միայն նեղ տիրույթում արձակվող լազերային ճառագայթումը: Այների բոլոր երկարություններով ճառագայթման կլանումն ապահովելու դեպքում պաշտպանվող անձը ընդհանրապես կզրկվի տեսնելու հնարավորությունից:

Այսպիսով՝ կուրացնող լազերային գեները ներկայումս հասցվել է այն մակարդակի, որ կարող է լայնորեն կիրառվել տարրեր զինված հակամարտություններում: Կուրացնող լազերային գեները շատ էժան է և հեշտ կիրառելի: Այդ գեների օգտագործման փիլիստիվայությունը հիմնված է այն դրույթի վրա, որ թշնամուն սպասնելու փոխարեն գերադասելի է նրան պարզապես կուրացնել: Կույր զինվորը մարտունակ չէ, և եթե կուրացվածների զանգվածը շատ մեծ լինի, նրանք հակառակորդի համար հետագայում կդառնան մեծ տնտեսական թե: Կուրացնող լազերը հակառակորդի վրա գործում է նաև մեծ հուզահոգերանական ազդեցություն, քանի որ ամեն մի զինվոր շարունակ վախի մեջ է, որ կարող է ակնթարթորեն անվերադարձ կերպով կուրանալ: Կուրացնող լազերի մյուս վտանգը այն է, որ նրա փոքր շափերը, կիրառման հեշտությունը, էժանությունը կարող են հակառակորդին հնարավորություն տալ այդ գեներով գաղտնի կերպով զինելու իր բանակը և անսպասելիորեն կիրառելու մարտում: ՈՒստի պետք է քաջատեղյակ լինել կուրացնող լազերային տեխնոլոգիաների զարգացմանը, պատեհաժամորեն սկսել հետազոտություններ և աշխատանքներ՝ լազերային ճառագայթումից պաշտպանվելու համար, պատրաստ լինել դիմակայելու այդ գեների կիրառմանը: Կարծում ենք, որ լազերային տեխնոլոգիաների բնագավառում մեր մասնագետների կուտակած մեծ փորձը և առկա մտավոր ներուժը հուսարդող հանգամանքներ են՝ կուրացնող լազերից պաշտպանության համար մեր հանրապետությունում արդյունավետ միջոցներ մշակելու համար:

<sup>7</sup> Տե՛ս «Laser Institute of America». «Laser Safety Guide». 10th Edition. Ed. by Wesley Marshall and David Sliney. Orlando, 2000:

## ВООРУЖЕНИЕ И ВОЕННАЯ ТЕХНИКА

### ОСЛЕПЛЯЮЩИЙ ЛАЗЕР – ОРУЖИЕ БЛИЖАЙШЕГО БУДУЩЕГО

А. Г. МИНАСЯН, старший лейтенант м/с, клинический ординатор  
Военно-медицинского управления ГШ ВС РА

#### РЕЗЮМЕ

Военные доктрины, стратегия и тактика исторически строились на существующих средствах борьбы, которые в свою очередь постоянно менялись в результате развития и внедрения новых технологий.

Военное искусство стоит на пороге очередного этапа резкого изменения, что обусловлено появлением разных видов несмертельного оружия, в том числе – лазерного. Среди используемых в военных целях лазеров особое место занимают так называемые «ослепляющие» лазеры.

Широкое применение подобного лазера в ближайшем будущем реально и технически и технологически. Применение такого оружия может привести как к массовому выведению из строя военнослужащих, так и к резкому снижению боеспособности войск под воздействием морально-психологического фактора. Поэтому необходимо отслеживать процесс развития лазерных технологий и уже сейчас начать разработки по защите от воздействия этого типа оружия.

## ARMAMENT AND MILITARY EQUIPMENT

### BLINDING LASER – WEAPON OF THE NEAR FUTURE

Ա. Հ. MINASYAN, Senior Lieutenant of Medical Service, Resident of the Military-Medical Board of the Main Staff of the RA Armed Forces

#### SUMMARY

Military doctrines, strategy and tactics have been historically devised on the existing means of struggle which in their turn have constantly changed as a result of developing and introducing new technologies.

The art of war is on the threshold of the next stage of an abrupt change conditioned by the emergence of various types of nonlethal weapon, including the laser one. The so-called «blinding» lasers have a special place among the lasers used for military purposes.

The wide use of such a laser in the near future is real both technically and technologically. Using such a weapon may bring to both servicemen's mass disability and a drastic decrease of troops' fighting efficiency under the influence of moral-psychological factor. Thus, it is necessary to control the process of developing laser technologies and to begin elaborations on the protection from the impact of that type of weapon now.

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԾՐՁԱՆՈՒՄ  
ԳԼՈՒԽԵՐՈՒԼՈՆԵՖՐԻՏՆԵՐԻ ԿԼԻՆԻԿԱՅԻ ԵՎ ԲՈՒԺՄԱՆ  
ՈՐՈՇ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Մ. Գ. ԳԱԼՈՒՏՅԱՆ, թ/ծ գնդապետ, բժշկական գիրուրյունների ղոկվոր,  
պրոֆեսոր, ԵՊՀ ՈԲՖ պետի պաշտոնի ժամանակավոր կալարող,**

**Մ. Վ. ՍԱՐԳԱՅԱՆ, թ/ծ կապիրան, բժշկական գիրուրյունների քեկանածու,  
ՀՀ ՊՆ ԿԱԶՀ բերապետիկ բաժանմունքի պետ,**

**Մ. Ա. ՍԱՀԱԿՅԱՆ, թ/ծ կապիրան, ՀՀ ՊՆ ԵԿՀ ախտորոշչի բաժանմունքի քիշկ**



Զինված բախումների բուժապահովման փորձը ցոյց է տալիս, որ պատերազմի ժամանակ զինծառայողների շրջանում դիտվում է երիկամային հիվանդուրյունների զգալի աճում: Երիկամների երկկողմանի բորբոքայինդեգեներատիվ բոլոր հիվանդուրյունների մեջ սուր դիֆուզ գլոմերուլնեֆրիտները հանդիպել են 66 % դեպքերում: Պատերազմող երկրների

բանակներում տվյալ ախտաբանուրյան ուսումնասիրուրյունները վկայում են որոշակի առանձնահատկուրյունների առկայության մասին: Սի շարք հեղինակներ անգամ առանձնացնում են հատուկ հիվանդաբանական ձև՝ «ռազմական», «խրամատային» կամ «դաշտային» նեֆրիտ (երիկամարորք): Միևնույն ժամանակ որոշ հեղինակներ, հաշվի առնելով տվյալ նեֆրիտի զանգվածային և համաձարակային բոնկումները, ենթադրել են, որ հիվանդուրյունն ունի վիրուսային բնույթ, մյուսներն այն վերագրել են հիպովիտամինոզներին: Այսպիսով՝ «ռազմական» նեֆրիտ առաջ բերող գործոնների վերաբերյալ միասնական կարծիք չի եղել:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին սուր դիֆուզ գլոմերուլնեֆրիտների տեսակարար կշիռը փոքր-ինչ պակասել է, ինչը պայմանավորված է եղել քրոնիկական նեֆրիտների (իրենց հաճախականուրյամբ զբաղեցրել են երկրորդ տեղը) թվաքանակի ավելացմամբ: Ընդհանուր առմամբ՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ սուր և քրոնիկական նեֆրիտները կազմել են բոլոր երիկամային հիվանդուրյունների 98-99 %-ը:

Երիկամների մյուս հիվանդուրյուններից կարելի է նշել տուրերկովյոզը և հետվնասվածքային օստեոմիելիտիկ ամիլիտոզը: Ընդ որում, արձանագրվել է նաև ամիլիրդ փոփոխուրյունների արագ զարգացում, նույնիսկ մի քանի ամսվա ընթացքում:

Ներկայումս **տեղային ռազմական հակամարտությունների** ժամանակը բուժապահովման փորձի ուսումնասիրությունից պարզվել է, որ զինծառայողների շրջանում սուր գլոմերուլոնեֆրիտի հիվանդացությունն ավելի քան 2 անգամ գերազանցում է խաղաղ պայմանների ցուցանիշը: Հիվանդության բացահայտ կլինիկական պատկերը՝ դասական նեֆրիտիկ համախտանիշի (տրիադա) զարգացմանը, հանդիպում է ավելի քան 80 % դեպքերում:

Ներկայումս որպես սուր դիֆուզ գլոմերուլոնեֆրիտի հիմնական պատճառ են դիստում ստրեպտոբերմիաները (30 %), սուր շնչառական վիրուսային վարակները (26 %), սուր բորբաքորբը (18 %), իսկ սուր նեֆրիտի առաջացման դասական պատճառը՝ անզինան, զգալիորեն կորցրել է իր նշանակությունը (10 %):

Հիվանդության մյուս առանձնահատկությունը պրոցեսի հաճախակի և արագ քրոնիզացումն է:

Մեր կողմից հետազոտվել են բարձր լեռնային պայմաններում գլոմերուլոնեֆրիտով հիվանդների օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները:

Գանգատների շարքում առավել բնորոշ են եղել դեմքի, վերջույթների այտուցվածությունը, ընդհանուր բուլությունը, մեզի քանակի պակասումը, գլխացավերը: Հիվանդների մի մասը (14,6 %) գանգատվել է քաշի կորստից, մարմնի վրա բազմաթիվ տարածում բարախարշացների առկայությունից: Ըստ անամնեզի՝ հրանց 23,7 %-ը 1-2 ամսվա ընթացքում ունեցել է տարածում այնողերմիա և անարդյունք բուժվել է զորամասի բուժկետում: Հատկանշական է այն հանգամանքը, որ պիոներմիայով տառապում էին բարձր լեռնային պայմաններում 3 ամսից ավելի գտնվող զինծառայողները:

Հիվանդների մեծ մասը գտնվել է ծանր վիճակում. այսուցվել են դեմքը, վերջույթները, 2-3 օր անց մեծացել է որովայնը, ի հայտ է եկել օդի անբավարարության զգացում:

Կինհիկական ախտանիշներից են. անամնեզի հարաբերական երկարատևությունը, երիկամների ախտահարման հստակ կազմը բարձր լեռնային պայմաններում գտնվելու տևողության և պիոներմիայի հետ, այսուցային համախտանիշի գերակայումը, գրեթե 50 % դեպքերում այտուցները չեն ուղեկցվել հիպերտենզիայով անասարկայի վաղ զարգացմամբ: Մի շաք զինծառայողների մեզի քանակը պակասել է հիվանդության առաջին օրերից, իսկ 12-ը ունեցել են միզակապություն (անորիա):

Կննտրոնական կինհիկական զինվորական հոսպիտալ (ԿԿԶՀ) ընդունվելիս 82 % դեպքերում հիվանդների վիճակը գնահատվել է որպես ծանր և խիստ ծանր, մի մասը եղել է հյուծված, արգելակված, շատերն ունեցել են տարածում պիոներմիա, որոշ մասն էլ՝ արտահայտված հետոց: 17 հիվանդի կրծքավանդակի պերկուսիայով հայտնաբերվել է մինչև 3-4 կողի մակարդակը հասնող հեղուկ: Արյան ճնշումը հաճախ եղել է 150/100-160/110 մմ սնողիկի սյուն: Մեծ մասի լյարդը 4-6 սմ-ով դուրս էր զալիս կողատակից: 37 հիվանդի մեզի քանակը չի գերազանցել 350-540 մլ-ը:

Ունտգենաբանորեն 23 մարդու թոքամզի խոռոչում երկու կողմից եղել է հեղուկի կուտակում, հեղուկ եղել է նաև 3 հիվանդի սրտապարկում, սոնոգրաֆիկ ասցիտ հայտնաբերվել է 24 դեպքում, 9 դեպքում՝ սպլենոմեգալիա:

Բոլոր հիվանդների էրիթրոցիտների նստեցման արագությունը (ԷՆԱ) եղել է բարձր:

Հատկանշական են եղել երիկամների սոնոգրաֆիկ հետազոտության տվյալները. երիկամները եղել են մեծացած, պարենիլիման՝ հաստացած, էխոգենությունը՝ բարձր:

25 % դեպքերում մեզի տեսակարար կշիռը եղել է բարձր, սպիտամիզությունը՝ 2-3 %-ից բարձր, արձանագրվել է արտահայտված հեմատոլիիա:

Նեֆրիտով հիվանդները ենթակա են հոսպիտալացման՝ անկողնային ռեժիմի պահպանմամբ: Անհրաժեշտ է ջրի և կերակրի աղի սահմանափակում: Վարակի օջախների սանացիայի նպատակով 7-10 օր նշանակում են պենիցիլինային շարքի հակարբիտիկներ: Զարկերակային հիպերտենզիվայի առկայության դեպքում նշանակում են կալցիումի ներհակորդ (անտազոնիստներ՝ նիֆեղիպին, ամլոդիպին), β-աղրենապաշարիչներ (անապրիլին, կարվեդիլոլ), անգիոտենզինը փոխսակերպող ֆերմենտի ինհիբիտորներ (էնալապրիլ): Այսուցների ժամանակ ցուցված են միզամուղթներ (ֆուրոսեմիդ, վերոչպիրոն):

Վերջին տարիներին դիֆուզ գլոմերուլնեֆրիտի բուժման նպատակով լայնութեն կիրառվում է հեպարինը՝ օրական 15-20 հազար միավոր չափաբանակով (ենթամաշկային) կամ ցածր մոլեկուլային հեպարիններ՝ ֆրաքսիպարին, էնոքսապարին: Բավականին խոստումնալից է հակաազրեգանտների հետ (կուրանտիլ, սրբնատա) սուլոդեքսիդի կիրառումը: Նեֆրոտիկ համախտանիշի զարգացման դեպքում ցուցված է ցիտոստատիկների (ցիկլոֆուսֆան) օգտագործումը ստերոիդ հորմոնների հետ (այրենիզոլոն՝ օրական 60-90 մգ՝ չափաբանակի աստիճանական իջեցմամբ):

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Военно-полевая терапия». Ред. А. Л. Раков, А. Е. Сосюкин. СПб., 2003.
2. Ф. И. Комаров, О. С. Лобастов. Основные итоги и уроки медицинского обеспечения Советской Армии в годы Великой Отечественной войны. «Военно-медицинский журнал», 1990, № 5.
3. В. В. Пасыко. Организация медицинского обеспечения частей и соединений ограниченного контингента советских войск в Республике Афганистан при ведении боевых действий. Дис. канд. мед. наук. Л., 1986.
4. «Потери Вооруженных Сил СССР в войнах, боевых действиях и военных конфликтах». Статистическое исследование. М., 1993.

## ТЫЛОВОЕ ОБЕСПЕЧЕНИЕ

### НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ КЛИНИКИ И ЛЕЧЕНИЯ ГЛОМЕРУЛОНЕФРИТА СРЕДИ ВОЕННОСЛУЖАЩИХ

С. Г. ГАЛСТЯН, полковник м/с, доктор медицинских наук, профессор,  
ио начальника ВМФ ЕГМУ, М. В. САРГСЯН, капитан м/с, кандидат медицинских  
наук, Начальник терапевтического отделения ЦКВГ МО РА,  
М. С. СААКЯН, капитан м/с, ординатор диагностического отделения ЕГГ МО РА

#### РЕЗЮМЕ

Во время военных действий наблюдается значительный рост почечных заболеваний среди военнослужащих, в числе которых острые диффузные гломерулонефриты встречаются в 66 % случаев. Об этиологии данного заболевания единого мнения не существует: рассматривается как вирусная, так и авитаминозная версия ее возникновения.

В настоящее время в качестве основных причин острого диффузного гломерулонефрита рассматриваются стрептодермии (30 %), острые респираторные вирусные инфекции (26 %), острый пневмонит (18 %), а классическая причина острого нефрита – ангинा – потеряла свое значение и встречается в 10 % случаев.

Авторами исследованы особенности изменения клиники этой болезни, в том числе в горных условиях предлагается комплекс профилактических и лечебных мероприятий.

## LOGISTIC SUPPORT

### SOME FEATURES OF THE CLINICAL PICTURE AND TREATMENT OF GLOMERULONEPHRITIS AMONG SERVICEMEN

S. G. GALSTYAN, Colonel of Medical Service, Doctor of Medical Sciences, Professor,  
Acting Head of the Military-Medical Faculty of Yerevan State Medical University,  
M. V. SARGSYAN, Captain of Medical Service, Candidate of Medical Sciences,  
Head of the Therapeutic Department of the Central Clinical Military Hospital of the MOD, RA,  
M. S. SAHAKYAN, Captain of Medical Service, Resident at the Diagnostics  
Department of the Yerevan Garrison Hospital of the MOD, RA

#### SUMMARY

A significant growth of kidney diseases among servicemen, 66 % of which are cases of acute diffuse glomerulonephritis. There is no common opinion on the etiology of the given disease: both viral and avitaminotic versions of its origin are examined.

At present streptococcal impetigo (30 %), acute viral respiratory infections (26%), acute pneumonitis (18 %) are examined as basic causes of acute diffuse glomerulonephritis, and the classical cause of acute nephritis – tonsillitis – lost its significance and is found in 10 % of cases.

The authors have studied the features of changing the clinical picture of this disease, as well as a complex of preventive and medicinal measures is proposed in mountaneous conditions.

**«ՄՈԼՈՏՈՎԻ–ՌԻԲԵՆՏՐՈՎԻ ՊԱԿՏԸ»  
ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՍՏԱՏԱՎԱՅՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ  
Լ. Գ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ, ավագ լեյտենանակի, <<ՊՆ «Մայր Հայաստան»  
զինվորական բանգարանի գլխավոր իսորհրդակու**



1939 թ. սեպտեմբերի 1-ի լուսաբացին գերմանական գործը հանկարծակի ներխուժեց Լեհաստան: Սեպտեմբերի 3-ին Սեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Ավստրալիան և Նոր Զելանդիան պատերազմ հայտարարեցին Գերմանիային: Ակսվեց երկրորդ աշխարհամարտը: Մինչ այդ՝ 1939 թ. օգոստոսի 23-ին, Մուկվայում ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովում Վ. Մոլոտովը և Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ի. Ֆոն Ռիբենտոռը ստորագրեցին Խորհրդային Սիուրյան և Գերմանիայի միջև շիածակվելու մասին պայմանագիր, որը պատմության մեջ հայտնի է որպես «Մոլոտովի–Ռիբենտոռի պակտ»: Ստորագրվեց նաև Արևելյան Եվրոպայում երկու պետությունների տարածքա-քաղաքական շահերի ոլորտների սահմանագատման մասին լրացուցիչ գաղտնի արձանագրություն:

**Խորհրդա-գերմանական մերձեցումը:** Գերմանիայում 1933 թ. Հիտլերի իշխանության գալուց և «ազգային հեղափոխության» ընթացքում տեղի ունեցած հակառակունիսատական ելույթներից հետո ԽՍՀՄ-ը ցուցադրաբար խօսեց Գերմանիայի հետ մինչ այդ սերտ տնտեսական ու ռազմական կապերը: Կարծիք կա, որ Ստալինը, Հիտլերին համարելով գերմանական ընտրախսավի ժամանակավոր դրածո, այդ քայլին դիմեց Գերմանիայի ենթադրյալ խսկական տերերին շանտաժի ենթարկելու նպատակով<sup>1</sup>: Դրանից հետո նոյն հականացիստ Մ. Լիտվինովի գլխավորած արտգործժողովում ուղեգիծը դարձավ Եվրոպայում «Կոլեկտիվ անվտանգության» համակարգի ստեղծումը, այսինքն՝ այնպիսի միջազգային պարտավորությունների ձևակորումը, որոնք նպաստեին Վերսայան համակարգի պահպանմանը և խոշընդուտեին Գերմանիայի ուսանշյատական պլաններին:

1935 թ. մարտին Գերմանիան վերջնականացես հրաժարվեց 1919 թ. Վերսայան խաղաղության պայմանագրի ուղղմական հողվածները կատարելուց: Երկրում մտցվեց համընդհանուր զինապարտություն և սկսվեց բանակի վերազինումը, սակայն խաղաղության երաշխավոր արևմտյան տերությունները որևէ քայլ չձեռնարկեցին դրան հակագելու համար:

<sup>1</sup> Տես Հ. Յ. Սլուշ. Сталин и Гитлер, 1933—1941. Расчеты и просчеты Кремля. «Отечественная история», 2005, № 1:

ԽՍՀՄ-ը 1935 թ. մայիսի 2-ին Ֆրանսիայի, իսկ մայիսի 16-ին՝ Չեխովլովակիայի հետ կնքեց փոխօգնության մասին պայմանագրեր: Գերմանիան և ճապոնիան իրենց հերթին 1936 թ. նոյեմբերին ստորագրեցին ԽՍՀՄ-ի դեմ ուղղված «Հակակոմինտերնյան պակտ», որին 1937 թ. միացավ Խտալիան: ԽՍՀՄ-ը ուղղմական օգնություն էր ցույց տալիս Խսպանիայի հանրապետական կառավարությանը, մինչդեռ Գերմանիան և Խտալիան ակտիվ կերպով աջակցում էին գեներալ Ֆրանկոյի խոռվությանը: 1938 թ. մարտին Գերմանիան իրազրոցներ Ավստրիայի բռնակցումը (անշլուս) և տարածքային պահանջներ ներկայացրեց Չեխովլովակիային: Այդ ընթացքում Անգլիան և Ֆրանսիան վարում էին «խաղաղեցման» քաղաքականություն՝ փաստորեն խրախուսելով գերմանական ռևանշիզմը<sup>2</sup>:

1938 թ. սեպտեմբերի 29-30-ը Մյունխենում ԱՍՆ-ի աջակցությամբ հրավիրվեց Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Խտալիայի կառավարությունների ղեկավարների խորհրդակցություն: Չեխովլովակիայի և ԽՍՀՄ ներկայացուցիչները հրավիրված չէին: Մյունխենյան պայմանագրով Անգլիան և Ֆրանսիան համաձայնություն էին տալիս Գերմանիային՝ Չեխովլովակիան բռնազավթելու հարցում, և 1939 թ. մարտին Չեխիան բռնազավթվեց<sup>3</sup>:

Այդ պայմաններում 1939 թ. մարտի 10-ին ՀԿ(թ)Կ 18-րդ համագումարում Ստալինը Արևմտաքում «բռված շագանակների մասին» անունն ստացած Ելություն անգլիացիներին և ֆրանսիացիներին մեղադրեց պատերազմի սաղրանքի մեջ և հայտնեց Գերմանիայի նկատմամբ «խաղաղության քաղաքականություն» վարելու պատրաստականություն՝ խորհրդային քաղաքականության հիմնական խնդիրներ հոչակելով հետևյալ դրույթները:

— բոլոր երկրների հետ վարել խաղաղության և գործարար կապերի ամրապնդման քաղաքականություն,

— պատերազմի սաղրիչներին, որոնք սովոր են ուրիշի ձեռքով կրակից շագանակ հանելու, բռյալ չուալ ԽՍՀՄ-ը ներքաշել հակամարտությունների մեջ<sup>4</sup>:

Այս ակնարկը, որը խորհրդագերմանական պակտի կնքումից հետո Սոլոտովսկն անվանեց «խորհրդագերմանական հարաբերություններում շրջադարձի սկիզբ», ըմբռնումով ընդունվեց Բեռլինում:

Մարտի 21-ին Ռիբենտոռպը իր լեռ գործընկեր Յու. Բեկից պահանջեց քավարել իրենց տարածքային նկրտումները, ապա համատեղ վարել հակախորհրդային քաղաքականություն: Սակայն լեհերը մերժեցին, իսկ մարտի 31-ին Սեծ Բրիտանիայի վարչապետ Չեմբելինը Անգլիայի և ֆրանսիայի անունից հայտարարեց, որ ազրեսիայի դեմ Լեհաստանին տրվում են երաշխիքներ, որոնք ապրիլի 6-ին ամրագրվեցին լեհ-բրիտանական ռազմական համաձայնագրով:

<sup>2</sup> Տես «Вторая мировая война». «БСЭ», М., 1971, с. 480:

<sup>3</sup> Տես K. A. Արյունյան. Участие армянского народа в Великой отечественной войне Советского Союза (1941–1945). Е., 2004:

<sup>4</sup> Տես Ю. Г. Фельштинский. Оглашению подлежит: СССР – Германия 1939 – 1941 (документы и материалы). М., 1991 ([http://lib.ru/HISTORY/FELSHTINSKY/sssr\\_germany\\_1939.txt](http://lib.ru/HISTORY/FELSHTINSKY/sssr_germany_1939.txt)):

<sup>5</sup> Տես И. В. Сталин. Вопросы ленинизма, 2-е изд. М., 1946, с. 569:

Ապրիլի 28-ին Ռայխստագում Հիտլերը հայտարարեց, որ Գերմանիան չեղալ է համարում շհարձակման մասին 1934 թ. հունվարի 26-ի գերմանա-լեհական պայմանագիրը և անգո-գերմանական ծովային համաձայնագիրը<sup>6</sup>: Մայիսի 22-ին ստորագրվեց այսպես կոչված «պողպատե պակտը»\*, իսկ հաջորդ օրը Հիտլերը իր զինվորական վերնախավին հայտարարեց, որ հաստատ որոշել է հարձակել Լեհաստանի վրա, ընդ որում, Գերմանիայի գլխավոր քշնամին Անգլիան է<sup>7</sup>:

1939 թ. առաջին կեսին ծագած միջազգային ճգնաժամի պայմաններում խորհրդային դեկապարուբյունը ձեռնարկեց մի շարք դիվանագիտական քայլեր.

–ԽՍՀՄ արտզորդժողովում մարտի 18-ի նոտայում հայտարարվում էր Չեխովարչակիայի բռնազավթումը չճանաչելու մասին և հետագա հիտլերյան ազթփայի կանխման միջոցները քննարկելու նպատակով Մեծ Բրիտանիային առաջարկում էր անհապաղ հրավիրել վեց տերությունների խորհրդաժողով, սակայն Չեմբքունը այդ առաջարկությունը համարեց վաղաժամ<sup>8</sup>,

–ապրիլի 17-ին խորհրդային կառավարությունը առաջարկեց ստորագրել Անգլիայի, Ֆրանսիայի և Խորհրդային Սիության միջև փոխօգնության մասին եռակողմ ռազմական համաձայնագիր, որին ցանկության դեպքում կարող էր միանալ նաև Լեհաստանը, սակայն անգլիական կառավարությունը պատասխանը ձգձգեց մինչև մայիսի 8-ը և փաստորեն տվեց բացասական պատասխան<sup>9</sup>,

–ապրիլի 17-ին Գերմանիայում ԽՍՀՄ լիազոր ներկայացուցիչ Ա. Մերեկալովը իր պաշտոնավարության ընթացքում առաջին անգամ այցելեց պետքարտուղար Է. Ֆոն Վայցգեկերին և տեղեկացրեց, որ գաղափարական տարածայնությունները չպետք է ազդեն երկու երկրների հարաբերությունների վրա, որ ԽՍՀՄ-ը ցանկանում է ոչ քեզ օգտվել Գերմանիայի և Արևմտարքի մյուս երկրների միջև հակասություններից, այլ Գերմանիայի հետ հաստատել նորմալ հարաբերություններ<sup>10</sup>:

Ապրիլի երկրորդ կեսին Ստալինն ուներ տեղեկություններ, որ Անգլիան և Ֆրանսիան պատրաստ են պատերազմելու Լեհաստանի համար: Սակայն, պատմաբան Սլուչի կարծիքով, Գերմանիայի դեմ պատերազմելու հեռանկարը Ստալինին ձեռնուու չէր, ուստի Բեռլինի հետ կապերի կարգավորումը նրա համար դարձավ «գերակա խնդիր»<sup>11</sup>:

Մայիսի 3-ին Մ. Լիտվինովը հեռացվեց պաշտոնից, և նրան փոխարինեց Վ. Սոլոտովը, ինչը Բեռլինում ընդունեցին որպես հուսադրող նշան: Մեկ օր անց գերմանական թերթերին արգելվեց ԽՍՀՄ-ի նկատմամբ որևէ բացասական դիրքորոշում դրանքին: Մայիսի 9-ին Բեռլինում սկսեցին շրջանառել լուրեր, որ Գերմանիան Ռուսաստանին առաջարկել է բաժանել Լեհաստանը:

<sup>6</sup> Տես «Вторая мировая война». «БСЭ», с. 481:

\* Գերմանիայի և Խորվայի միջև բարեկամության ու դաշնակցության համաձայնագիր:

<sup>7</sup> Տես «История Второй мировой войны. 1939—1945», т. II. М., 1974, с. 128:

<sup>8</sup> Տես նույն տեղում, էջ 122, 123, 124:

<sup>9</sup> Տես նույն տեղում, էջ 131, 132:

<sup>10</sup> Տես Յու. Գ. Ֆելչուհակի, Նշ. աշխ.:

<sup>11</sup> Տես Ս. Զ. Սլուչ, Նշ. աշխ.:

Մայիսի 20-ին ԽՍՀՄ արտաքին գործերի նոր ժողկումն ընդունեց ԽՍՀՄ-ում Գերմանիայի դեսպան Վ. ֆոն դեր Շուլենբուրգին և ունեցավ բարեկամական գրույց՝ հաղորդելով, որ տնտեսական բանակցությունների հաջողության համար «պետք է ստեղծվի համապատասխան բաղաքական իիմք»: Նման ակնարկը Շուլենբուրգի համար անսպասելի էր<sup>12</sup>: Խակ հունիսի 28-ին կայացած հանդիպման ժամանակ Մոլոտովը Գերմանիայի հետ հարաբերությունների կարգավորումն արդեն ներկայացրեց որպես ցանկալի և հնարավոր գործ<sup>13</sup>:

Մինչեւ ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև դեռ ապրիլի 10-ին սկսված և մինչև օգոստոսի կեսերը ձգձգված եռակողմ բանակցությունները ավարտվեցին անարդյունքով<sup>14</sup>:

1939 թ. հոլիվիք վերջին Հիտլերը որոշեց մերձենալ ԽՍՀՄ-ի հետ: Օգոստոսի 3-ին Ռիբենտրոպն իր պաշտոնական հայտարարության մեջ առաջին անգամ խոսեց այդ մասին՝ ակնարկելով ազդեցության ոլորտների բաժանման հնարավորությունը. «Սև ծովից մինչև Բալթիկ ծով եղած տարածքներին վերաբերող բոլոր պրոբլեմների շուրջ մենք կարող ենք պայմանավորվել առանց որևէ դժվարության»<sup>15</sup>: Օգոստոսի 15-ին Շուլենբուրգը Մոլոտովին ընթերցեց Ռիբենտրոպի ուղերձը, որում նա հայտնում էր գերմանա-ռուսական հարաբերությունները հստակեցնելու համար Մոսկվա գալու իր պատրաստակամությունը: Մոլոտովի պատասխանում առաջ էր քաշփում պակտի կնքման գաղափար, ինչը գերազանցում էր գերմանացիների ամենահամարձակ նպատակները, քանի որ Բեռլինն ուներ միայն մինյանց դեմ ուժի չկիրառման մասին համատեղ հոչակագիր հույսը<sup>16</sup>:

Օգոստոսի 17-ին Շուլենբուրգը Մոլոտովին փոխանցեց գերմանացիների պատասխանը, որում նրանք հայտնում էին 25 տարի ժամկետով պայմանագիր կնքելու պատրաստակամություն: Ընդունին գերմանական կողմն շտապում էր: Պատասխան նոտայում Մոլոտովը նշեց, որ պակտի կնքումը պայմանավորված է առևտրական և կարկային համաձայնագրի կնքմամբ: Այդ փաստաբուղքը օգոստոսի 18-ին հապճեպորեն համաձայնեցվեց Գերմանիայի հետ և ստորագրվեց 19-ին: Նույն օրը Մոլոտովը Ռիբենտրոպին հայտնեց, որ ընդունում է գերմանական կողմի առաջարկությունը, և փոխանցեց պակտի խորհրդային նախագիծը՝ կից հետգրությամբ, որում ուրվագծված էր ապագա գաղտնի արձանագրությունը:

Սակայն առաջարկված նախապայմանների պատճառով Ռիբենտրոպի այցը հետաձգվում էր մինչև օգոստոսի 26–27-ը: Դա անընդունելի էր Հիտլերի համար, քանի որ Լեհաստանի վրա հարձակվելու ժամկետն արդեն նշանակված էր, և նա շտապում էր ռազմարշավն ավարտել մինչև աշնանային անձրևները: ՈՒստի

<sup>12</sup> Տես A. A. Пронин. Советско – германские соглашения 1939 года: истоки и последствия (монография). «Международный исторический журнал», 2000, № 11:

<sup>13</sup> Տես Յու. Գ. Ֆելչուկի, Նշ. աշխ.:

<sup>14</sup> Տես «СССР в борьбе за мир накануне Второй мировой войны. (Документы и материалы)», М., 1971, сс. 486 – 487:

<sup>15</sup> «История Второй мировой войны», т. II, с. 280.

<sup>16</sup> Տես Ա. Ա. Պրոնին, Նշ. աշխ.:

Հիտլերը հաջորդ օրն Ստալինին անձնական հեռագիր ուղարկեց, որում առաջարկում էր Ռիբենտրոպին ընդունել օգոստոսի 22-ին կամ 23-ին<sup>17</sup>: Օգոստոսի 21-ին ստացվեց Ստալինի համաձայնությունը՝ Ռիբենտրոպին ընդունել օգոստոսի 23-ին: Մի քանի րոպե անց այդ մասին հայտարարվեց Բեռլինի ռադիոյով, գերմանական նավերին անմիջապես տրվեց մարտական դիրքեր զբաղեցնելու հրաման, իսկ զինվորականների հետ օգոստոսի 22-ին կայացած խորհրդակցության ժամանակ Հիտլերը հայտնեց, որ որոշել է Լեհաստանի դեմ պատերազմ սկսել<sup>18</sup>:

**Պայմանագրի ստորագրումը:** Ռիբենտրոպը Մոսկվա ժամանեց օգոստոսի 23-ի կեսօրին և անմիջապես ուղևորվեց Կրեմլ: Հանդիպումը տևեց երեք ժամ և գերմանացիների համար հաջող ավարտ ունեցավ: Ըստ Ռիբենտրոպի՝ Ստալինը «հասկացրեց, որ եթե չստանա Լեհաստանի կեսը և մերձբալթյան երկրները, առայժմ առանց Լիտվայի՝ Լիբավա նավահանգստով, ապա ես կարող եմ անմիջապես վերադառնալ» (խոսքը լատվիական Լիեպայա և Վենտսպիլս նավահանգստների մասին էր)<sup>19</sup>: Նույն երեկո Պայմանագիրը և գաղտնի արձանագրությունն ստորագրվեցին: Բանակցությունները շարունակվեցին մինչև առավոտ: Շաշկերույքն սկսվեց Ստալինի բաժականողով. «Ես գիտեմ, թե որքան է գերմանական ազգը սիրում իր Առաջնորդին, ուստի ուզում եմ խմել նրա կենացը»<sup>20</sup>:

**Պայմանագրի բովանդակությունը և կատարումը:** Պայմանագիրը բաղկացած էր 7 հոդվածից և նախատեսում էր, որ կողմերը ձեռնպահ են մնալու միջյանց վրա հարձակումից, չեն աջակցի երրորդ տերության ձեռնարկած նման գործողություններին, պարբերաբար միմյանց կտեղեկացնեն իրենց ընդհանուր շահերի վերաբերյալ, չեն անդամակցի այնպիսի դաշինքների, որոնք անմիջականորեն կամ անուղղակի կերպով ուղղված են մյուս կողմի դեմ, հնարավոր երկուստեք վիճաբանությունները կլուծեն խաղաղ ճանապարհով: Պայմանագիրը կնքվում էր 10 տարի ժամկետով՝ ինքնարերական երկարածզման հնարավորությամբ: Միաժամանակ ստորագրված լրացուցիչ գաղտնի արձանագրությամբ ԽՍՀՄ շահերի ոլորտում էին ներառվում Լատվիան, Էստոնիան և Ֆինլանդիան, իսկ Գերմանիայի ոլորտում՝ Լիտվան: Լեհաստանում բաժանարար գիծն անցնում էր Նարե–Վիլյա–Սան գծով, Վիլնյուսը Լեհաստանից անցնում էր Լիտվային: Ընդ որում, լեհական պետության պահպանման հարցը հանձնվում էր հետագա քաղաքական գարգացման ընթացքին, ասկայն ցանկացած դեպքում այն պետք է լուծվեր փոխադարձ համաձայնությամբ: Բացի այդ, ԽՍՀՄ-ն ընդգծում էր իր շահագրգությունը Բենարարիայի հարցում, իսկ Գերմանիան չէր «առարկում»<sup>21</sup>:

ԽՍՀՄ Գերազույն խորհուրդը Պայմանագիրը վավերացրեց ստորագրումից մեկ շաբաթ անց, ընդ որում, «լրացուցիչ գաղտնի արձանագրության» գոյությունը բարցվում էր պատգամավորներից: Պայմանագրի վավերացումից մեկ օր անց՝

<sup>17</sup> Տես «История Второй мировой войны», т. II, с. 282:

<sup>18</sup> Տես Յու. Գ. Ֆելչիմակի, Նշ. աշխ.:

<sup>19</sup> Տես նույն տեղում:

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Տես նույն տեղում:

1939 թ. սեպտեմբերի 1-ին, Գերմանիան հարձակվեց Լեհաստանի վրա: 1939 թ. սեպտեմբերի 17-ին Կարմիր բանակի զորամասերը հատեցին լեհական սահմանը: Լեհաստանը դադարեց որպես պետություն գոյություն ունենալուց: Միջազգային իրավունքը նորմերին հակառակ՝ Լեհաստանի ջախջախման հետևանքները ամրագրվեցին «Բարեկամության և սահմանի մասին» նոր պայմանագրում, որը 1939 թ. սեպտեմբերի 28-ին ստորագրեցին Մոլոտովն ու Ռիբենտրոպը: Այդ պայմանագրով ԽՍՀՄ-ը զատվեց ֆաշիզմի դեմ պայքարող ուժերից, Գերմանիան ու ԽՍՀՄ-ն ունեցան ընդհանուր սահման, և կողմներից մեկի վրա մյուսի հարձակման հարցը դարձավ ժամանակի խնդիր: 1941 թ. հունիսի 22-ին ԽՍՀՄ-ի վրա ֆաշիստական Գերմանիայի հարձակմամբ այդ պայմանագիրը կորցրեց իր ուժը:

**Առաջին տեղեկությունները գաղտնի արձանագրության մասին:** Լրացուցիչ գաղտնի արձանագրության վերջին՝ չորրորդ, հոդվածում նշված էր, որ կողմերն այն պահելու են խիստ գաղտնի<sup>22</sup>: Այդ պահանջը փութորեն կատարեցին և Ստալինի, և Հիտլերի հանցախմբերը: Այդուհանդերձ, դրա մասին լուրերը գործնականում անմիջապես բափանցեցին դիվանագիտական շրջաններ: Արձանագրության պայմանները արձարձված են նաև «Քաղյուրոյի՝ 1939 թ. օգոստոսի 19-ին կայացած նիստում Ստալինի ճառում», որի տեքստը «Գավաս» ֆրանչական տեղեկատվական գործակալությունը հրապարակեց նույն թվականի նոյեմբերին: Որոշ հետազոտողներ այդ հրապարակումը համարում են բնագրային<sup>23</sup>, ոմանք էլ ժխտում են դրա խկությունը<sup>24</sup>:

Ընդհուպ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը այդ տեղեկությունները մնում էին որպես ասեկուններ, թեև հաստատվեցին իրադարձությունների հետագա զարգացմանը:

**Լրացուցիչ գաղտնի արձանագրության հրապարակումը:** 1945 թ. լրացուցիչ գաղտնի արձանագրության տեքստի գերմաներն բնագիրը Բեռլինից տեղափոխվեց Մոսկվա, սակայն պատճենը միկրոֆիլմի տեսքով պահպանվեց Գերմանիայի ԱԳՆ-ի փաստարդբային արխիվում և հետագայում հայտնվեց անզիացիների ձեռքում<sup>25</sup>: Գաղտնի արձանագրության մասին առաջին անգամ հրապարակայնորեն խոսվեց Նյույորքերգյան դատավարության ժամանակ. մեղադրյալներն իրենց պաշտպանությունը կառուցեցին այդ փաստի վրա: Դրա մասին խոսեց Ռիբենտրոպը, իսկ դատապահտպան Զայդլը ձեռք բերեց ֆոտոպատճենի օրինակը և փորձեց հրապարակել այն, բայց դա նրան արգելվեց այն պատճառաբանությամբ, որ նա հրաժարվում է դատարանին հայտնել փաստարդի ձեռքբերման աղբյուրը (ավելի ուշ նա իր հուշերում գրեց, որ այն ստացել էր ամերիկյան հետախուզությունից): Մի քանի ամիս անց նա հրապարակեց այդ փաստարութը «Սան-Լուի վիստ դիսպաշ» ամերիկյան զավառական թերում,

<sup>22</sup> Տես նույն տեղում:

<sup>23</sup> Տես В. Л. Дорошенко, И. В. Павлова, Р. Ч. Раак. Не миф: речь Сталина 19 августа 1939 г. «Вопросы истории», 2005, № 8:

<sup>24</sup> Տես С. З. Случ. Речь Сталина, которой не было. «Отечественная история», 2004, № 1:

<sup>25</sup> Տես Ա. Ա. Պրոնիհն, Նշ. աշխ.:

սակայն այդ հրապարակումը ուշադրության չարժանացավ: Փաստաբուղը լայն ճանաչում ստացավ 1948 թ., երբ հրապարակվեց ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի «Խորհրդա-նացիստական հարաբերությունները 1939–1941 թթ.» ժողովածում<sup>26</sup>: Բացի այդ, այնտեղ գետեղված էր զերմանական և գերմանա-խորհրդային դիվանագիտական նամակագրությունը, որում կային անմիջական հղումներ գաղտնի պայմանավորվածություններին: Այդ փաստը մի շարք արևմտյան հետազոտողներ օգտագործեցին ԽՍՀՄ քաղաքականությունը Երրորդ Ռեյխի նացիստական քաղաքականության հետ համեմատելու և երկրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծման մեջ Խորհրդային Միությունը մեղադրելու համար:

ԽՍՀՄ-ում կտրականապես ժխտվում էր գաղտնի արձանագրության գոյությունը, ընդ որում, պատերազմից հետո Մոսկվա քերված երկրորդ՝ զերմանական, բնագիրը խորհրդային բնագրի հետ մենտեղ պահպում էր Ստալինի անձնական չհրկիզող պահարանում, այնուհետև՝ ԽՍԿԿ ԿԿ արխիվում<sup>27</sup>:

Ի պատասխան ամերիկյան ժողովածուի հրատարակմանը՝ Սովինֆորմբյուրոն (ԽՍՀՄ տեղեկատվական բյուրո) 1948 թ. հրատարակեց «Պատմության կեղծարարները» գիրքը, որում առաջ քաշվեցին արևմտյան պետություններին ուղղված հակամեղադրանքներ, ներառյալ՝ պնդումներ, որ 1930-ական թվականներին անգլիական և ամերիկյան ֆինանսական շրջանները աջակցել են Գերմանիային:

Պակտի և, հատկապես, գաղտնի արձանագրության հարցը ԽՍՀՄ-ում բարձրացվեց վերակառուցման ժամանակ՝ առաջին հերթին Լեհաստանի ճնշմամբ: Այդ հարցի ուսումնասիրության համար ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ ԽՍԿԿ ԿԿ քարտուղար Ալեքսանդր Յակովլիկի գլխավորությամբ: 1989 թ. դեկտեմբերի 24-ին ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորների համագումարը, լսելով այդ հանձնաժողովի եզրակացությունները, ընդունեց մի բանաձև, որով քննադատեց արձանագրությունը (նշվեց բնագրեր չլինելու փաստը, սակայն պատճենների ձեռագրաբանական, ֆոտոտեխնիկական և բառային փորձաքննության արդյունքների և այդ պատճեններին հետագա իրադարձությունների համապատասխանության հիման վրա) ճանաչվեց դրա իսկությունը<sup>28</sup>: Հենց այդ ժամանակ էլ ԽՍՀՄ-ում առաջին անգամ «Պատմության հարցեր» հանդեսի 1989 թ. 6-րդ համարում հրապարակվեց գաղտնի արձանագրության տեքստը՝ ըստ զերմանական միկրոֆիլմի: Արխիվի գաղտնազերծումից հետո ԽԲ և ՌԾՈՒ-ի Գլխավոր քաղաքական վարչության պետի տեղակալ գեներալ-գնդապետ Դ. Ա. Վոլկովունովը 1992 թ. հոկտեմբերի 30-ին այդ փաստաբուղը հրապարակեց թերթերում, իսկ զիտական հրապարակումը կայացավ «Նոր և նորագույն պատմություն» հանդեսի 1993 թ. 1-ին համարում:

**Պայմանագրի իրավական, քաղաքական և պատմական գնահատում:** Պայմանագրի իրավական գնահատումները հակասական են: Ոմանց կարծիքով այն

<sup>26</sup> Տես B. Z. Роговин. Мировая революция и мировая война. М., 1998, с. 415:

<sup>27</sup> Տես M. I. Семиряга. Советско-германские договоренности в 1939–июне 1941 г.: Взгляды историка. «Советское государство и право», 1989, № 9:

<sup>28</sup> Տես Ա. Ա. Պրոնին, Նշ. աշխ.:

(առանց գաղտնի արձանագրության) չհարձակմանը վերաբերող տիպիկ պայմանագիր է, ինչպիսիք հաճախադեպ էին այն ժամանակավա եվրոպական պատմության մեջ (օրինակ՝ Գերմանիայի և Լեհաստանի միջև կնքված պայմանագիրը)<sup>29</sup>: Բացի այդ, տվյալ հեղինակների կարծիքով, շահերի ոլորտների սահմանագատումը դեռ չի նշանակում որևէ մեկի շահերի ոլորտում ներառվող պետությունների կարգավիճակի պարտադիր փոփոխություն:

Այլ հեղինակներ, վերլուծելով պայմանագիրը, ցույց են տալիս հատկանիշներ, որոնք հնարավորություն են տալիս այն բնութագրելու որպես ազրեսորի գիտակցած քաջալերում<sup>30</sup>:

Մեր կարծիքով՝ պայմանագրի համալիր իրավական գնահատման համար անհրաժեշտ է այն ձևական-իրավական տեսակետից դիտարկել միջազգային և ազգային իրավունքի հիմնարար սկզբունքների ու նորմերի հարթության մեջ: Դրա անհրաժեշտությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ վերը նշված հեղինակները «Մոլոտովի-Ռիբենտրոպի պակտը» դիտարկում են պայմանագրի և լրացուցիչ գաղտնի արձանագրության միջև ձևական-իրավական կապի առկայության կամ բացակայության մեկնակետից և, չիհմնավորելով այդ մեկնակետը, խուսափում են տեղի ունեցածի համալիր իրավական գնահատումից՝ ընդամենը ձգտելով այն օգտագործելու որպես իրենց թեզի կառուցման գործիք:

Սակայն փաստ է, որ երկու պետությունների՝ գաղտնի արձանագրությունը ստորագրած ներկայացուցիչները, օգտագործելով իրենց պաշտոնական լիազորությունները, խախտելով միջազգային և ազգային իրավունքի հիմնարար սկզբունքների ու նորմերի պահանջները, ինքնիշխանից գաղտնի նրա անունից ստանձնել են միջազգային պարտավորություններ: Ընդսմին այդ պարտավորությունները վերաբերել են նաև երրորդ կողմերին՝ առանց վերջիններիս մասնակցության<sup>31</sup>:

Այս հանգամանքը շատ ցայտուն է դրսւորվում ԽՍՀՄ դեպքում: ԽՍՀՄ Գերազույն խորհուրդը վավերացրեց այդ պայմանագիրը, առանց տեղեկացվելու, որ ԽՍՀՄ անունից կնքված գաղտնի արձանագրությամբ ստանձնվել են նաև այլ միջազգային պարտավորություններ: Չվավերացված գաղտնի արձանագրությունը որպես վավերացված պայմանագրի մաս կիրառելը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ գաղտնի դիվանագիտության և անձնային քաղաքականության դրսւորում ինչպես ձևի, այնպես էլ բովանդակության առումներով:

Իրավական առումով գաղտնի արձանագրությունը պայմանագրի մաս չէ, քանի որ պայմանագրում այդ արձանագրության մասին որևէ նշում չկա: Ոհստի հիմնավորված կարելի է համարել այն տեսակետը, որ Խորհրդային Միության և Գերմանիայի համապատասխան պաշտոնատար անձինք, կնքելով և կիրառելով լրացուցիչ գաղտնի արձանագրությունը, կատարել են իշխանության յուրացում:

Հարկ ենք համարում նշել նաև, որ այս հանգամանքը քաղաքականապես կարող է ձեռնուու չլինել շատերին, քանի որ կիանգեցնի ոչ միայն գաղտնի արձա-

<sup>29</sup> Տես U. R. Սկայլանդ, Նշ. աշխ.:

<sup>30</sup> Տես William L. Shirer. The Rise and Fall of the Third Reich. London, 1960:

<sup>31</sup> Տես Ա. Ա. Պրոնիհան, Նշ. աշխ.:

նագրության մասով ԽՍՀՄ և Գերմանիայի, այլև այն պետությունների գործողությունների իրավաչափության գնահատման անհրաժեշտությանը, որոնք հետագայում իրենց քաղաքականությունն ու շահերի իրացման համակարգերը համապատասխան մասով կառուցել են այդ արձանագրության ելակետերի վրա:

Հակասական են նաև պայմանագրի քաղաքական ու պատմական գնահատումները: Այժմ «Մոլոտովի-Ռիբենտրովի պակտի» հետևանքների հարցը դարձել է բուռն քննարկումների առարկա: Երկրորդ աշխարհամարտի սկսման 70-ամյակից մի քանի ամիս առաջ Արևմուտքում, Մերձավարիկայի հանրապետություններում և ՈՒկրաինայում ծավալվեց տեղեկատվաքարոզչական արշավ, որի հիմքում դրված էր համաշխարհային պատերազմի սահմանադրության համար Գերմանիայի և ԽՍՀՄ հավասար պատասխանատվության մասին դրույքը:

2009 թ. հուլիսի 2-ին ԵԱՀԿ 18-րդ ամենամյա նատաշրջանում Խորհրդարանական ասամբլեան ընդունեց «Տարանջատված Եվրոպայի միավորում» բանաձևը, որում գուգահեռաբար դատապարտվում են նացիզմն ու ստալինիզմը և հավասարեցվում են Երկրորդ համաշխարհային պատերազմի սահմանադրության գործում դրանց ունեցած դերերը: Երկրորդ կետում նշվում է. «20-րդ դարում Եվրոպական Երկրները ենթարկվեցին Երկու հզոր ամբողջատիրական՝ նացիստական և ստալինյան, վարչակարգերի ճնշմանը: Այդ Երկու վարչակարգերն էլ իրենց մեջ ամփոփում էին ցեղասպանություն, մարդու իրավունքների ու ազատությունների խախտումներ և մարդկության դեմ ուղղված ռազմական հանցագործություններ»<sup>32</sup>:

2009 թ. սեպտեմբերի 23-ին լեհական Սեյմն ընդունեց մի քանաձև, որում պաշտոնապես մեղադրեց ԽՍՀՄ-ին՝ հիտլերյան Գերմանիայի հետ համատեղ Երկրորդ համաշխարհային պատերազմ սահմանադրելու մեջ: Դրանից անմիջապես հետո Լիտվայի խորհրդարանը մշակեց օրենք, որով նախատեսվում էր քրեական պատասխանատվություն լիտվական պետության դեմ ԽՍՀՄ, ինչպես նաև Գերմանիայի ազրեկիայի փաստի արդարացման կամ ժխտման համար<sup>33</sup>:

Ըստ ոռուսաստանցի փորձագետների՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի պատմության վերանայման փորձի նպատակն է ՌԴ-ին ներկայացնել տնտեսական ու տարածքային պահանջներ, ներգրծել աճող սերնդի վրա: Նրանք պնդում են, որ դրանով ԽՍՀՄ-ը հետաձգեց Գերմանիայի հետ պատերազմը, հաղթահարեց իր միջազգային մեկուսացումը, ուստի պակտի կնքումն ու մի քանի Եվրոպական Երկրների տարածքների զավթումը հարկադրված պաշտպանական քայլեր էին:

Սակայն արևմտյան հետազոտողները և որոշ ոռուսաստանցի պատմաբաններ համարում են, որ պակտի կմքման նպատակն էր Հիտլերին հնարավորություն տալ ներխուժելու Լեհաստան՝ ապահովելով թիկունք արևելքում և ձեռքերի ազատություն՝ արևմտստրում, ինչը նշանակում էր համաշխարհային պատերազմի սահմանադրություն, և ԽՍՀՄ դեկավարությունը լիովին գիտակցում էր դա:

Կնքելով այդ պայմանագիրը՝ կողմերը հետապնդում էին միանգամայն տար-

<sup>32</sup> «Независимая газета», 6 июля 2009 г.

<sup>33</sup> Стас И. Шашкин. Вторая мировая война как аргумент современной геополитики (<http://www.apn.ru/publications/print22019.htm>):

թեր նպատակներ: Հիտերը տեսնդորեն նախապատրաստվում էր Լեհաստանի վրա հարձակմանը և համարում էր, որ այդ պայմանագիրը Գերմանիայի համար կրացանի Եվրոպայում երկու ճակատով պատերազմի սպառնալիքը, քանի որ ըստ իր հաշվարկների՝ Ստալինը շահագրգուված է նախակին Ռուսական կայսրության տարածքների գրավման հարցում և կծզտի նման հնարավորության՝ շնորհիվ Գերմանիայի հետ պայմանագրի: Խոկ Ստալինն այդ պայմանագիրը դիտում էր որպես ԽՍՀՄ արևմտյան սահմանների վերանայում առանց զինված բախման:

Խորհրդա-գերմանական պայմանագրին նախորդած իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Մոսկվան բոլոր հիմքերն ուներ չհավատալու արևմտյան տերությունների աջակցությանը, եթե Խորհրդային Սիուրյունը որոշեր 1939 թ. ինքնուրույն կերպով դիմակայել գերմանական ազրեսիային: Դրա ապացույցն է նաև 1939 թ. արևմտյան ճակատում ընթացած «տարօրինակ պատերազմը»: 1939 թ. սեպտեմբերից Անգլիան և Ֆրանսիան Գերմանիայի հետ պատերազմական վիճակում էին, բայց մինչև 1941 թ. մայիսին ձեռնարկված գերմանական հարձակումը չէին դիմում որևէ ակտիվ մարտական գործողության: Պատերազմը հնարավոր էր տեղայնացնել հենց սկզբում, եթե Գերմանիայի արևմտյան սահմանի երկայնքով տեղաբաշխված 110 անգլ-ֆրանսիական դիվիզիաները հարձակվեին իրենց դիմաց կանգնած 23 գերմանական դիվիզիաների վրա<sup>34</sup>:

Այն հանգամանքը, որ ԽՍՀՄ-ի կողմից «Մոլոտովի-Ռիբենտրոպի պակտի» կնքումը այն օրերի օրյեկտիվ ռեալության շրջանակներում էր, ընդունել է նոյնիսկ ԽՍՀՄ-ի հանդեպ համակրանք չտածող ՈՒ. Չերչիլը՝ իր հուշերում նշելով, որ «Եթե նրանց (ռուսների, - Լ. Ա.) քաղաքականությունը սառն էր ու հաշվենկատ, ապա այդ պահին այն վերին աստիճանի իրատեսական էր»<sup>35</sup>:

Չի կարելի նաև մոռանալ, որ 1939 և 2009 թվականների միջև եղան նաև 1941–1945 թվականները, որոնք վերջակետ դրեցին նախապատերազմյան քաղաքականության հիմնական վիճելի հարցերում: Վերջին հաշվով հենց Խորհրդային Սիուրյունը ջախջախեց ֆաշիզմը, և, ինչն այսօր ամենակարևորն է, ամբողջ Եվրոպան ազատագրեց նացիստական լծից: Այսօր կարելի է վստահորեն պնդել, որ Եվրոպայի ազատագրման համար զոհված միլիոնավոր խորհրդային, այդ թվում՝ նաև մեր հայրենակից, զինվորներից ոչ մեկը ոչինչ չգիտեր «Մոլոտովի-Ռիբենտրոպի պակտի» գաղտնի արձանագրության մասին:

Ակնհայտ է, որ երկրորդ համաշխարհային պատերազմի պատմության վերանայման փորձերը ոչ թե պատմական, այլ քաղաքական բնույթի են: Եվ հիտլերիզմի ու ստալինիզմի միջև պարզ զուգահեռները քավականին վիճահարույց են:

Պատմության վերահնաստավորումը օրինաչափ է, եթե պայմանավորված է անցյալի իրադարձությունները նոր տեսանկյունից արտացոլող նոր աղբյուրների հայտնաբերմամբ: Գլխավորն այն է, որ պատմական հիշողության զարգացումը կախված չինի տվյալ պահին գերակայող քաղաքական նպատակներից:

<sup>34</sup> Տես «Օчерки истории Министерства иностранных дел России», т. II. М., 2002, с. 256:

<sup>35</sup> Ս. Չերչիլ. Вторая мировая война. Кн. 1. М., 1991, с. 180.

## ВОЕННАЯ ИСТОРИЯ

### «ПАКТ МОЛОТОВА–РИББЕНТРОПА» И ВТОРАЯ МИРОВАЯ ВОЙНА

Л. Г. АРУШАНЯН, старший лейтенант, главный консультант  
военного музея МО РА «Майр Айастан»

#### РЕЗЮМЕ

23 августа 1939 года в Москве был подписан Договор о ненападении между Советским Союзом и Германией, вошедший в историю под названием «Пакт Молотова-Риббентропа». Был подписан также Дополнительный секретный протокол о разграничении сфер интересов в Восточной Европе.

Исторические, политические и правовые критерии оценки Пакта и его последствий продолжают эволюционировать в соответствии с политической конъюнктурой. Однако Пакт как международный договор должен рассматриваться в аспекте принципов и норм права, в том числе – международного. Такой подход приводит к выводу, что подписание Секретного протокола является узурпацией власти со стороны подписавших его должностных лиц, а также нарушением принципов и норм международного права, т. к. он затрагивал третьи стороны. Историческая и политическая оценка Пакта должны производиться на основе вышесказанного. Главное, чтобы эволюция исторической памяти не зависела от политических подвижек.

## MILITARY HISTORY

### «THE MOLOTOV–RIBBENTROP PACT» AND THE WORLD WAR II

L. G. ARUSHANYAN, Senior Lieutenant, Chief Consultant  
of the «Mayr Hayastan» War Museum, MOD, RA

#### SUMMARY

The Treaty of Non-Aggression was signed on August 23, 1939 between the Soviet Union and Germany, which is known in history as «The Molotov-Ribbentrop Pact». The Treaty included the Additional Secret Protocol on delimitation of the spheres of interests in East Europe.

Historical, political and legal criteria of evaluating the Pact and its consequences continue to evolve in conformity with current political situation. However, the Pact as an international treaty should be considered within the purview of principles and norms of law, including of International Law. This approach brings to the conclusion that signing the Secret Protocol is power usurpation by the authorities who signed it, as well as violation of principles and norms of International Law, as it touched upon the third parties. The historical and political assessment of the Pact should be carried out upon the basis of the above-mentioned. Most importantly, the evolution of historic memory should not depend on political developments.

**Կա-52 («Ալիգատոր»)** մարտական հարվածային ուղղաթիռ: Ուսասատանյան այս ուղղաթիռը բանակային ավիացիայի հրամանատարական մեքենա է, որը կատարում է տեղանքի հետախուզում, նշանացուում և մարտական ուղղաթիռների խմբի գործողությունների համադասում: Մեքենան ունակ է խոցելու հակառակորդի զրահապատ տեխնիկան, կենտանի ուժը և օդային նշանակեները: Կա-52-ը Կա-50 «Չոռնայա ակուլա» ուղղաթիռի հիմքի վրա ստեղծված, կատարելագործված մոդել է: Կոնստրուկտորներին հաջողվել է ապահովել, որ մեկ տոննայով ծանրացած ուղղաթիռը չկորցնի Կա-50-ի բացառիկ մարտական հատկությունները: Երկտեղանի Կա-52-ը նախորդի համեմատությամբ առավելագույն առավելություններ ունի:



Կա-52 մարտական հարվածային ուղղաթիռ

յամբ ունի ինչպես գիշերային, այնպես էլ բարդ օդերևութաբանական պայմաններում նարտ վարելու ավելի մեծ հնարավորություններ:

Կա-52-ում տեղակայված են երկու Կ-37 ինքնանետիչ-բազկարուներ և պտուտակների թիակների կրականետման համակարգ: Օդաչուները խցիկում տեղափորված են այնպես, որ ապահովեն նրանց արդյունավետ փոխգործությունը, լավ տեսադաշտը և հարմարավետությունը: Երկու օդաչուներն էլ անհրաժեշտության դեպքում կարող են իրենց վրա վերցնել ուղղաթիռի և զենքի կառավարումը: Կա-52-ը անձնակազմի խցիկի զրահապատման մակարդակով գերազանցում է մյուս բոլոր ուղղաթիռները: Այդ ուղղաթիռը համաշխարհային պրակտիկայում առաջին աճամամ կարող է մարտ վարել օդային հակառակորդի դեմ: Կա-52 մարտական ուղղաթիռը կարող է կիրառվել նաև որպես ուսումնամարտական մեքենա:

#### **Հիմնական բնութագրեր**

անձնակազմը, մարդ	2
տանող պտուտակի տրամագիծը, մ	14,50
երկարությունը պտտվող պտուտակներով, մ	15,90

գանգվածը, կգ	
առավելագույնը՝	10400
դատարկ՝	7800
ստատիկական բարձրահասությունը, մ	3600
գործնական բարձրահասությունը, մ	5500
շարժիչի տիպը՝	2 ԳՏԴ Կլիմով ՏՎՀ-117 ՎՍՍ
հզորությունը, ծխառութ (կՎտ)	2 x 2260 (2 x 1660)
բոիչքի գործնական հեռավորությունը, կմ	1160
գործողության հեռավորությունը, կմ	520
առավելագույն շահագործական գերբեռնվածքը՝	3,5 միավոր
առավելագույն արագությունը, կմ/ժ	
թեքավուն խոյարոխքի՝	350
հորիզոնական թոիչքի՝	310
կողաքռոխքի՝	80
հետրոխքի՝	90

Կա-52 ուղղաթիռը կարող է կրել 12 գերձայնային «Վիխը» ՀՏԿՀ-ԱԵր, որոնք ավտոմատ կերպով լազերային ճառագայթով ուղղվում են դեպի նշանակետը, միօրինակացված թեռնամփոփներ՝ գնդացրային ու թնդանոթային սպառազինությամբ, 80 մմ տրամաչափի 80 չկառավարվող ավիացիոն հրթիռ, «օդ-օդ» դասի հրթիներ: Զինված է 2Ա42 30-մմ թնդանոթով՝ 500 փամփուշտ մարտապաշարով: Մարտական թեռնվածքը կախոցի 4 հանգույցներում 2000 կգ է:

*Նյուրը պարրասպեց փոխգնդապեկը Զ. Շ. Ասալիյանը*

## **ՀԱՍՏԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ**

**Ն. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ, կապիլան, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր,**

**Դ. Ա. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, գնդապետ**

## **ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ**

ազատականություն—либерализм; liberalism  
 ազդակ—импульс; impulse  
 ախտաբանություն—патология; pathology  
 ակնապանակ – наглазник; eye flap, eye shade  
 ամբողջապահական վարչակարգ—тоталитарный режим; totalitarian regime  
 անկելանոց—богадельня; hospice  
 անօդակյաց—анаэроб; anaerobe  
 արարողակարգ—церемония; ceremony  
 արմատականություն—радикальность; radicalism  
 արտադրական խեղում—производственное увечье; industrial injury  
 բազմակարծություն—плурализм; pluralism  
 բազմապատճենություն—многообразие; diversity  
 բարձրահաստություն—потолок (набора высоты); ceiling  
 բեռնառարիչ—грузоотправитель; shipper  
 բռնազարդություն—оккупация; occupation  
 գիտաժողով—научная конференция; academic conference  
 գործիքարան—инструментарий; tools  
 դասակարգիչ—классификатор; classifier  
 եղթերաբաղանք—роговица; cornea  
 ենթատարածաշրջան—субрегион; subregion  
 զգայարար—сенсор; sensor  
 զտիչ—фильтр; filter  
 ընթացակարգ—процедура; procedure  
 թոքամզի խոռոչ—плевральная полость;

pleural cavity  
 իրավիճակյին ըմբռնում—ситуационное понимание; situational awareness  
 խաղաղեցում—умиротворение; conciliation  
 խորհրդաժողով—конференция; conference  
 կազմակերպվածք—организационная структура; organizational structure  
 կառավարում—управление; management  
 կառուցղական երկխոսություն— конструктивный диалог; constructive dialogue  
 կարծրատիպային մտածելակերպ—стереотипное мышление; stereotyped thinking  
 կեղծարարություն—фальсификация; falsification  
 կերպավորում—1. воплощение, 2. облечениe; framing  
 կերպավոնխում—трансформация; transformation  
 կիզակետ—фокус; focus  
 կողմնորոշչի աղուակ—мессидж; message  
 կուրացնող լազեր—ослепляющий лазер; blinding laser  
 հակամեղադրան—контробвинение; counteraccusation, countercharge  
 համադասում—координация; coordination  
 համախտանիշ—синдром; syndrome  
 համախումբ—1. совокупность, 2. совокупный; 1. totality, 2. total  
 համակարգային խորում—системная деструкция; system breakdown

համակարգայնություն—системность; systemacy	մեկնակետ—отправная точка; starting point
համակարգաստեղծ գործոն—системообразующий фактор; system-forming factor	նախադեպ—прецедент; precedent
համամատնություն—пропорциональность; proportionality	նորամուծություն—инновация; innovation
համբուղություն—всеобъемлемость; comprehensiveness	նորարարություն—новаторство; innovation
համընդիանուր քարեկեցության պետություն—государство всеобщего благоденствия; welfare state	շարժադիրավորում—мотивация; motivation
հանցախումբ—клика; clique	շրջադիտակ—перископ; periscope
հաշվեկշիռ—баланс; balance	պատճառագիտություն—этиология; etiology
հասկացութային-տերմինարանական մշակում—понятийно-терминологическая разработка; conceptual-terminological elaboration	պարեկում – патрулирование; patrolling
հաստատութենացում—институционализация; institutionalization	պետական մենաշնորհ—государственная монополия; state monopoly
հարացույց—парадигма; paradigm	ռազմարշավ—1. военная кампания, 2. экспедиция; 1. military campaign, 2. expedition
հարմարում—адаптация; adaptation	սահմանապատճեն—разграничение; 1. differentiation, 2. delimitation
հեռաչափ—дальномер; range-finder	սրտապարկ—перикард; pericardium
հիվանդաբանություն—нозология; nosology	վարչարարություն—администрирование; administration
հոգեխոցում—психическое травмирование; psychic trauma	վերահմաստավորում—переосмысление; reconsideration, review
հովանափրչություն—протекционизм; protectionism, favouritism	վերակարգութելի—переналаживаемый; realigned
հրամայական—1. повелительный, 2. императив, 3. императивный; 1. imperative, 2. mandate	տարածում քարիշապրոց—экстенсивный гнойник; extensive apostasis
ձեռագրաբանական փորձաքննություն—графологическая экспертиза; handwriting expertise, handwriting expertise	տարամիտում—расхождение; divergence, discrepancy
ձեռնարկություն—предпринимательство, бизнес; entrepreneurship, business	տարաշարժունություն—маневренность; maneuverability
ձեռներեցություն—предприимчивость; enterprise	տարբերակում—дифференциация; differentiation
ձևաչափ—формат; format	տեսածիր—обзор; survey, review
ղեկավարում—руководство; leadership	տեսական—видение; vision
մակրոչափանիշային համատեղելիություն—макрокритериальная совместимость; macrocriterion compatibility	տրամախաչում—перекрещивание; intersection, crossing
մարտահրավեր—вызов; challenge	ցանցարադանք—сетчатка; retina
	ուղեղիծ—курс; 1. course, 2. direction
	ուղենիշ—веха; landmark
	ուղևարում—навигация; navigation
	օքալյաց հարուցիչ—аэробный вирус; aerobic virus
	օրինապատշաճություն—законосообразность; regularity

## РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

- адаптация—հարմարում  
администрирование—վարչարարություն  
анаэроб—անօդակյաց  
антисенсор—հակազգայարար  
аэробный вирус—օդակյաց հարուցիչ  
баланс—հաշվեկշիռ  
бизнес—см. предпринимательство  
богадельня—անկելանոց  
веха—սղենիշ  
видение—1. тեսլական, 2.տեսիլք  
военная кампания—պազմարշավ  
воплощение—կերպավորում  
всеобщемлемость—համընդգրկունուրյուն  
вызов—մարտահրավեր  
государственная монополия—պետական մենաշնորհ  
государство всеобщего благодеяния—  
—համընդիանուր բարեկեցության պետություն  
графологическая экспертиза—ձեռագրաբանական փորձաքննություն  
грузоотправитель—քեռնառաքիչ  
дальномер—հեռաչափ  
дифференциация—տարրերակում  
законосообразность—օրինապատշաճություն  
императив—հրամայական  
императивный—հրամայական  
импульс—ազդակ  
инновация—նորամուծություն  
институционализация—հաստատություն  
инструментарий—գործիքարան  
классификатор—դասակարգիչ  
клика—հանցանում  
конструктивный диалог—կառուցողական ներքություն  
контробвинение—հակամեղադրանք  
конференция—խորհրդաժողով  
—научная конференция—գիտաժողով  
координация—համադաշում  
курс—ուղեղիծ  
либерализм—ազատականություն
- макрокритериальная совместимость  
—մակրոչափանիշային համատեղելություն  
маневренность—տարաշարժունություն  
мессидж—1. հաղորդագրություն, 2. կողմնորոշիչ ազդակ  
многообразие—բազմապիտիքություն  
мотивация—շարժառիթավորում  
навигация—1. ուղեվարում, նավավարում, 2. նավագնացություն  
наглазник—ակնապանակ  
новаторство—նորարարություն  
нозология—հիվանդաբանություն  
обзор—1. տեսածիր, տեսադաշտ, 2. տեսություն  
облечение—կերպավորում  
оккупация—բռնազավորում  
организационная структура—կազմակերպություն  
переосмысление—վերաիմաստավորում  
перикард—սրտապարկ  
перископ—շրջադիտակ  
плевральная полость—թորամզի խոռոչ  
плюрализм—բազմակարծություն  
повелительный—հրամայական  
подвеска—կախում  
понятийно-термодинамическая разработка—հակացութային-տերմինարանական մշակում  
потолок—1. առաստաղ, 2. բարձրահասություն  
предприимчивость—ձեռներեցություն  
предпринимательство—ձեռնարկություն  
прецедент—նախադեպ  
производственное увлече—արտադրա-

կան խեղում	կային ըմբռնում
пропорциональность—համամասնություն	совокупность—համախումբ
յուն	совокупный—համախումբ
протекционизм—հովանավորչություն	стереотипное мышление—կարծրա-սիպային նոտածելակերպ
психическое травмирование—հոգե-խոցում	субрегион—ենթատարածաշրջան
процедура—ընթացակարգ	тоталитарный режим—ամբողջատի-րական վարչակարգ
радикальность—арմատականություն	трансформация—կերպավոխում
разграничение—սահմանազատում	умиротворение—խաղաղեցում
расхождение—տարամիտում	управление—1. կառավարում, 2. վար-չություն
роговица—եղջերաբաղանք	фальсификация—կեղծարարություն
руководство—ղեկավարում	фильбр—1. զոմիչ, 2. քամոց
сенсор—զգայարար	фокус—կիզակետ
сетчатка—ցանցաբաղանք	формат—ձևաչափ
синдром—համախտանիշ	церемония—արարողակարգ
системная деструкция—համակարգա-յին խեղում	экспедиция—1. արշավ, 2. ուսումնարշավ
системность—համակարգանություն	экстенсивный գնոյնիկ—տարածուն-թարախարուցություն
системообразующий фактор—համա-կարգաստեղծ գործունիք	этиология—պատճառագիտություն
ситуационное понимание—իրավիճա-յին խեղում	

### ENGLISH-ARMENIAN DICTIONARY

adaptation—հարմարում	—academic conference—գիտաժողով
administration—1. վարչություն, 2. վար-չակազմ, 3. վարչարարություն	constructive dialogue—կառուցողական երկխոսություն
aerobic virus—օդակյաց հարուցիչ	coordination—համադասում
anaerobe—անօդակյաց	cornea—եղջերաբաղանք
balance—հաշվեկշիռ	counteraccusation—հակամեղադրանք
blinding laser—լուրացնող լազեր	countercharge—see <i>counteraccusation</i>
business—1. see <i>entrepreneurship</i> , 2. գործ	course—ուղեղիձ
ceiling—1. առաստաղ, 2. բարձրահասու-թյուն	crossing—see <i>intersection</i>
ceremony—արարողակարգ	delimitation—սահմանազատում
challenge—մարտահրավեր	differentiation—1. սահմանազատում,
classifier—դասակարգիչ	2. տարբերակում
clique—հանցախումբ	direction—1. ուղեղիձ, 2. ուղղություն
comprehensiveness—համընդգրկունություն	discrepancy—see <i>divergence</i>
conceptual-terminological elaboration —հասկացության տերմինաբանական մշակում	divergence—տարամիտում
conciliation—խաղաղեցում	diversity—բազմապահություն
conference—խորհրդաժողով	enterprise—1. ձեռնարկություն, 2. ձեռնե-րեցություն

խարուշտ  
eye flap—ակնապանակ  
eye shade—see *eye flap*  
falsification—կեղծարարություն  
handing expertise—ձեռագրաբանական  
փորձաքննություն  
handwriting expertise—see *handing expertise*  
favouritism—see *protectionism*  
filter—1. զոիչ, 2. քանոց  
focus—կիզակետ  
format—ձևաչափ  
framing—կերպավորում  
hospice—անկելանոց  
imperative—հրամայական  
impulse—ազդակ  
industrial injury—արտադրական խեղում  
innovation—1. նորարարություն, 2. նորա-  
մուծություն  
institutionalization—հաստատութենացում  
intersection—տրամախաչում  
landmark—ուղենիշ  
leadership—ղեկավարում  
liberalism—ազատականություն  
macrocriterion compatibility—մակրո-  
չափանիշային համատեղելիություն  
management—կառավարում  
mandate—հրամայական  
maneuverability—տարաշարժունություն  
message—1. հաղորդագրություն, 2. կողմ-  
նորոշիչ ազդակ  
military campaign—ռազմարշավ  
motivation—շարժառիքավորում  
navigation—1. ուղեվարում, նավավա-  
րում, 2. նավազմացություն  
nosology—հիվանդաբանություն  
occupation—բռնազավթում  
organizational structure—կազմակերպ-  
վածք  
paradigm—հարացույց  
pathology—ախտաբանություն  
patrolling—պարեկում

pericardium—սրտապարկ  
periscope—շրջադիտակ  
pleural cavity—թոքամզի խոռոչ  
pluralism—բազմակարծություն  
precedent—նախարեակ  
procedure—ընթացակարգ  
proportionality—համամասնություն  
protectionism—հովանավորչություն  
psychic trauma—հոգեխոցում  
radicalism—արմատականություն  
range-finder—հեռաչափ  
realigned—վերակարգավորելի  
reconsideration—վերահմաստավորում  
regularity—օրինապատշաճություն  
retina—ցանցաթաղանթ  
review—1. վերանայում, 2. see *reconsi-  
deration*, 3. see *survey*  
sensor—զգայարար  
shipper—բեռնատարիչ  
situational awareness—իրավիճակային  
ըմբռնում  
starting point—մեկնակետ  
state monopoly—պետական մենաշնորհ  
stereotyped thinking—կարծրատիպա-  
յին մտածելակերպ  
subregion—ենթատրածաշրջան  
survey—տեսածիր, տեսադաշտ  
syndrome—համախտանիշ  
systemacy—համակարգայնություն  
system breakdown—համակարգային  
խեղում  
system-forming factor—համակարգա-  
ստեղծ գործոն  
tools—գործիքարան  
total—համախումբ  
totalitarian regime—ամբողջատիրական  
վարչակարգ  
totality—համախումբ  
transformation—կերպափոխում  
vision—տեսլական  
welfare state—համընդիանուր քարեկե-  
ցության պետություն

## **Ի գիտություն հեղինակների և ընթերցողների**

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ուսումնավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ուսումնագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ասլենախտաբուժությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ հավալով:

Հեղինակները պետք է կայացիչն օգտագործված առավել կարևոր աղյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում թերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահպանիների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համրնկի խմբագրության դիրքորոշման հետ:

Դասարանները, վիճաները, գծագրերը, նկարները, լրացմաները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտամ:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ուսումնամասնագիտական հասպակումները:

Զեղագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելոց հետո:

Նույրերի մասամբ կան ամրողությամբ արտաստումը բույաստրդում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

### **К сведению авторов и читателей**

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Каанаяна МО РА «Айакан банак» включен в утвержденный ВАКом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьтерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры. Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

### **For the information of the authors and readers**

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Պատասխանառու քարտուղար՝ **Ա. Զ. Պետրոսյան**

Ուղամագիտական խմբագրման բաժնի պետ՝ **Զ. Դ. Ասավրյան**  
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ **Ա. Մ. Մովսիսյան**  
Տեխնիկական բաժնի պետ՝ **Ա. Պ. Նազարերյան**

**Հայերեն տեքստերի խմբագիր՝ Ա. Կ. Շահրապյան**

Ուղարկած և անգլերեն տեքստերի խմբագիր՝ **Լ. Հ. Պապիկյան**  
Ձևավորող նկարի՝ **Գ. Սահակյան**  
Լուսանկարի՝ **Ա. Դ. Ներսիսյան**

Տեխնիկական և գեղարվեստական խմբագրում՝ **Ա. Պ. Նազարերյանի**

Տեքստերի քարգմանությունը՝ **Վ. Պ. Ավելիսյանի, Ա. Հ. Հակոբյանի, Ն. Մ. Մկրտչյանի**  
Համակարգչային ապահովումը՝ **Գ. Ա. Դադյանի, Վ. Ռ. Խալաֆյանի**  
Սրբագրիչներ՝ **Ն. Հ. Բաղդասարյան, Ա. Հ. Սարուխանյան**

Խորհրդատվություն անգլերեն տեքստերի վերաբերյալ՝ **Ա. Հ. Հակոբյանի**

Լուսանկարչական ապահովումը՝

**ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության,  
ՀԱՊԿ-ի տեղեկատվական աջակցության միջազգային հասարակական կենտրոնի**

**Ծապիկի 1-ին էջին պատկերված է քանդակագործ Պավել Չադանյուկի  
«Մայր Թերեզա» քանդակը (<http://www.zadanyuk.ru/ru/taxonomy/term/1>)**

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՈՒնիեցու փողոց, 56/6, հեռ. 28-12-94, 23-29-71:

URL: <http://www.mil.am/arm/index.php?page=105>

Էլ. փոստ՝ [haykakanbanak@mail.ru](mailto:haykakanbanak@mail.ru)

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվ. ազգային ուսումնական հետազոտությունների ինստիտուտի  
«Հայկական բանակ» ուսումնագիտական հանդես, 2009 թ.

Ստորագրվել է տպագրության 09.12.2009: Թուղթ՝ օֆսետային: Ձևաչափ՝ 70x100 1/16:  
Տեքստ՝ 120 էջ + 4 էջ ներլիք: Պայմանական տպագրական 9,75 մամուլ: Տպաքանակ՝ 500:  
Տպատասակը՝ «Թայմ» և «Բարիկա»: Տպագրություն՝ օֆսեթ:  
Վկայական՝ 523: Դասի՝ 69263: ISSN 1829-0108:

Տպագրվել է «Ամարաս» տպարանում:



ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետ գեներալ-մայոր Հ. Քորանջյանի զեկուցումը  
«ՀԱՊԿ-ը՝ որպես Կովկասի տարածաշրջանի կայունության  
և անվտանգության գործոն» թեմայով Կլոր սեղանի ծևաչափով նիստում:  
Աջից երկրորդը՝ ՀԱՊԿ-ի Գլխավոր քարտուղար Ն. Բորյոյին։

Երևան, 2009 թ. նոյեմբերի 24



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ